




ՅԱՂԱԴՄ

MS. No. 1951

ՃԸՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Համարոյն Հրիստոնեականի, Առ Հահ

Ապոստ Արքայն Պարսկց.

գործ 1, 2

Ի Պողոսէ փրօմալէ Իկարդէն Քարողո
ղայ վարդապետէ, և Արհիէպիսկոպոսէ

Նախնականայ Նահանգին,

Հարգարեցեալ.

Եւ Էմ Տանապարհ, և Ճշմարտութի,



Թի, և Կեան. Յոհան.

Եւ Էմ Տանապարհ, և Ճշմարտութի,

Ի մէծն Հռօմ.

Romæ, Apud Paulum Monetam. 1674.

SVPERIORVM PERMISSV.

ՏԻՆՈՒՄ


ՏԻՆՈՒՄ

ՏԻՆՈՒՄ

ՏԻՆՈՒՄ

*Imprimatur, si videbitur Reuerendiss. P. Mag.
Sac. Pal. Apostol.*

I. de Angelis Archiep. Vrbis. Vicefg.



Imprimatur.

Fr. Raymundus Capisuccus Sac Pal. Apost.
Magister.

ԱՌԱՋ ԱԲԱՆՈՒԹԻՒՆ :



Պոք, և պատիւ, և իշխանութի արքայից արքային, որոյ զօրութիւն է անգրաւելի, գիտութիւն անչափելի, և սէրն անճառելի: Նմա գովութի անդադար, որոյ զօրութիւն է անյաղթելի, իմաստութիւն անբաւելի, և սէրն անքննելի:

Այնմ գերագունոյ արքային փառք յաւիտեանականք, և երկրպագութիք մշտնջենականք, որոյ՝ զօրութիւն կոչեաց զամինչ իգոյութի ետութե, որոյ՝ իմաստութիւն զստեղծուածս հանուրս կառավարէ, և որոյ՝ սէրն զբնաւս էսկս իմի յօդաւորէ: Փառք, պատիւ, և գովասանութի այնմ տերանց տն, որոյ կարողութիւն յոչումեքէ է, և իմաստութիւն ի կարողութե փւրմէ, իսկ սէրն յերկաքանչիւրոցն իբրև ի միւրոյ ազգերէ արտաբղխեցեալ: Նմա՝ միայնում տէրութի, որոյ էութիւն է անսկզբնական, իմաստութիւն անեզրական, և սէրն ի յերկոցունցն անզանազանական:

Այ: Դ գերագունոյն պատիւ, և երկրպագութի, որոյ էութիւն ոչէից ամենեկն ոչէ նեղ զնդունական, որոյ իմաստութիւն զամ տգի-

տութի՜ իբացիերքէ , և որոյ սէրն յամէ տուն
լուծէ մէկուսի է : Այնմ՝ բարձրագունեղի տն
միապետութի , որոյ ետութին է անուն իւր , և
որոյ անունն է անսահմանելի , որոյ գոյութին
է անփոխարկելի , և որոյ էականութին է անի-
մանալի : Որ ոչ զանցեալ ներլնդունի , և ոչ
զսոպաունի , անոր՝ գոլով քան զամենայնս յա-
ւիտեանս , և զժամանակս , և զբովանդակու-
թի՜ ամանակաց անփոփէ իմի կէտ անտրո՜նելի-
սակս որոյ՝ և ոչ ղնատութի , և ոչ զերիցու-
թիւնն յինքէանն ներբերէ : Է միշտ մի և նոյն
եութի պարզագունեղ , անքակտելի , անփոփո-
խելի , անայլայլելի , անտեսանելի , անշո-
շափելի , անպարագրելի : Ինքն պարզագու-
նեղ գոլով զպարզս և զբազադրեցեալս հաս-
տատեաց , և անշարժ գոլով շարժէ զամս :
Ինքն անտեսանելի գոլով զամ՝ ինչ տեսանէ ,
և աներևոյթ գոլով երևելեաց և աներևութից
է արարչադորժ , և տեսանող : Ինքն անպա-
րագրելի գոլով զհանութս էակս բովանդակէ ,
չափէ , և պարադրէ : Է եութի բոլորովմբ՝
գերբան զամ՝ , ներամենեան , և արտաքոյ
ամենեցուն . Այս է ամն քրիստոնէից ով թա-
գաւոր մեծարգոյ : Եւ այս է ամն , զոր մեք
քրիստոնէացքս պաշտեմք . և որում երկրպա-
շանեմք : Զոր , և երկրպագելի , և պաշտելի

գող ընդ հանուրս տիեզերս հաշակեմք և սուե-
 տարանեմք: Այս՝ ուրեմն ամէկ ստեղծող ամե-
 նից գոյից, և արարիչ գողով, հետևապէս է
 ամենեցուն սիրող զի զամինչ սիրէ. և ամենե-
 ցուն զգող շնորհէ. և իդոլն պահէ, և առ բա-
 րին վերաբերէ: Եւ մանաւանդ զմարդն սի-
 րէ, զոր իմք տիեզերաց մեծ, և զերջարգոյ
 իշխան կացոյց. բաշխելով նմա զհոգի մտա-
 ւոր, անմարմին, և անմահ. և յաւիտենական-
 նաց, և անտեսանելաց բարութեց տեսանող:
 Բայց տեսանելով զմարդն խոտորեցեալ յուղ-
 ղութի և վատթարապէս մոլորեցեալ. կամե-
 ցաւ ուղղել զնա. Սակս որոյ զբանն իւր.
 որ է իմաստութի իւր: առաքեաց յաշխարհ
 զղեցմամբ մարմնոյ, այսինքն, զտրն մեր,
 յս քս, զոր քս բան, և Մեսիհ՝ իսրբոց մար-
 գարեիցն յառաջգուշակեցեալ համադաւա-
 նիմք: Չայցանէ բնութից համառօտաբար՝
 ըն գրգռ յայսմիկ բացատրեալք վերանւի-
 րեմք, և մատուցանեմք քում մեծարգութեդ,
 Ծնողի՝ սովաւ վերահասու լեալ տեղեկանայ
 ցեա, թէ նորում կայանայցեն մասնկունք
 քրիստոնէականի հաւատոյս մերոյ, զորս վնդի
 ւորութե բովանդակեցաք ի յերկուս հատորս:
 Որոյ առաջինն ընձեռէ, զայ միոյ և երրակէ:
 Խոյ երկրորդն, զքսէ ըստ որում է Մսիհ.



Գնացեալք ուրեմն՝ ուսուցեք զամս
ազինս, միրտելով զնս յանուն Հօր, և
Որդւոյ, և Հոգւոյն սբոյ: ՄԹՄԻ. 28.
Ի ԹԻՆ. 19.



Հատոր Առաջին

ՅԱՂԱԳՍ ԱՅ՝ ՄԻՈՅ և ԵՐԲԱԿԻ :

Գլուխ Առաջին .

Յաղագս Ճանաչելութենն այ :



Աճբաղդատելով ընդ ստեղծու
կանացս, բնականաւ իւրից կա
րողութիւն ճանաչեմք զոչ մե
ծագունեղ, և վեհագունեղ, առ
մենակարօղ, ամենիմաստ, և
ամենասեր, հեռացեալ ամե
նեխմբ' ի մարմնականութեն, մեկնեցեալ բո
լորովին' ի նիւթականութեն, և անընդու
նակ համայնից բաղադրութեց : Անեղբ, և
անդր' քան զամսահման : Անջառի, անքանակ
անորակ, և ամենից չափուց, և քանակութեց, և
որակութեց . իւրով զերունակութեան
մերընդունօղ : Անժամանակ, և դէրքան զբոլոր

Նաև ժամանակս, և բովանդակութիք ան-
ցելոյ և ապառնեաց առաջի նորա հանգեոք
էն և հաւասարք : Անուր, և գերքան զամ
ուրեք, և ոչն ուրեք, որ ոչ լնանի նովա : Գոյ
ութի գեր ի վերոյ քան զամ իմացումն մտաց,
զոր ոչ միտ իմանալ. և ոչ լեզու արտաբե-
րել կարէ, և առ որ յղացմունք իմացողու
թեց, քննութիք բանականաց, և խոկմունք
իմաստասիրաց ժամանել ոչ բաւեն. քանզի զա-
մենեքումք անպարագրելեալ իւրք վեհակա-
նութի գերազանցէ : Անտեսանելի, անշօշա-
փելի, անիփոփսելի, անսլացելի, անախտ,
անմահ, և զուտ կեան. որոյ և կեանն է եու-
թի իւր, իսկ եութեն նորա գոյով նախնադու-
նեղ և գերազանցագունեղ զհանուրս եութիս
պարփակէ, և պարունակէ. Անակիղբն, անվախ
ճան, և անհուն, և բովանդակիչ հանուրց
տեղականութեց, բոլորն արտաքոյ ամե-
նից ուրանօրութեց. բոլորն իմէջ ամենից
ուրանօրութեց, բոլորն ի վերոյ քան զամ
ուրանօրութի, բոլորն ի ներքոյ ամենից ուրա-
նօրութեց : Բոլորն ըն բոլորում աշարհի,
բոլորն ըն իւրաքանչիւր մասնկունս աշ-
խարհի, բոլորն ի վերոյ աշխարհի, և բո-
լորն ի ներքոյ աշխարհի, անպարփակա-
պէս պարունակեցեալ : Առ արտաքս ոչ
արդ

տրոհեցեալ , ի վեր ոչ վերամբարձեցեալ , յեկ
վայր ոչ ստորագրեցեալ : Այլ եւ՛ բոլորն
ըն՛ բոլորում աշխարհի , և բոլորն ըն՛ իւրա-
քանչիւրս մասնկունս նոցին , զօրութիւն , ներ-
կայութիւն , և էութիւն : Զօրութիւն , զի զամ-
բնն տրութիւն իւրում հպատակեալ հնազան-
դէ : Ներկայութիւն , զի ամենից զգողն շնոր-
հէ , և անմիջաբար ի գոյութիւն պահէ : Էւս
տր տերանց , անեղ , և անստեղծ և ամե-
նից իրաց ստեղծող , արարիչ , կառավա-
րիչ , և կերակրիչ . ներշնչող , և սա բարին
ուղղեցող : Ամենեցուն սիրող : և ողորմած .
ամենեցուն փրկիչ և զխոխարնն պարգևող ,
և վարձատրող . վն զի իւր է ամբնն առհա-
ւարակ : Զայսպիսիս և զուցին նմանս ասեմք
զայ բողոքատելով զնա ընդ ստեղծականացս
ի ձեռն բնականի ուրուք իմացողութիւն :

* զի զամբնն յեկ յաբար նկատէ : Էութիւն ,



Գլուխ Երկրորդ :

Յաղագս Գոյութենաց :



Դո՛ւն ա՛յ հատաստեմք նախ
ի շարժմանէ , այսպէս : Գո՛յ
շարժումն յաշխարհի ուրեմն
և առաջին շարժող : Եւ այն
է ա՛մ :

Երկրորդ՝ ի հարկաւորութե՛
ն ի կարեւորութե՛ , որդո՛ն . Գո՛յ իր կարեւոր
յաշխարհի այսմիկ , ուրեմն երբեմն ոչէր
նշեալ եղև . ապա ուրեմն իդոյէ իմեքէ հար-
կաւորէ յառաջածաւ : Եւ այն է ա՛մ : Երրորդ՝
ի կարգաւորութե՛ պատճառաց , որդո՛ն ,
Գո՛յ կարգ պատճառաց յաշխարհի այս-
միկ . ապա ուրեմն և առաջին կացուցիչ կար-
գին . Եւ այն է Աստուած :

Չորրորդ՝ ի յաստիճանաց կառարելութե՛ց ?
որդո՛ն . Գո՛յ յէակս կարողութի՛ ինչ փոքրա-
գոյն , և կարողութի՛ ինչ մեծագոյն : իմաստու-
թի ինչ ասկաւաղոյն , և իմաստութի՛ ինչ յոլո-
վաղոյն : Բարութի՛ ինչ՝ նուազագոյն , և Բարու-
թի՛ ինչ սուսաւելագոյն , Էութի՛ ինչ սղնուա-
ղոյն , և Էութի՛ ինչ անսղնուաղոյն , Ուրեմն
գո՛յ

գոյ ևս կարողութի իմն մեծագունեղ, իմաստութի իմն յոլովագունեղ, բարութի իմն առաւելագունեղ և երբեք իմն ազնուագունեղ չորմէ Էն հանուրք աստիճանք կատարելութեց. Եւ այն է ամ. Քան զի ոպ առաւելութի և նուազութի իրայն ջերմացելոյ յառաջանան ի հրոյն, որ է ջերմագունեղ, այսպէս առաւելութի և նուազութի ամենից կատարելութեց յառաջագային յայ, որ է կատարելագունեղ.

Հինկերորդ՝ իհաղորդակցութե՝ ներհաժկացորդոն, Գոյ յեակս հաղորդակցութի՝ ներհակաց, ոպ ՚ըն բաղադրեցեալս իջորից տարեց. Ուրեմն գոյ ևս կարողութի իմն զօրեղագունեղ. որ ժողովե զնոսա իմի, Եւ այն է ամ,

Ապա ուրեմն՝ որով իմացողութե՝ ճանաչեմք զամ, նովիմք և հաստատեմք զգոյ նորին:



Գլուխ երրորդ.

Յաղագս Միութեն այ.



Ա՞ծ մի գոլ, և ոչ՝ բազումս, հաստատեմք նախ՝ այսպէս: Ա՞ծ կատարունագունեղ իմն է՛, և ամենից կատարելութեց ԹԻ՛ր: Իսկ էթէ գոյին երկու ամօք, զանազանիւք կատարելութեք տարբերեցեալք բաժանելին՝ իմիմեանց. Քանզի գոյր կատարելութի իմն՝ ըն միում. որ ոչ գտանիւք ըն միւսում. Ուստի՝ այն որում ոչինչ պակասուիւք, գոյր միայն ամօ, և ոչ այն՝ որում նուազուիւք: Ղի ամօ ամենակատար է. Ուրեմն մի է ամօ. այլ ոչ բազում.

Երկրորդ՝. Որք իմի սեռ համագումարին, իհարկէ կախին իմիօջէ. Ղի ամօ սեռ մի գոլով համահանգեալ է բազմութե, և ամօ բազմութի իմիութե առնու զսկիզբն: Արդ էակք ամենեքեան ի մի էութի համագումարին, Ուրեմն իհարկէ եղիցի մի միակ, այն, որ ընդհանրից էութեց է համահանգեալ, և այն է Ա՞ծ.

Երրորդ՝. Ին և մին էն հակադարձականք, ուրեմն

ուրեմն և եակն անեզր հալադարձի ընդ միոյն անեզրի. իսկ ամենակարօղն ամ է՝ եակ անեզր, ապա ուրեմն է՝ ևս մի անեզր:

Չորրորդ՝. ամ գերունակ է՝ եութի անեզր ուն ասացաք. իսկ երկու եութիք՝ ոչ կարեն » անեզրք լինիլ միանգամայն, ուրեմն ամ մի է . և ոչ բազում:

Բայց յայսցանէ ունիմք ևս զայլս գիտութիս զայ, որք զքննութե մերով գերազանցեն, և բնականաւ իմացողութե՝ իբաղդատմանէ ստեղծածոցս իմանիլ ոչ կարեն. Ու տի՛ առ այնոսիկ հաւատով միայն՝ հաստնիմք, քանզի իրքն, զորոց են գիտութիքն, քոն մեզ աներևոյթք. Բայց՝ ամն ամենասեր զայնոսիկ, ինչեւն մարգարեից իւրոց սրբոց առ մեզ հասուցանէ. Ուն ասէ Ամովս մարգարէն ըն գլխոջն 3. ի թիւն 7. Ձի ոչ առնէ ար ամ զբան ինչ. եթէ ոչ յայտնիցէ զխորհուրդ իւր. ծառայից իւրոց Մարգարեից:



Գլուխ Չորրորդ.

Թէ գիտիցեմք ևս զբազում ինչ միայն գեր-
բնասէս ՚ի ձեռն յայտնութե
մարգարեիցն.



Բազում ինչ հաւատամք և դա-
ւանիմք, զորս ան-
ցեալէ մեզ ՚ի ձեռն սրբոց մար-
գարեից, զոր օրինակ. Թէ ան-
մարդ յառնելոց իցէ ՚ի մեռե-
լոց հանդերձ մարմնով իւրով:
Թէ ՚ի յարութե յառունջեանում հատուցա-
նելոց իցէ ան- իւրաքանչիւրումք զփոխա-
բէնն ըստ գործոց. Եւ թէ իցէ արքայութի
էրկնից, և դժոխ. Արքայութին յաղագս այ-
նոցիկ, որք ան ծառայեցին: Իսկ դժոխն
սակս ապստամբիցն. որք զօրէնս ան ոչ պա-
հեցին, և զգործս չարութեց իւրեանց ոչ ապաշ-
խարեցին: Չայտոիկ և զսոցին՝ նմանս, զորս
իմացեալքեմք ՚ի իւրոց բանիցն ան, հաւատամք
և խոստովանիմք գոլ Ճշմարիտս. Բայց՝ եթէ
ոչ հարցանիցէ մեզ, թէ ընդէր զայսպիսիս
ընդունիցեմք և քարոզիցեմք. Պատասխանեմք.
Թէ վնասնորիկ, զի են ապացեալք ՚ի մարգա-
րեիցն

ընդին սրբոյ, որք իբրև խորհրդածութիւնս ան
 ձրեւոյն . զոր լուսնն ինձմանէ , յայտնեցին
 մեզ և պատուիրեցին : Եւ թէպէտ թւին մտայ
 մերոյ, այսոքիկ անհնարինք , և բնականաւ իմաս
 տութիւն մերով իմանալ զնոյն , ոչ բաւեմք .
 սակայն զհաւաստութեւն նոցին ճշունիմք
 ամենեկին զերկացութիւն, զի նոյն և մեզ յայտ-
 նեցեալք , ոչոյ բանն ամենեկին հեռի է ի
 տոութեւն , և խաբէութեւն իրիք գտանիլն ինձա-
 անհնարին է : Ուրեմն՝ եթէ ոք առարկիցէ
 մեզ ասելով , թէ զի արդ հաւատացեմք յա-
 րութեւն մեռելոյ , որով հետև հանուրց աիե-
 ղերաց ուսումնասէրք առհասարակ՝ ասիցեն-
 թէ իպակասութեւն առ ունակութիւն ճշ տրի-
 ցի անգրագ սրձումն : Եւ թէ զլնի բաժան
 ման հոգւոյն ի մարմնոյն անկարելի ինն իցէ ,
 զի նոյն մարմնն , որ էր յառաջագոյն , զորով
 փոխարկեցեալ իհող . և վերլուծեցեալ իտա-
 րերս , վերստին՝ միաւորիցի ընդ հողոյ իւրոմ ,
 և յարուցեալ իմեռելոյ կենդանանայցէ : Պա-
 տառասնեմք , թէ վն այնորիկ հաւատամք , զի
 է ճշմարտութիւն ինն հաւատեցեալ իմար-
 դարեից , և հեռի յամենից երկացութեց . Քան
 զի Յոբ բարձրելոյն նոյ մարգարէն ըն գլխոջն
 9. իթիւն 25. ասէ . Գիտեմ զի փրկիչն իմ
 նենդանի է , և ըն յեանում աւուր իհողոյ յառ-
 նեւոյն :

ի ելոցեմ, էւ վերստին՝ շրջապատեցայց մործ
 թով իմով, 'և՛ ըն մարմնի իմում տեսից զմծն-
 իմ. Ջոր տեսանելոցեմ էս ինքնին, ևաչք
 իմ հայելոցք էն, ևոչ այլոք. յարադրեցեալ
 է՝ յոյսս այս, 'իծոցոյ իմում: Ապաքէն՝ էթէ
 օք ոչիցէ անհաւատ, ոչ կարէ ուրանալ զյա-
 բութին մեռելոց, ևոչ իշխէ բացասել, թէ
 բնառք մեռեալք կենցաղոյս այսորիկ յառ-
 նելոցք իցեն 'իմեռելոց հանդերձ մարմնովք
 իւրեանց:

Իսկ յաղագս արքայութեն երկնից մար-
 գարեքն նքք միահաղոյն՝ ըն գրեանս իւրե-
 անց զեկուցին մեզ 'իկողմանէ մյ ասելով.
 Թէ արքայութին երկնից իցէ կեան յաւիտե-
 նական, և թագաւորութի անվախճան, այս-
 քնքն՝ կեան թարց մահու, և թագաւորութի
 անապական, ևամենից բարութեց համադու
 մարումն, թարց ումէք թշուառութե, զոր
 միտք մարդկան ոչեն բաւական առ 'ի իմա-
 նալ: Ջայսմանէ խօսելով Սողեմն իմա-
 տունն 'իգիրս իմաստութե, 'ըն զլիտջն 5.
 'իթիւն 16. ասէ. իսկ արդարքն 'ի յաւի-
 տեան կեցցեն, ևառ նոր էն վարձք նոցին,
 ևխորհուրդք նոցին առ բարձրագունեղն.
 Վնորոյ՝ ընկալցին զարքայութին վոյեյշութե,
 ևզպատին գեղոյ 'իձեռանէ մին: Էւ 'ըն զլի-
 տջն.

ճջն. 6. 'ի թիւն 21. նոյնոյ իմաստութեն ասէ,
 Ըղձականութի իմաստութեն. վերածէ 'իյար-
 քայութիւն յաւիտեանական. Արդ՝ եթէ տեն-
 չայք գահոյից և գաւազանաց ո՛վ թագաւորք
 ժողովդեան , սիրեցէք զիմաստութի . զի
 'իյաւիտեան թագաւորիցէք : Եւ Եսայի մար-
 գարէն 'ըն գլխոյն 64 'ի թիւն 4. 'ի յաւիտե-
 նից ոչ լուան , և ոչ ունկամբք ըմբռնեցին .
 և ամէն ոչ էտես , Աժ բաց 'իբն , զորսն ախա-
 խատրաստեցեր սպասողացն քեզ : Ապա ու-
 լիւնն գոյ արքայութի երկնից , զոր սբք և ար-
 դարք , որք 'իկեանս իւրեանց 'բողորով սրտիւ
 սիրեցին զսօժ , և պահեցին զպատուիրանս 'նո-
 րա՝ վայելելոցք են . Եւ որք փափաքեցան
 անձաւոյ իմաստութեն , անձառելեօք և մշտն-
 շէնականօք բարեօք զմայելոցք են 'ի 'նմա .

Իսկ յաղագս դժոխոյն , որ է մահ և ճառայ-
 ութի . պատիժ , և չարքարանք . նեղութի ,
 և անձկութի , հուր և արամութի , և ան-
 թշուառութի . խօտի Դաւիթ մարգարէն 'ի
 սաղմոսին . 54. 'ի թիւն 16. ընդէմ մեղաւ
 իրաց ասելով : Եկեսցէ մահ 'ի վր 'նոցա , և կեն
 դանոյն 'ի ջրէն 'ի դժոխս : Եւ 'ի գիրս Թուոյ ,
 'ըն գլխոյն . 16. 'ի թիւն 31. ասի . Թե իբ-
 րև դադարեցաւ մովսէս 'ի խօսելոյ , իսկոյն՝
 պատառեցաւ երկիր 'ի ներքոյ ոտից 'նոցա . և

Ե

բացեալ

Ե

32/16

բացեալ զբերան իւր եկուլ զԴադան, և զԱբի-
րոն հանդերձ խորանօք իւրեանց, և ամենիւք
զոյիւք նոցին, և իջին կենդանոյն՝ ի գծոխս,
ծածկեցեալք ի հողոյ, և կորեան ի միջոյ բազ-
մութեն: Իսկ մարգարէն Եսայիաս խօսե-
լով զյիմարայ. ըն գլխոջն. 5. ի թիւն 13-
անէ. Վնայնորիկ գերի վարեցաւ ժողովուրդն
իմ, զի ոչ ընկալաւ զգիտութի, և բազմու-
թի նորա ծարաւու տոչորեցան. Սակս որոյ
լայնացոյց դժոխ զհոգի իւր, և եբայ զբերան
իւր անեղրաբար, և իջցեն հզօրք նորա, ժո-
ղովուրդ նորա, և վսեմք նորա, և փառաւորք
նորա՝ ի նա: Ապա ուրեմն հաւատարի իմն է. Թե
իցէ արքայութի և գծոխ աներկբայապէս: Ե-
թէ ըն յառուրն յեանում յառնելոցք իցեն
մարդիք իմեռելոյ հանդերձ նոյնովք մարմ-
նովք իւրեանց, զորս ունէին նախ յաշխար-
հի այսմիկ, և թէ գնալոցք իցեն արդարքն յար-
քայութին երկնից, իսկ մեղաւորքն ի գծոխս:
Զորս բնաւս հաստատեմք ի բանից մար-
գարեիցն: Եւ թեպէտ միտք մերք ոչ են բաւա-
կանք առ ի ըմբողնել զնոյնս, տակայն՝ հաւա-
տամք ի հարկէ զի ինոցունց են զկայեցեալք-
քանզի որ ոք ոչ հաւատայ այսոցիկ ճշմար-
տութեց, ընդ անհաւատս դատապարտելի է
ի տանջանս յաւիտենականս:

Յատացելոցս հետևի, թե կրկին իցե եղա-
նակ ճանաչելոյ զւնձ . Նախ՝ բնականաւ
շաղիւ իձեռն բաղդատութե ստեղծակա-
նացս . Եւ երկրորդ՝ գերբնականաւ ճանա-
պարհաւ իձեռն յայտնութե և համապտու-
գութե մարգարէիցն :

Գլուխ Հինկերորդ .

**Յաղագս մարդկայնոյ բնութե տն
մերոյ յի քի .**



Ետևելով վերոգեցելոցն շա-
ղաց , դերկուս իրա ճա-
նաչեմք և հաստատեմք ի
քս յս : Նախ զմարդկութի
նորա , զի տրն մեր յս քս է
Ճշմարիտ և կատարեալ մարդ ,
բաղկացեալ իմարմնոյ և ի հոգւոյ բնականէ :
Եւ երկրորդ զւնձութի նորա , զի տրն մեր յս
քս է նձ և որդի այ , զոր թէպէտ բնականաւ
իմացողութե ոչեմք բաւականք առ ի ըմ-
բոնել Սակայն ի ներշնչմանէ և ի յայտնութե
հոգւոյն սրբոյ առ մարգարէս համահաւաս-
տեմք : Եւ զնոյն հաւատամք և խոստովանիմք ,
և քարոզելով հոգակեմք ամենից մարդկան :

Ասեմք ուրեմն յաղագս մարդկութե տն
մերոյ յի քի, թէ իցե ծնիցեալ իսրբուհ-
ւոյ կուսէն Մարիամայ, իխանաւարութե պա-
տեցեալ, և ըստ նմանութե հասարակաց
մանկանց կաթամբ գիեցուցեալ, և կերակրօք
անուցեալ, և զարգացուցեալ, մինչև չար-
բունս հասակին իւրոյ: Եւ թէ յղացուին
նորին ոչիցե լեալ ինքեմանէ առն, այլ
իմաքրագունեղէ արենէ սրբուհւոյ կուսին
Մարիամա, զոր յառաջ քան զծնունդն,
և յետ ծննդեան կոյս ամբիծ և անխախտ
խոստովանիմք: Գոլով ուրեմն տն մերոյ յի
քի, մալոյ կատարեալ, մարմնով, զգայա-
րանօք, յատկութեք, և հոգւով իմացակա-
նաւ ամենեկին նման մեզ, բայց ի թշու-
շականութե. տեսանիւր, շօշ ափիւր, քաղ-
ցիւր, ծարաւեր, շրջեր, կենցաղավարեր քնդ
մարդկան, և խոնջիւր: Նստեր, հանգչեր,
խօսեր, քարոզեր, անջօթեր, աքներ, պահեր,
տրտմեր, և լայր: Ուստի և կալաւ ի փա-
րիսեցւոյն, կապեցաւ, չարհաբեցաւ, պա-
կեցաւ փշով, տաքածեցաւ ի զլր խաչին, յոր
և բեռեցաւ, բացաւ գեղարդեամբ կող նո-
րին, և հեղաւ արիւն նորա առաջի բազմու-
թե անխարկողաց: Բաժանեցաւ սրբազնագու-
նեղ հոգի նորա ի յազնուագունեղ մար-

մնոյ

Յնոց իւրմէ , ևմեռաւ . ևայր ոյն Յովսէփ
կոչեցեալ , էառ զնա ևեդ ՚իգերեզմանի : Եւ
զկնի Էրից աւուրց յարեաւ ՚իմեռելոց , ևեջ
՚իգերեզմանէն , ևզաւուրս քառասուն էրևե-
ցաւ յայտնապէս , ևխօսեցաւ ընդ աշակեր-
տաց , ևընդ քարեկամաց իւրոց : Իսկ յետ
քառասնից աւուրց առաջի աջաց նոցա համ-
քարձաւ յերկինս .

Յայսոյնն ամենից հաւաստապէս գի-
տեմք ևիմանաք , թէ արն մեր յս քս իցե
մարդ ճշմարիտ , ևընդ ժամանակաւ ծնիցեալ .
ևթէ մարդկութի նորա ոչիցէ նախ քան
զՄարիամ կոյսն . այլև թէ զեութի իւր մարդ-
կային վերընկալեալիցէ ՚իձեռն ստեղծա-
գործութե հասարակաց արարչին :

Սակս որոյ զմարդկութի նորա զբաղկացեալն
՚իհոգւոյ և ՚իմարմնոյ , ոչ ասեմք գոլ ան-
տղիտաբար ևանմտապէս . Ձի ոչեմք այն
քան անիմաստք , մինչ զի զարարածն արա-
քիչ գոլ խոստովանիցիմք , և զստեղծուածն
ստեղծող գոլ դաւանիցիմք , քան զի ստեղ-
ծողն ՚իհարկէ է մշտնջենաւոր և յաւիտե-
նական , ևեութի նորա ոչունի զսկիզբն ևոչ
զվախճան . Իսկ ստեղծուածն ՚իհարկէ ոչեր-
բբեմն , և յոչնչէ ածաւ ՚իգոյութի . Սպա-
ռերեմն անհնարին է ամենեկն զի արարածն

արարիչ լինիցի, և հակադարձեալ; անկարելի է, զի արարիչն արարած լինիցի, ևս տեղծողն ստեղծուած.

Եւ առ'ի համահաւաստութի Ճշմարտութեւս այսորիկ հաւաքաբանեմք. նախ այսպէս. Էութիւնն այն ոչունի զսկիզբն, իսկ մարմին և հոգի ան մերոյ յի քի, որքէն մարդկութի նորա, ունին զսկիզբն 'ի սրբուհւոյ հոսէն Մարիամայ, ապա ուրեմն ոչէն ան.

Երկրորդ. Ամենայն ինչ որ է այժմ, և ոչէր երբեմն, ոչէ ան. զի ան միշտ է. իսկ մարմին և հոգի ան մերոյ յի քի էղէն 'ի ժամանակի յառաջածեղեալք 'ի յարգանտէ անարատի կուսին Մարիամայ, և ոչ էին երբեմն, ապա ուրեմն ոչէն ան:

Երրորդ. Որինչ 'իմիւում ժամանակի էր, և 'ըն միւսում ոչէր, ոչէ ան. և ոչ կարէ գոլ ան. իսկ մարմին և հոգի ան մերոյ յի քի էին 'ըն միւում ժամանակի. և ոչէին 'ըն միւսում, այսինքն, նախ քան զլմարիամ կոյսն, ուրեմն ոչէն ան, և ոչ կարէն գոլ ան.

Չորրորդ. Ան մարմնաւորիւ սակամբ ոչ տեսանի. իսկ մարմին ան մերոյ յի քի տեսանիւր սակամբ մարմնաւորիւ, ապա ուրեմն ոչէ ան:

Հինկերորդ. Ան ամենակարող ոչ ուտէ,

տէ , ոչ ըմպէ , ոչ աշխատի , ոչ վաստակի
 ոչ քաղցի , ոչ ծարաւի , ոչ տրտմի , ոչ Էր-
 կնչի , ոչ ըմբռնի , ոչ չարչարի , ոչ մեռանի ,
 և ոչ թաղի . Ուստի զայսպիսիս ստորոգելն
 զնմանէ հայհոյութի է և մեղ . իսկ մարմին
 ԹՆ ՄԵՐՈՅ յԻ քԻ կրեաց զայսոսիկ ամենե-
 սեան , ուրեմն ոչէ ւնծ :

Վեցերորդ . Ած ամենակարօղ ոչառնէ և ոչ
 կարէ առնել զաղօթս , և զերկրպագութիւս ,
 քան զի ոչոք է մեծագոյն քան զինքն , որում
 վայելիցեն աղօթք և երկրպագութիք . իսկ
 ԹՆ ՄԵՐ յԻ քԻ հոգւով և մարմնով իւրով առ-
 նէր զաղօթս և զերկրպագութիւս , ուրեմն մար-
 մին և հոգի նորա ոչէն ւնծ .

Եօթներորդ . Կայ ամենակարողի էութիւն
 է անեզր և անչափ . իսկ մարմին ԹՆ ՄԵՐՈՅ
 յԻ քԻ եղերեցեալ գոյր և չափաւոր , ուրեմն
 ոչէ ւնծ .

Ութերորդ . Ած էութիւն իւրով է ՚ըն
 բոլորում աշխարհի , և բոլոր էութի իւր ՚ըն
 իւրաքանչիւրս մասնկունս նորին . իսկ մար-
 մին ԹՆ ՄԵՐՈՅ յԻ քԻ գոյր յայտնապէս պա-
 րագրեցեալ ՚ըն միում տեղւոջ , քանզի մինչ
 էր յերուսաղէմ , ոչէր ՚ի պարսկաստանի ,
 և ոչ ՚իմեծն Հռոմ . և մինչ էր ՚ի վր խաչին ,
 ոչէր ՚ի գերեզմանի : Եւ յորժամ բաժանեցաւ

Հոգի տն մերոյ յի քի իմարմնոյն իւրմէ
ևէջ իդժոխս , ոչէր ընդ նմա մարմինն , ու
րեմն Հոգի ևմարմին տն մերոյ յի քի ոչէն
ւած .

Իննեքորդ . Որ յոչնչէ ածի իգոյութի ,
անհնար է զի լինիցի ւած , իսկ մարմին տն
մերոյ յի քի յոչնչէ ածաւ ի գոյութի ,
քանզի առաւ իՄարիամայ , և նորայն ի յԱ
դամայ , և Ադամայն իյերկրէ , իսկ եր-
կիրն ստեղծաւ իյոչնչէ , ապա ուրեմն ան-
հնարին է զի մարմին տն մերոյ յի քի իցէ
ւած .

Տասնեքորդ , ոչոք էութի կարելի . Է էութի
թի հարկաւոր . իսկ մարմին տն մերոյ յի
քի Է էութի կարելի , ևւածութին Է էութի
հարկաւոր , ապա ուրեմն մարմին ևՀոգի
տն մերոյ յի քի ոչէն ւած :

Չայսոսիկ ևզայլս սոցին նմանս կարեմք
առբերել բանս : Բայց առինչ այսքան աշ-
խատութի , զի մարմին ևՀոգի տն յի Լն
արարածք , ևգոլով ժամանակեայք ոչէն ւած :
քանզի ուն անհնարին է ալ լինիլ արարած ,
ևանեղին եղեալ , այսպէս անհնարին է արա-
րածոյն և եղելոյ լինիլ ւած : Չայս ճշմար-
տութի համայնք քրիստոնէայք , ևնոցին իմաս-
տասէրք առհասարակ , այլև գրեանք նոցին
ստոր-

ստորասէն և խոստովանին : Ունիմք ևս զվր
կայութիս աւետարանին սրբոյ , որ զմորն
մերյս քս ասէ մարդ և որդի մարդոյ : Եւ առա-
քեալքն որին քարոզէն զնա , եղեալ 'ի զաւակէ
Դաւթի ըստ մարմնոյ : Եկոչէն զնա առա-
քեալ . քահանայ , փոքր քան զհրեշտակս ,
եկերպարանաւ ծառայի : Արդ եթէոք ընդի-
մանայցէ այսոցիկ , անբան է , և նուազագոյն
քան զանբան , զի զարարածն արարիչ առ-
նէ , և զստեղծւածն անծ : Ուստի և ընդ անհա-
ւատս և ընդ կռապաշտս համարեսցի . որք ոչ
ճանաչէն զանծ , և զկէանս իւրեանց 'ըն հայ-
հոյանս , և 'ըն մեղանս , կորուսանեն :



Գլուխ Վեցերորդ .

Յաղագս Ածայնոյ բնութե ան մերոյ
յի քի .



Ետ խօսելոյ զմարդկութե
ան մերոյ յի քի . Ճառեսցուք
սակաւինչ կզածութե նո-
րին , քանզի զան մեր յս
քս ոչ սոսկ մարդ , կոչ սոսկ
ան , այլ ան կմարդ հաւա-
տանք կխոռոտովանիմք . կզայս ճշմարտութի
համահաւաստեմք իբանից սրբոց մարգա-
րեիցն : Եւ նախ վկայութեն Դաւթի որ ըն
սաղմոսին . 2. իթիւն 7. ասէ , Տր ասաց ցիս
որդի իմես դու , ես այսօր ծնայ զքեզ : Եւ
ըն սաղմոսին . 109. իթիւն 3. ասէ . Ընդ
քեզ է սկիզբն յաւուր զօրութե քոյ , իպայ-
ծառութիս սրբոց , յարգանտէ յառաջ քան
զարուսեակ ծնայ զքեզ : Ըն սաղմոսին . 88. ի
թիւն 27. ասէ , իբերանոյ Հօր ան իդէմս քի .
Նա կարդասցէ առիս , հայր իմ ես դու ,
ան իմ , կվերընդունող կեցութե իմոյ : Արդ
քանզի հայրն ծնող , կորդին ի յարգանտէ
նորին ծնիցեալ , են ըստ նոյնոյ բնութե , ապա
ուրեմս քս որ է ծնիցեալ յայ հօրէ , է որ-
դի ան , կան :

Դար-

Դարձեալ նոյն Դաւիթ 'ըն սաղմոսին 44.
 'իԹիւն 2. Խօսելով յաղագս քի, կոչե զնա
 անձամարդ, և ասէ, Բղխեաց սիրտ իմ զբան
 բարի, ասեմ էս զգործս իմ Թագաւորի :
 Լեզու իմ գրիչ դպրի, արագապէս գրողի :
 Գեղեցիկ կերպարանաւ, գերագոյն քան զոր-
 դիս մադկան : Սփռեցաւ շնորհ 'իշրթունս
 քոյս, վասնայնորիկ օրհնեաց զքեզ անձ 'ի
 յաւիտեան : Ած զսուրբո 'իվր ազդեր քոյ
 հրրագունեղ : Տեսլեամբ քով և գեղեցկութե
 քով դիտեա . աջողակի դիմեա, և Թագաւո-
 րեա : Վս ճշմարտութե, հեզութե, և արդա-
 րութե, և առաջնորդեցէ քեզ սքանչելա-
 պէս աջ քո : Նետք քոյք սրեցեալք են,
 և թողովորդք 'ի ներքոյ քոյ անկցին, 'ի սիրտս
 Թշնամեաց Թագաւորի : Աթոռ քո անձ 'ի
 յաւիտեան յաւիտենի, գաւազան ուղղութե,
 հաւազան արքայութե քոյ : Սիրեցեր զար-
 դարութի, և ատեցեր զանիրաւութի : Վս ույն
 որիկ էօծ զքեզ անձ, անձ քո ձիթով ուրա-
 խութե առաւել քան զվիճակակիցս քոյս :
 Այսոքիկ ամենեքեան ասին վս միոյ և վրայ-
 նոյ անձինն քի, այսինքն վս օծեցելն .
 որոյ երկու տունքն առաջինք են առաջա-
 բանութիք : Եւ 'ի տանէն այնմանէ որ ասէ .
 Գեղեցիկ կերպարանաւ, մինչև 'ցտունն այն,
 որ

որ ասէ . Աթոռ քո անձ , խօսի Մարգարէն
զքսէ ըստ որում է մարդ , քան զի գեղեցիկ
կերպարանաւն , կած զսուր քո 'ի վր աղ-
դ եր քոյ , կայն , մարդոյ միայնում վայելէն :

Իսկ 'իտանկէն այնմանէ որ ասէ , Աթոռ քո
անձ , մինչև 'ցվախճանն , խօսի Մարգարէն
զքսէ ըստ որում է անձ , քան զի ասէ . Ով
անձ , աթոռ քո 'ի յաւիտեան յաւիտենի , գա-
ւազան ուղղութե , գաւազան արքայութե
քոյ . Սիրեցեր զարդարութի կատեցեր զա-
ւիրաւութի , վսայնորիկ ով անձ , էօժ զքեզ
անձ քո ձիթով , ոչ հասարակաւ , ըստ որում
էղէն այլք օծեցեալք , այլ ձիթով ուրախութե ,
որ գեր 'ի վերոյ է քան զօծումն այլոց , այսինքն ,
ձիթով անութե իւրոյ : քանզի էօժ զքեզ
ուրախութե 'ն իւրով էութենականաւ : Ու
րեմն այսօքիւք ամենեքումք բացայայտե մեզ
Մարգարէն , թէ անձ մեր յս քս ոչիցէ միայն
մարդ , այլ և անձ , այսինքն , մի անոյն անձն ,
յոր անութին ընդ մարդկութե գոյ միաւո-
րեցեալ : Եւզի քս ըստ մարդկայնոյ բնու-
թէն մարդ կոչի , սակա որոյ ասէ Դաւիթ .
Գեղեցիկ կերպարանաւ առաւել քան զորդիս
մարդկան : Իսկ ըստ անայնոյ բնութեն ան-
կոչի , վասն որոյ ասէ նոյն Դաւիթ . Աթոռ
քո անձ 'ի յաւիտեան յաւիտենի : վսայնորիկ
ով

նվաճ, եօծ զբեզ մօք ձիթով ուրախութե :
 Եւ հետեփ յասացելոյն Մարգարէին, թէ իցե
 ամօ օծեցեալ , և ամօ օծանօղ . Աժ օծանօղ
 է հայրն ամօ , և ամօ օծեցեալն է որդին նո-
 րա : Իսկ ձէթն ուրախութե է ամուսինն ,
 որով օծան մարդկութի ան յի : Քան զի
 քանն ամօ որ է յաւիտենական և համազոյա-
 կից որդի հօր ան , հաճեցեալ ի ժամանակի
 մարմնացաւ իսրբութեոյ կուսէն Մարիամայ ,
 և առեալ զնութի մարդկային , այսինքն , զհոգի
 և զմարմին , միաւորեաց ընդ ամուսինն , յանձն
 իւր : Եւ ի ձեռն միաւորութե այնորիկ , այն որ
 նախ ամօ էր , զնի ժամանակաց մարդ-
 եղև , թարց իմիջ փոփոխութե , և այլայլութե ,
 ոչ ի կողմանէ ամուսինն , և ոչ ի կողմանէ
 առեցելոյ մարդկութեն . Իսկ սոի այն որ Էր
 շառաքաւոյն , այսինքն ամուսինն , մնաց նոյն-
 պէս , և զայն , որ ոչ էրն , այսինքն զմարդ-
 կութինն էա : Եւ զայսպիսի առեղութի ,
 և զմիաւորութի մարդկայնոյ բնութեն ընդ
 ամուսին , օծութե կոչեմք . զմարդկութին
 ասեմք օծեցեալ , և զամուսինն օծանօղ ,
 կամ ձէթ ուրախութե . Իւրեմն քն զոլով
 մի անձն , օծեցեալ եղև ըստ մարդկութեն
 յամուսին իւրմէ : Սակս որոյ քն ամօ է յաւի-
 տենականապէս ամուսինն իւրով , և մարդ է

ժամանակապէս մարդկութիւնս իւրով . Որ և
 օծեցեալ ասի յայ հօրէ ձիթով ուրախու
 թէ , այսինքն ԹԻՄԵՆ , գերագունեղապէս
 առաւել քան զվիճակակիցս իւրս , զօծեցեալս
 շնորհօքն այ . քանզի օծաւ քս ԹԻՄԵՆ ,
 որ է աղբիւր ամենից շնորհաց , ևնոյն ինքն
 է շնորհ ըստ էութե . Ասեմք ուրեմն ըստ
 մարգարէին Դաւթի , թէ քս իցէ մարդ , գե
 ղեցիկ կերպարանաւ , առաւել քան զորդիս
 մարդկան : Եւ թէ իցէ ան , զի անթողնորա է՝ ի
 յառիտեան յաւիտենի . և օծ զնա ան ձի
 թով ուրախութե .

Դարձալ նոյն Դաւթ մարգարէն բացա
 յայտելով զԹԻՄԵՆ քի , կոչէ զնա ինքեան
 տր , ըն սաղմոսին . 109 . Իթիւն I . Լասէ .
 Ասաց տր ՚յտր իմ նիստ ընդ աջմէ իմէ ,
 մինչև եղից զԹԻՄԵՆ քոյս պատուանդան
 ոտից քոց : Քանզի նոյնէր թէ ասէր , Ասաց
 ան ՚յքս , նիստ ընդ աջմէ իմէ : Արդ էթէ
 քս ունի զնոյն անուն , և զնոյն անուն ընդ
 այ . ուրեմն է ան , և հաւասար հօր : Այլե
 գրով քի ըստ մարմնոյն որդի Դաւթի , ոչ
 յարմարապէս կոչիւր ինմանէ տր , էթէ ոչ ըստ
 ԹԻՄԵՆ , զի որդին ոչ կարէ առասիլ տր
 հօր իւրոյ : Չայս ճշմարտութի յառաջար
 կեաց քս հրէից ասելով . Եթէ Դաւթ զքս
 տր

տն կոչէ ինքեան , զի անդ որդի նի իցէ .
 իսկ նորա վն ոչ խոստովանելոյ զածուծին
 քի , զոչինչ էտուն պատասխանի . Բայց
 մեք ըստ Մարգարէին նկատելով զմարդկու-
 թին քի , ևստորաւելով զածուծի նորա ,
 դաւանիմք զնա որդի Դաւթի ըստ մարդկու-
 թեան , ևզնոյնն տն Դաւթի ըստ ածու-
 թեան .

Դարձեալ նոյն Դաւթի մարգարէն խօսե-
 լով զքսէն ըն աղմոսին . 71. Իթին 17. ասէ .
 Եղիցի անուն նորա օրհնեցեալ իյաւի-
 տեանա , յառաջ քան զարե յարամնայ ա-
 նուն նորա : Եւ օրհնեսցին ինմա ամբ
 ազգք Երկրի : Արդ՝ եթէ յառաջ քան զարե
 է անունն քի , յորմէ ընդունելոցք են
 զօրհնութի համայնք ցեղք Երկրի . Ուրեմն
 է ամ : Քանզի այ միայնում վայելէ լինիլն
 նախ քան զարե , այսինքն , ունէլն զանուն
 ևզեութի յառջ քան զհանուրս ստեղծականս ,
 որոյ էութիւն անուամբն ճանաչի .

Երկրորդ , վկայութիւն Եսայեայ մարգա-
 րէի , որ ըն ցլխոջն 7. Իթին 14 խօսե-
 լով զքսէ վերաձայնէ զնա Էմմանուէլ ասէ .
 Ահա կոյս յղասցի , ևծնցի զորդի , ևկոչեցցի
 անուն նորա Էմմանուէլ . Արդ Էմմանուէլն
 ըստ Բարբառոյն Էբրայականի , Թարգմանի ,
 ընդ

ընդ մեզ ան , սուպ ուրեմն քս ան է .

Դարձեալ նոյն Եսայիաս մարգարէն ըն գլխոյն . 9. իթիւն 6. ասէ . Քան զի մանուկ ծնաւ մեզ . կորդի տուաւ մեզ . և եղև իշխանութիւն ի վերա ուսուց իւրոյ , և կոչեսցի անուն նորա , սքանչելի , խորհրդական , անծ , հզօր , հայր հանդերձելոյ յաւիտենի , իշխան խաղաղութե : Բազմացի իշխանութի նորա , և խաղաղութե ոչ եղիցի վախճան ; ի վր գահոյին Դաւթի , և ի վր արքայութե նորա նստցի , զի համահաստիցէ զնա , և զօրացուցանիցէ . դատողութե և արդարութե , յայսմ հետէ և մինչև պաւտ աստեան : Արդ եթէ քս վերաձայնի ան , հայր հանդերձելոյ յաւիտենին , և իշխան խաղաղութե , ուրեմն է ան : Քան զի այ միայնում ասի , հայր յաւիտենից , որէ ստեղծօղ յաւիտենից : Լնա միայն է իշխան խաղաղութե , որ ըստ էութեն իւրում , է խաղաղութի :

Երրորդ , Վկայութեն Բարուքայ մարգարէի , որ ըն գլխոյն . 3. իթիւն 36. ասէ . Սա է անծ մեր , և ոչ համարեսցի այլոք ինդեմ նմա , Սա ասեցիտ զամ ճանապարհ խրատու , և աւանդեսց զնա Յակոբայ մանկանն իւրում , և իսրայէլի սիրեցելոյ իւրում : Յետ այսոցիկ իյերկիրս երևեցաւ , և ընդ մարդկան
կեն-

կենցաղավարեցաւ : Արդ ամ գոլով սնտե-
սանելի , ոչ կարէ երևիլ 'իյերկրի , ուրեմն
խօսի մարգարէն զքնէ , որ մարմնով իւրով
երևեցաւ 'իյերկրի , և կենցաղավարեցաւ ընդ
մարդկան , սպա ուրեմն քն ամ է Ճշմարտա-
պէս :

Չորրորդ վկայութիւն Ամբակումայ մար-
գարէին , որ 'ըն գլխոջն . 3. 'իթիւն 18. ասէ
Այլ էս 'իտր ինդայից , և ցնծայայց ամ 33
իմ : Արդ ահա պարզապէս մարգարէն զ33
ամ վերածայնէ . սպա ուրեմն է ամ :

Հինկերորդ հաւաքարանութի ասացաւ
ծոյն մարգարէից , որք զամ տր վերակոչէն ,
Քան զի Էրեմիա մարգարէն 'ըն գլխոջն .
33. 'իթիւն 2. ասէ . Չայտոսիկ ասէ տր , որ
ստանելոց է , և կերպաւորելոց է զնա , և պատ-
րաստելոց է , Տր է անուն նորա :

Եւ Եսայիաս 'ըն գլխոջն . 42. 'իթիւն 8.
ասէ . Ես տր , այս է անուն իմ : Գաւիթ
մարգարէն 'ըն սուղմոսին . 67. 'իթիւն 5. ասէ .
Երգեցէք այ , և զսուղմոս ասացէք անուան
նորա , զճանապարհ արարէք այնմիկ , որ
էլանէ 'ի վր արեմտից , Տր անուն նր : Եւ
'ըն սաղմոսին . 82. 'իթիւն 19. ասէ . Եւ ծա-
նիցէն զի անուն քո Տր է , զու միայն բարձ-
րագունեղ յամուս երկրի : Իսկ զնոյն անունն

Եր առ ընձեռե՛ն նոյն մարդ տրե՛ն Գաւիթ Քի,
ասելով, Ասաց եր ցեր իմ, այսինքն ասաց
Աժ ց Քս. սպա ուրեմն քս ԾԺԷ, և որդի
այ. և յաւիտե՛նականապէս ծնիցեալ իյե-
ութե՛ հօր այ. Որոյ անունն յառաջ քան
զարե յարամնայ, և էմմանուէլ վերաձայնի,
այսինքն, ընդ մեզ ԾԺ. Զի կերպարանաւ
մարդկայնով երևեցաւ իյերկրի, և ընդ մարդ-
կան կենցաղաւարեցաւ :

Յայտցանե՛ բնաւից վերոգեղելոյ հետեի,
թէ քս ոչ միայն մարդ իցէ, այլև ԾԺ : մարդ
է ըստ մարդկայնոյ բնութե՛ն, և ԾԺ է ըստ
ԾԺայնոյ բնութե՛ն : կրտսեր է քան զհայր
ըստ մարդկութե՛ իւրում, և հաւատար է նմին
ըստ ԾԺութե՛ իւրում :

Վսորոյ առ ընձեռեմք նմա զնաւս առ ըն-
ձեռուածս մարդկայինս բաց իմեղաց, ըստ
որում է մարդ. և առ ընձեռեմք նոյնում
զբնաւս առ ընձեռուածս՝ ԾԺայինս, ըստ ո-
րում է ԾԺ : քան զի զերկուս բնութիւնս իմի
քս խոստովանիմք : այսինքն զԾԺայինն, և
զմարդկայինն : զԾԺայինն, զի քս յաւիտե
նականապէս է որդի հօր այ : և զմարդկայինն,
զի քս ժամանակապէս է որդի մարդոյ :

Գլուխ Եօթներորդ .

Յաղագս միոյ բնութե՛ն և երից անձանց ամե-
նաորոյ երրորդութե՛ն , բնականապէս
տրամբնութանալով , իձեռն բազ-
դատութե՛ն ստեղծականացս :



Յեութե՛ց ստեղծականաց մին-
չև ցեութի՛նն ինչ , զբնթացս
մասաց մերոյ վերացուցանելով,
իմէջ այրոյ առ բնաձեռուածոյ
ամայնոց , զերիս զայստակ
նախնադոյնս գոլ նշմարեմք .
այսինքն , զկարողութի՛ն , զիմաստութի՛ն , և զգ-
ւեր :

Քանզի ամ կարող է, և կարողութի . իմաս-
տուն է և իմաստութի , սիրող է և սեր : Նա և
էութիւն իւրով կարող է , իմաստուն է , և սի-
րող : Բայց առ բնաձեռուածքս այսոքիկ ունին
յինքեանս զբարեյարմար իմն կարգաւորութի ,
զի առաջինն է սկիզբն երկրորդին , իսկ երկ-
րորդն ոչէ սկիզբն առաջնոյն , այսինքն ,
կարողութիւնն է սկիզբն իմաստութե . բայց
իմաստութիւնն ոչէ սկիզբն կարողութե : Քան-
զի թէ գոյ իմաստութի , ուրէմս գոյ կարողու-
թի : Իսկ էթէ ոչ գոյ կարողութի , ոչ գոյ իմաս-
տութի :

տութիւն : Արդ գոյ իմաստութիւն , ուրեմն գոյ
 և կարողութիւն : Բայց ոչ հակադարձեալ . զի
 ոչ բարեպէս ասի , թէ գոյ կարողութիւն , ու
 րեմն գոյ իմաստութիւն : քան զի կարողութիւն
 գոյն իմաստութիւն , նախ և քան զգոյն նոյ-
 նոյ իմաստութե : ապա ուրեմն իմաստութիւն
 ոչէ սկիզբն կարողութե . այլ կարողութիւն է
 սկիզբն իմաստութե : վս զի իմաստութիւն
 ի կարողութե յառաջագայի , իսկ կարողու-
 թիւն ոչ յառաջագայի ի յիմաստութե :

Նմանապէս ասեմք . թէ Սերն ի կարո-
 ղութե և ի յիմաստութե յառաջագայի , իսկ
 կարողութիւն և իմաստութիւն ոչ յառաջա-
 գային իսիրոյ : վս զի եթէ գոյ սերն , գոյ և կա-
 րողութիւն և իմաստութիւն . զի սերն ոչ լինի
 թարց գիտութե և կարողութե . Բայց եթէ
 գոյ կարողութիւն և գիտութիւն , ոչ իհարկէ
 գոյ Սերն :

Ուստի եթէ հարցանիցէ ոք , թէ յումէ յառա-
 ջագայիցի կարողութիւն , պատասխանեմք . թէ
 յոչումեքէ , քան զի ոչ ունի զսկիզբն . վսորոյ
 ևէ նախկին իմիջ երից սցոցիկ աւրննէ ու-
 ուածոյ : Եւ եթէ ինդրիցէ ոք , թէ յումէ
 յառաջագայիցի իմաստութիւն , ասեմք թէ
 ի կարողութե , քան զի կարողութիւն է սկիզբն
 իմաստութե , վսորոյ և իմաստութիւն է երկ-

որոր ՚իմէջ Երից այսոցիկ առ ընձեռուածոց :
 Աստուտ մինչ ՚իմիտ ածեմք զիմաստութիւն,
 զերկուս իրս գոլ նշմարեմք ՚ի նմա, այսինքն,
 զճանաչումն, և զկարողութի : Չորոյն ասեմք,
 ևս յազատս սիրոյ, քանզի եթէ հարցանիցէ ոք
 թէ յուսն յառաջագայի սէրն, պատասխա-
 նեմք ՚ի կարողութե և ՚ի գիտութե, զի մինչ
 ՚իմիտ ածեմք զսէրն, զերիս գոլ նշմարեմք
 ՚ի նմա. այսինքն, զսիրեցումն, զկարողութի,
 և զճանաչումն, վն որոյ ևս է Երրորդ,
 ՚իմէջ այսոցիկ Երից առ ընձեռուածոց :

Արդ առ ՚ի հաւաստութի սնտորիկ, ընթա-
 նալով մտօք ՚ի սիրոյն առ կարողութիւն ասեմք,
 թէ ամ էակ բնականաբար սիրէ զինքն, ըստ
 որում ուսուցանէ մեզ ներհմտութիւն, Քան
 զի տեսանեմք զանբանս կենդանիս, զգազանս
 և զթռչունս, և զայլս էակս, որք բնականա-
 բար հետեւին բարեկամայ, և օգտակարաց
 բնութեն իւրեանց, և մարանչին ընդէմ
 թշնամեսց և վնասակարաց իւրեանց: Իսկ եթէ
 սիրեն զինքեանս, ուրեմն և ճանաչեն, զի
 եթէ ոչ ճանաչէին զինքեանս, ոչ սիրէին,
 Եւ զայս հաւաստեն իմաստասէրք առ հա-
 սարակ ասելով, թէ ոչինչ է սիրեցեալ, որ ոչ
 իցէ նախ ճանաչեցեալ :

Բայց առ ընձեռուածք այսոցիկ, այսինքն՝

կարողութիւն, իմաստութիւն, ևսերն զանա-
զանիւն ՚ի միմեանց զանազանութե առն-
չականաւ նկատելով իցառաջագայութիւն զոր
ունին իմիմեանց: Վասն զի որ յառաջածե-
ցեալն է ՚ի ստա, կամ առբերեցեալն, ունի
զհայեցումն իմն առ յառաջածօղն կամ առ
առբերօղն իբրեւ առ համառնչականն իւր.
Նմանապէս ևոր յառաջածօղն է կամ առբե-
րօղն. ունի զհայեցումն առ յառաջածե-
ցեալն, կամ առ առբերեցեալն, ունի որդի
ունի զհայեցումն առ հայր, ևհայր առ որ-
դի. Եւ ըստ այսմ էն համառնչականք և
հետևապէս հակակայք միմեանց:

Իսկ որք առնչութե հակակային միմեանց
զանազանին ՚իմիմեանց: Ապա ուրեմն կարո-
ղութիւն, իմաստութիւն, ևսերն, նկատելով ՚ի
յառաջագայութիւն զոր ունին ՚իմիմեանց,
զանազանին ՚իմիմեանց, զանազանութե առն-
չականաւ: Մեծագոյնն յայտէ. զի ըստ
իմաստասիրաց մինն ՚ի հակակայիցն է առն-
չութիւն. փոքրագոյնն հաւաստի է, զի ուր
ոչինչ հակակայութի, անդ ոչինչ զանա-
զանութի. ևհակադարձեալ, ուր հակակայ-
ութի, անդ ևս զանազանութի. Ուրեմն որք
առնչութե հակակային միմեանց, զանա-
զանին ՚իմիմեանց:

Աստուած

Աստուտ կարողութիւն որ է առբերող ,
 Եկմաստութիւն , որ է առբերեցեալ Էն առն-
 չականք . Եկբր առնչականք , Էն հակա-
 կայք միմեանց , Երստ որում հակակայք , Էն
 զանազանք : Նմանապէս սերն որ է առբե-
 րեցեալ , Եկարողութիւն Եւանաչումն որք Էն
 առբերողք , զանազանիւն իմիմեանց . Չի
 որք առնչաբար հակակային , առնչաբար
 Եկանազանիւն :

Բայց գիտելի է նախ , զի երեք առնչեա-
 ւածքս այսոքիկ , այսինքն , կարողութիւն , Իմաս-
 տութիւն Եւերն , Թեպէտ նկատելով ի վերոգե-
 ցեալն յառաջագայութի զանազանիցին իմի-
 մեանց , սակայն ոչ վն այնորիկ անջատին իմի-
 մեանց . Քան զի Իմաստութիւն առբերեցեալ
 ի կարողութե , ոչէ արտաքոյ կարողութե . զի
 էթէ լինէր արտաքոյ կարողութե , բաժանիւր
 ինմանէ , Եւ աւանանայր յայլիմն էութի :
 Երստ որում տեսնեմք ի յատեղծուածս ,
 Նորս որդի առբերեցեալ ի հօրէ Է արտա-
 քոյ հօր , Եւ անջատեցեալ ինմանէ . Իսկ
 աւանանացեալ յայլիմն էութի : Իսկ Իմաս-
 տութիւն ոչէ սցապէս , զի յորմէ Եւ յառա-
 ջագայի նա , ինմին Եւ յարամնայ : ուղ բանն իմի-
 տայ մերոյ առբերեցեալ , ոչէ արտաքոյ մտայ
 մերոյ , այլ իմիտս : Նոյնպէս Եւերն առբե-
 րեցեալ

րեցեալ իսիրողէն առ սիրեցեալն , ոչէ աւա-
տաքոյ սիրողին , այլ իմէջ սիրողին :

Գարձեալ իմաստութիւն յառաջագայե-
ցեալ , է էակ ինչ , ուրեմն ունի յինքեան
զկարողութի գոլոյ , ապա ուրեմն յառաջա-
գայելով իկարողութե ոչ անջատի ինմանէ :
Նախնթացն հաւատոյ է , զի ոչինչն ոչ կա-
րէ յառաջադայիլ : Հետեւումն յայտէ , զի
որինչ ոչունի յինքեան զկարողութի գոլոյ
ոչինչէ , ուրեմն ընդէմն սորին , որինչ էակ է ,
ունի յինքեան զկարողութի գոլոյ . ապա
ուրեմն իմաստութիւն յառաջագայեցեալ ի
կարողութե ոչ անջատի ինմանէ :

Երկրորդ , իմաստութիւն յառաջագայեցեալ
իկարողութե էթէ անջատիւր ինմանէ ,
ունէր զայլիմն էութի . Եյայնժամ խնդրիւր ,
թէ ունէր արդեօք ևս յինքեան զկարողու-
թի գոլոյ , թէ ոչ : Արդ էթէ ոչունէր ,
ոչինչ էր . քանզի որինչ ոչ կարէ գոլ , ոչինչ է .
բայց տեսանէմք հաւաստեալ , զի ունի տա-
կաւին զկարողութի գոլոյ . ըստ այնմ որ
էակ է , ապա ուրեմն իմաստութիւն յառաջա-
գայեցեալ իկարողութե ոչ անջատի ինը-
մանէ .

Երրորդ , սերն բղխեցեալ իկարողութե է
էակ իմն ևգոյ , ուրեմն ունի յինքեան զկարո-
ղութի

ղուծի գոլոյ, ապա ուրեմն յառաջագայելով
 ՚նմանէ ոչ անձատի:

Չորրորդ. սէրն վերաբերեցեալ առ սիրե-
 ցեալն ունի յինքեան զճանաչումն, զի ոչինչ
 է, որ կարիցէ սիրիլ. Էթէ ոչ նախ ճանաչե-
 ցի, ապա ուրեմն յառաջագայելով ՚ից խոու-
 թէ, ոչ անձատի ՚նմանէ:

Հինկերորդ, Էթէ սէրն բղխեցեալ ՚իկարո-
 ղուծէ և յիմաստութէ, անձատիւր ՚նո-
 ցունց ևստանայր զսլլիմն եուծի, յայն-
 ժամ ոչ ունէր յինքեան զկարողութի գոլոյ.
 և հետևապէս յոչինչ փոխարկիւր, քանզի
 ուստացաք, որ ոչ ունի յինքեան զկա-
 րողութի գոլոյ, ոչինչ է. Նաև՝ Էթէ
 եուծին այն սիրեցեալ գոյր անճանաչելի,
 ոչ սիրիւր, զի ոչինչ է, որ կարիցէ սիրիլ.
 Էթէ ոչ նախ ճանաչիցի. Եւ սցսպէս սէրն
 բղխեցեալ ՚իկարողութէ և յիմաստութէ, Էթէ
 անձատիւր ՚նոցունց յոչինչ փոխարկիւր,
 վս ոչ ունէլոյ յինքեան զկարողութի գոլոյ,
 և զճանաչումն սիրեցելոյն, Բայց այս ան-
 կարելի է, ուրեմն սէրն յառաջագայեցեալ
 ՚նոցունց ոչ անձատի:

Դարձեալ, Էթէ իմաստութիւն ևսէրն
 յառաջագայեցեալք ՚իկարողութէ անձա-
 տէիին ՚նմանէ. կարողութիւն յոչինչ փո-
 խար-

խորհիւր, վն ոչ ունելոյ յինքեան զսեր, եղբ-
 քանաչումն, քան զի սպ առաջաք, ամ էակ
 բնականաբար օրոհ զինքն, և հետեապէս ծա-
 րաշէ զնքն : Ապա ուրեմն ըստ սցամ, երստ
 վերոգեցելոյն առարկութեց, երեք այսքիկ
 առննէն առաք, սցալինքն, կարողութիւն,
 իմաստութիւն, ևսերն, յոչինչ փոխարկէին :
 Այլ սցա է անհնարին և հակասական, ուրեմն
 առննէն առաքս այսքիկ յառաջագայելով
 իմիմեանց ոչ անջատին : Աստուտ էթէ
 իմաստութիւն յառաջագայի իկարողութե,
 քայց ոչ արտելանէ, ևոչ ևս անջատի ինմա
 նէ : Եմանապէս ևսերն էթէ յառաջագայի
 իկարողութե և իմաստութե, քայց ոչ ար-
 տելանէ, ևոչ ևս անջատի ինոյունց, ուրեմն
 ուին զմի ևզնոյն էութի ևզոյութի : Բայց
 նկատելով իյառաջագայութիւնն. գոն զա-
 նազանեցեալք զանազանութե առննչակա-
 նառ : Մի էն բացարձակապէս, և մի էութի
 էզսիման. այլ բաղումք էն առնչապէս
 նկատելով յառաջագայութիւնն :

Արդ՝ ըստ սցամ խորհելով զէութեան այ
 բարձրելոյն, տեսանեմք զվերոգեցեալս սցա-
 սիկ զերունակաբար նմին պատկանիլ. Քան
 զի իմաստութի նորին յառաջեականապէս և
 անէզբաբար յառաջագայի իկարողութե իւր-
 մէ

մէ, ևս երն իկարողութիւն և յիմաստութիւն: Ուրեմն իհարկէ գտանին իմաստաւարացութիւնն այնոքիկ վերոյեցեալք:

Եւ զի ուրանօր են յառաջագայութիւնն այնոքիկ, անդ են ևս առ ընչութիւնք և հակադասութիւնք. Ուստի հետևապէս ըն յոստումում գտանին առբերող ևս ըբերեցեալ, յառաջածող և յառաջածեցեալ: Եւ զի երեք առ ընդէն ուսածքն այնոքիկ: Այսինքն կարողութիւն, իմաստութիւն, ևս երն, յառաջագայելով իմաստանց ոչ արտէրանեն, և ոչ անջատին իմիմեանց, և ըստ այսմ են մի էութի, ևս գոյութի, Ուստի և զանոնք, որ է ամենակարող, ամենիմաստ, ևս ամենագութ, մի էութի. ևս բնութի, ևս զիւր ամենից էութեց, իմաստութեց, և գոյութեց վերանշմարեմք:

Խոստովանիմք ուրեմն զանմի, և զէութիւնն իկարողութե, յիմաստութե և իսիրոց անեզրաբար յարակայացեալ: Վն զի որինչ է, իւրով էութեմն է, և ըստ այսմ մի գոյ իմասնի, այսինքն, մի անձ, մի անեզր, մի յաւիտենական, մի անհոգն, մի անեղ, մի ամենակարող. մի ամենիմաստ, ևս ամենագութ: Բայց սակայն տեսանեմք զիմաստութիւն և զսեմն գոյ անանջատն յէութեանորա, իսկ

իսկ զառաջագայութիւնն , զառնչութիւնն ,
 և զհակակայութիւնն առբերեցելոյն և առ-
 բերողին գոլ զանազանս : Այս որոյ զանօ միակ ,
 յաղագս միոյ ևանբաժանելոյ էութենն զառա-
 նիմք , ևերբեակ , յաղագս առնչութեցն ,
 Էւ բաց յառնչութեցն զոչինչ զանազանութի
 թի գտանեմք ինմա :

Գլուխ Ութերորդ .

Յաղագս Միոյ էութեն ևերից անձանց ամե-
 նասրբոյ երրորդութեն , գերբնա-
 պէս , իմենն վկայութեց սրբոյ
 Մարգարեիցն :



Ինչև ցարդ խօսեցաք զէութե
 թե հարկաւորի Կակին , բազ-
 դատելով ստեղծականացս ըզ-
 նոյնն , զոր և իմաստասերք հե-
 տաղօտելով իմացան , ևմեզ
 աւանդեցին : Իսկ այժմ ամ-
 բառնալով զայս մտաց մերոյ իվեր քան
 զարտափայլութիւն արարածոցս , զայլ իմե-
 ասեմք և հաւատամք , որ թէպէտ այլազ-
 նեաց մտաց դժուարին թուի , սակայն մեք
 քրիստոնեայքս իմաստասիրապէս բացայայ-
 տեմք

տեմք զնոյնն , ևսայծառացուցանեմք իբրն
 զարեգակն : Ոչ 'իձեռն մականատածութեց
 մերոյ , այլ 'իձեռն յայտնութե ամենակա-
 րողին ԿՅ , որ խօսելով ընդ ծառայս իւրո
 Մարգարէս , ազգեաց 'նոցա հոգւովն սրբով ,
 ևնոքա գրեցելովք իւրեանց սրբազանիւք մեզ
 սուանդեցին : Իսկ մեք ընկալեալք 'ի նոցունց
 հաւատացաք , և հաստատիցաք 'ինոյնն : Քան
 զի այլապէս ոչեր մեզ կարողութի ճատել
 յաղսողս ԿՅ բարձրելոյն զայնպիսիս , որք
 գերազանցեն զտեսութիս ըստեղծուածոց :
 Իրաւի է թերևս , զի 'իկատարելութեց
 եղելոցս ըստ գուղնաքեաց իմացողութե մե-
 րում՝ սակաւ ինչ՝ կարեմք խօսիլ զԿՅ . ըստ
 որում վկայէ . Սողոմոնն 'ի գիրս իմաստութե
 'ըն գլխոյն . 13 . 'ի թիւն 5 . ասելով . Քանզի
 'իմեծութե գեղեցկութեն և ստեղծուածոյն ,
 ճանտչելաբար կարասցէ ստեղծող 'նոցին
 տեսանիլ :

Եւզլինի սակաւուց 'ըն թուոյն . 8 . կշտամ-
 բէ եյանդիմանէ զայնոսիկ , որք ոչ ծա-
 նեան զԿՅ , ասելով . Դարձեալ և ոչ սոցա
 պարտէ 'ներել . քան զի էթէ այսքան կա-
 րացին գիտել . զի կարիցէին վարկանիլ
 զկենցաղս , զխարդ . Կորին զԿՅն ոչ դիւրա-
 գոյնասպէս գտին : Բայց թշուառելիք էն ,
 և 'իմեջ

Ե՛րմեջ մեռելոց է յոյս նոցա , որք առաւել-
ցին ան զգործս ձեռաց մարդկան , զոսկի ,
և զարծութ , զգիւտն արհեստի , և զնմանութիս
կենդանեաց , կամ զքար անպիտան զգործ հնոց
ձեռին : Սակայն առաւել քան զկարն մեր
ոչ կարեմք ձկտիլ :

Ապա ուրեմն իձեռն բաղդատութե՛ւ ստեղ-
ծականացս կարեմք յայտնապէս ներբերել
իմեզ զծանօթութի՛ն ան . և ճառել զնմանե-
լատ կարի . Բայց որպէս ասացաք , իվեր քան
զտեսութիս ստեղծութեանց զոչինչ կարեմք
զնմանե խօսիլ , և մանաւանդ եթէ խօսիցի ոք ,
մեղս համարիմք :

Աստուած՝ հնաւորամբ և խօստովանիմք
միայն զաստեղալս իսրբոց Մարգարեիցն , որք
իձեռն ներշնչման հոգւոյն սրբոց տեղեկա-
ցեալք խորոցն անայնոց , ծանուցին թեզ
զնայնս . Զորս թեպէտ նուաստութի իմա-
ցողութե մերոյ պարագրել ոչ կարէ . Սա-
կայն օրովհետեւ իստեղծութեանցս զանձն
բարձրեալ ճշմարտախօս ծանեաց , թարց
ու մեք երկրայութե ատշենումք ինոյնս : Ղի
որ ոչ ընդունի զբանս ան , սուտ առնէ զանձն ,
և դատի ընդ անհաւատոս :

Հաւատամք ուրեմն , զի անձ մի է և երբեակ ,
մի էութի և երբեակ անձնաւորութի , սյու-
նին ,

ինքն , զեութիւն այ մի ճանաչեմք , և զերիս
անձինս ինմա իմանամք . որքէն Հայր ,
և Սրգի , և Հոգին ԹԲ :

Չմի էութի հաւատամք , Քան զի ան
խօսելով Մովսիս ըն գիրս երկրորդի օրինի
ըն գլխոջն . 6. իթիւն 4. ասաց , Լուր խրայել ,
տր ան մեր , տր մի է : Եւ ըն գլխոջն . 32.
իթիւն 39. ասէ , տեսէք զի ես միայն եմ , և ոչ
գոյ այլ ան բաց յիննն :

Ապա ուրեմն հաւատեմք զան մի գլ .
Քան զի հաւատամք բանից նորին : Եւ թեպէտ
իստեղծածոցս յազագս այ մութիւն զպատ-
ճառս ոչ ունիմք . Սակայն իյայտնու
թէնէ նորին առաւել հաւատեմք զմիտ
մերս , քան թէ իպատճառաց բնականաց :

Հաւատամք ևս ըն միում աստուծում զոչ
զերիս անձինս . Եւ զայս ճշմարտութի թէ
պէտ ոչ կարեմք հաստատել ի յեղելոցս ,
քանզի նոչումեք էութի ստեղծականի զերիս
անձինս գտանեմք , այլ ըն իւրաքանչիւր-
ումեք էութի զմի անձն . Սակայն հաւա-
տեմք զմիտս մերս յասացելոյն սրբոյ Մար-
գարէից , որոյ ինքնիսկ ան յայտնեաց :

Եւնախ իբանիցն Խոսեայ մարգարէի ,
որ ըն գլխոջն . 66. իթիւն 9. ասէ , Մի թէ
ես որ այլոց զծնունդ շնորհեմ , ես ինքն ոչ
ծնա

ծնանիցիմ, ասէ Թր: Իբանս այսոսիկ, զորս ան
 ասէ ըստ եղանակի հարցման, ցուցանէ մեզ,
 թէ ռնիցի ինքն զծնունդ. Զան զի ասէ,
 թէ Էս որ այլոց զծնունդ շնորհեմ, ոչեմ
 անծնունդ, այսինքն անկար է, թէ իցեմ
 թարց ծննդեան: Բանք այսոցիկ են այ բարձրե
 լոյն, եովէ որ հակառակիցի սոցա, թարց մո
 լորութե. Ապա ուրեմն ըն յաստուծում
 գոյ ծնունդ, զի սր այլոց զծնունդ շնոր
 հէ, ինքն ոչէ ամուլ: Իսկ որոջ է ամուլ
 ծնանի զորդի, ևէ հայր որդւոյ:

Երկրորդ իբանից Գաւթի մարգարէին,
 որ ըն սաղմոսին. 109. Իթիւն 1. Խօսելով
 յաղագս քի ասէ, Ասաց Թր ցԹր իմ, Նիստ
 ընդաջմէ իմմէ, մինչև ցայն տեղին ուր ան
 խօսի առ որդին իւր ասելով. Յառաջ
 քան զարուսեալ ծնայ զքեզ: այսինքն,
 նախ քան զստեղծուածս ծնայ զքեզ:

Երրորդ իբանից Նոյնոյ Գաւթի Մարգա
 րէին, որ ըն սաղմոսին. 2. Իթիւն 1. ասէ.
 Ընդէր վեղովեցան հեթանոսք, մինչև ցայն
 տեղին, ուր խօսի քս զայ հօրէն իւրմէ
 ասելով: Տր ասաց ցիս, որդի իմ էս դու.
 Էս այսօր ծնայ զքեզ:

Չորրորդ իբանից Նոյնոյ Գաւթի մարգա
 րէին որ ըն սաղմոսին. 88. Իթիւն 21. ասէ,
 Զարի

Գտի զղաւթ ծառայ իմ . ձիթով սրբով իմով
օծի վնաս : Եւ ըն թուոյն . 27. ասէ . Նա
կարգասցէ առ իս . Հայր իմ Ես դու . Ա՞՞ իմ
և ընդունող կեցութե իմոյ :

Արդ իմարգարէից այսոցիկ սրբազանից
առանդի մեզ , թէ ամ ծնանիցի , և ունիցի
զորդի : Եւ բանք սոցին այնքան են լուսաւորք ,
կայստեք , մինչ զի ոչինչ կերպիւ թողու-
ցուն իմեզ զաեղի տարակուսութե . ապա
ուրեմն շշմարտապէս գոյ ծնունդ ըն յա-
տուծում :

Հինկերորդ իբանիցն Եզրասայ մարգա-
րէին , որ ըն չորրորդում գրգռջն , իգլուին .
7. իթիւն . 26. տալով մեզ զհաստատուն
վկայութի ասէ . Ահա ժամանակ եկեաց . Եւ
եղիցի մինչ գայցեն նշանքն , զորս նախա-
նացիքեզ , և երևեացի հարան , և երևելով ցուցցի
էրկիրն , որ այժմ խուսափէ . Եւ ամ որ ազա-
տեցեալ է ի նախասացելոցն չարեացն , առեա-
ցէ զսքանչելիս իմ . Քան զի յայանեացի որդի
իմ յս , հանդերձ նոքօք , որքեն ընդ նմա ,
և վայելչասցին , որք մնացեալքն են յամա չորս
հարիւր , և եղիցի զկնի ամացս այսոցիկ ,
և մեռանիցի որդի իմ քս :

Այսոցիկ համայնք վկայութիք լուսաւորք
մտայ , մեզ և ձեզ ընդունելիք : ոչթէ ևս
D սոսկ

սոսկ մտածութիւնք , կամ երեւոյթութիւնք
 ևցնորք , այլ յայտնութիւնք հոգւոյն սրբոյ .
 Ուստի ովքէ սյնքան ժպիրհ , կյանդուգն , որ
 զայսոսիկ ուրանալ իշխիցէ , ևհասկառակիցի
 ճշմարտութեն . զմարգարէսն ոչ ընդունի-
 ցի , ևզմարգարեութիւնս նոցին սուտս վար-
 կիցէ , եթէ ոչ այն , որէ արտաքոյ բանակա-
 նութեն : Բայց մեք քրիստոնեայքս ընկա-
 լեալք լրջմտութիւն զճշմարտութիւն զայսոսիկ
 սուի յայ իմեռն մարգարեիցն հաւատամք ,
 ևխոստովանիմք , ևհաստատապէս պատու-
 եմք :

Հաւատամք ևևս , ևխոստովանիմք զՀո-
 գին սբ ընդ Հօր ևընդ Որդւոյ մի ան ճշմա-
 րիտ , ըստ վկայութեց սրբոց մարգարեիցն :
 Եւ նախ Դաւթի , որ լցեալ Հոգւովն սրբով
 խնդրէ յայ ըն սաղմոսին . 50. իմիւն 13.
 ևասէ . Մի ընկենուր զիս ան յերեսաց քոյ ,
 ևզհոգի քո սբ մի իբաց բառնար յինէն :
 Եւ ըն սաղմոսին . 32. իմիւն 6. ասէ .
 Բանիւ ան երկինք հաստատեցան , ևհոգւով
 բերանոյ նորա անք զօրութիւն նոցա : այսինքն ,
 ան բանիւն իւրով , որէ որդին իւր միա-
 ծին , զերկինս էստեղծ , ևհոգւով իւրով
 սրբով հաստատեաց զզօրութիւննոցա :

Դարձեալ ըն սաղմոսին . 103. իմիւն

30. ասէ

30. ասէ: Առաքեսցես զհոգի քո, ևստեղծանեսցին, ևվերանորոգեսցես զերեսսերկրի:

Երրորդ վկայութիւնն Յոբայ մարգարէի, որ 'ի գլուխն. 33. 'իթիւն. 4. ասէ. Հոգին այ արար զիս: Եւ 'ըն գլխոջն. 26. 'իթիւն. 13. խօսելով զայ ասէ. Հոգի նորա զարդարեաց զերկինս.

Երրորդ վկայութիւնն Սողոմոնի. որ 'ըն գիրս իմաստութե, 'իգլուխն. 1. 'իթիւն. 5. ասէ, Քան զի սբ Հոգին խրատու, փախեսցի 'իկեղծմանէ, և'իբաց բարձցէ զինքն 'իխորհրդոյ, որք են թարց իմացման.

Չորրորդ վկայութիւնն Սիրաքայ. որ 'իգլուխն մկ. 'իթիւն. 8. ասէ. Մի է բարձրագունեղ ստեղծողն ամենակարօղ, ևաղքայ հղօր, ևահեղ յոյժ, որ նստի 'իվր գահոյի նորա, ևտիրօղ ամ, ինքն ևստեղծ զնա հոգւովն սրբով.

Հինկերորդ վկայութիւնն Յովէլէայ մարգարէի, որ 'ի գլուխն. 2. 'իթիւն. 28. ասէ. Եւ եղիցի յետ այսոցիկ հեղից զհոգի իմ 'իվր ամի մարմնոյ, ևմարգարեասցին ուստերք ձերք, ևդստերք ձերք: Ծերք ձերք երազով երազեսցին, ևմանկունք ձերք զտեսիլս տեսցեն. Այլն'իվր ծառայից իմոց, ևաղախեւեաց յաւուրս յայնոսիկ հեղից զհոգի 'իմ:

Արդ բանք մարգարեից այսոցիկ լուսա-
տուք, և յայտնիք, ուսուցանեն մեզ զհոգին
սբ զոլ ամ, և արարիչ, յորմէ ստորաբաշխին
համայնք շնորհք, և սրբութիք արարածոցս.
Ապա ուրեմն հաւատարի է, և ճշմարիտ խոս-
սովանութին մեր, որ յաղագս ամենասրբոյ
Էրրորդութեն.



Գլուխ իններորդ.

Յաղագս ընդ իմաց բութեյն հակառակորդաց
ընդ էմ բացայայտեցելոյ հաւատոյս մե-
րում, և մերոյն պատասխա-
նատրութեց:



Ռարկեն անհաւատքն ընդ էմ
մեզ ստելով, նախ թէ Ած
անմարմին է, և զկին ոչ ճա-
նաչէ, ուրեմն ոչ կարէ ծնա-
նիլ զորդի.

Եւ էթէ ամ ունէր զորդի,
և նմա հարկեր գոլ ամ, և պսպէս լինին
Էրիու ամք. իսկ էթէ և հոգին սբ է ամ,
ուրեմն ևն էրեք ամք.

Երկրորդ, էթէ ըն յաստուծում գոյին
էրեք անձինք, իհարկէ պարտէր խոստովա-
նիլ

նիլ ղերիս անձ , ֆանդի ՚իյստեղծուածս հայրն , ևորդին , որքէն երկու անձինք , էն երկու մարդիկ , ուրեմն , և՛յաստուծում էթէ գոյին երեք անձինք , գոյին երեք անձք .

Բայց այսոքիկ դժուարիմացք էն մտաց մարդկան , ևսնհաւատալիք . Ապա ուրեմն խոստովանիլն զնոյնս է մեծ մոլորութի , ևհայհոյութի .

Պատասխանեմք նախ , թէ անձ որ , որ հաւատաց ան ճշմարտապէս , ոչինչ կերպիւ պարտի երկեսիլ ՚իվի բանից սրբոց մարգարէիցն , զի բանք մարգարէիցն էն ատուգագոյնք քան զանձ ատուգութի , ըստ որում էն ներշնչեցեալք ՚իհոգւոյն սրբոյ . Էւ թէպէտ իմացողութի մտաց մերոց ոչ կարէ պարագրել զնոյնս , ևհաւատուել բնականիւք պատճառօք , սակայն ո՛չ վասնայնորիկ պարտի բացասել զնոյնս , զի որ բացասէ զբանս ան բարձրելոյն , սուտ առնէ զնա , որ է մեծ հայհոյութի .

Դարձեալ հաւատն է զիրաց անտեսանելեաց , ևսնհաւատանելեաց , որք դժուարապէս պարագրին ՚իմտաց ատեղծականաց . վն որոյ առ ՚ի հաստատուել զնոյնս , ոչ ունիմք զայլս պատճառս , էթեո՞չ զբանս ան , ևզվկայութիւս սրբոց մարգարէից . Աստուտութեպէտ դժուար

բազոյնս գոլ խոստովանիմք զնոյնս , բայց ոչ անհնարինս , կամ անկարելիս , քանզի յոգունք իրք են իյօդս, զորս տեսանեմք աջօք , եշօշափեմք ձեռօք , սակայն այնքան դժւարիմացս գոլ գտանեմք զնոյնս , մինչդի զկատարեալ ինչ ապացոյցութի , առ ի ամենեին հանգուցանել զմիտս առբերել ոչկարեմք .

Ձոր օրինակ , զիրս յառաջագործեալս մեզ տեսանեմք , բայց ոչ գիտեմք հաւատառդէս , թէ արդեօք տեսութիւն լինիցի իյաջս ներբերմամբ պատկերսոյն , եթէ արտաքս առաքմամբ , շնչոյն տեսողականի առ առարկայն : Եթէ ասիցեմք , թէ տեսութիւն արտաքոյ աչաց լինի . Պատասխանեն հակառակորդք , թէ զիարդ տեսողականն շու՛նչ , իսկոյն թարց յամելոյ սլանայ առ արեգակն , կառ առօտ զսբարձրագունէղս , առ ի կերպաւորել զտեսութի : Եւ թէ հիմ արդեօք հոգմն սաստիկ տարացրելով զտեսողականն շունչ , ոչ խտիանի զտեսութիւն . Եւ թէ մինչ աչք յերկնից ՚լիերկիր , կյերկրէ առարեգակն , կանտուստ ՚իլերինս ուղղեն զտեսողականն զօրութի , որսկէս անտի սցսր , կաստուստ անգր վաղվաղակի ընթանայ , կյետս դառնայ : Կամ զիարդ զառաջագոյն նկատեցեալ առարկայն իսկոյն իբացթողու , կղիմէ առայլ իմն .

Իսկ

Իսկ եթէ ասիցեմք, թէ տեսութիւն ՚իբիբս
աչոյ լինի. Պատասխանեն հակառակորդք,
թէ զիարդ արեգակն, և լերինք մեծամեծք ՚ըն
փոքեր բռնական պարունակին: Առ այս եթէ
ասիցեմք, թէ ոչ արեգակն կամ լերինք, այլ
պատկերք նոցին ՚իյաջս ներբերին. Կրկին
պատասխանեն հակառակորդք, թէ զի սրդ
պատկերքն այնոքիկ, կամ երևակերպութիւնք
մեծամեծք կարիցեն ՚ըն փոքեր ական ներ
զետեղիլ: Եթէ իւ պատկերքն այնոքիկ
հհեռատանէ մօտաբերին.

Հարցանեն ևս մեզ, թէ ստարկայն այն
զոր աչքն տեսանեն, ունի զմի միայն պատ-
կեր, թէ զբազումս. Եթէ ասիցեմք թէ ունի
զմի միայն պատկեր. Առարկեն թէ, Ուրեմն
իբազմայ նկատողաց մինն միայն կարէ տե-
սանել զստարկայն, որ նախապէս ներընկա-
լաւ ՚իյաջս իւրս զպատկեր նորին, այլոչ ա-
մենեբեան: Քանզի եթէ ամենեբեան տեսա-
նիցեն զնա, ՚իհարկէ եղիցին պատկերք բա-
զումք, լստ որքանութե նկատողացն.

Հարցանեն ևս, թէ պատկերք արեգա-
կանն, աստեղաց, լերանց, ծառոց և քարանց
մինչ զիմն ՚իյաջս, ուր մնան, ևս պատեն ա-
չոյն մօից. Առայս եթէ ասիցեմք, ՚իյօղ. .
Առարկեն թէ զիարդ ՚իմտանէն ՚իյաջս զիր-
Ը + Էսրս

էարս ոչ իբնաց մերժեն, ուր զի մինն նախա-
գոյն մտանիցէ քան զմիւսն : Կամ ընդէր
ամենեքեան իմիտին ոչ մտանեն առ ի կեր-
պաւորել զտեսութի :

Առարկեն ևս ասելով, էթէ պատկերքն
են արտաքոյ աչաց զետեղեցեալք իյօդս, ո՛ր
իժամանակի տեսութե՛ն յառաջբերէ զնոյնս
զի նկատիցին : Եւ թէ պատկերքն ըստ ին-
քեանց յառաջագային, զի՛ արդ ոչ խոտորին
կամ արտուղեն : Այլ Էթէ խիիցին աչք :
Կամ առայլ իմն առարկայ ուղղիցեն զտեսու-
թի, զինչ լինի պատկերն նախադիտեցեալ,
ոչնչանայ արդեօք, թէ դառնայ անդրէն
առ առարկայն, որոյ էր պատկեր, և թէ մնայ
իյաչս : Իսկ էթէ այլով իւիք յառաջագային
պատկերքն, ընդէր ինկատել ականն թիւ
բապէս, ոչ մօտաբերին ինոցունց .

Առարկեն ևս ասելով. էթէ գոյ առբէ-
բօղ պատկերացն, մի է արդեօք, թէ բազում
ըստ որքանութե՛ն պատկերացն, և տեսանո-
ղացն . մի՞ոչ կարե՛ գոլ, զի մի իր ոչ կարե՛ առ-
նման աչս զպատկերս առբերել . Իսկ էթէ բա-
զումք, զի արդ իժամանակի առմատուցման
պատկերացն ոչ վանեն զիրեարս .

Առայս էթէ ստիցեմք թէ ոչ իրք, և ոչ պատ-
կերք իրաց, այլ ճաճանչք իրաց գունով
և որա-

և որակութիւններէ ետեալք , իյաջս զտեսութիւն
կերպաւորեն , նոյնք տակաւին յարամնան
տարակուսութիւնք . քանզի թէպէտ ներհմտու
թիւ գիտեմք , թէ յիւրաքանչիւրոց կիտից որք
են շուրջ զառարկայիւն , և յամենից կողմանց
շրջաբերութեն , զառարկայն յառաջադրե-
ցեալ տեսանեմք . և թէ իւրաքանչիւր դուզնա-
քեայ մասն լուսոյն զիրն զայն մեծ մեզ երևեցու
ցանէ . Սակայն անգիտանամք զեղանակ նո-
րին . Վսկի եթէ իւրաքանչիւր մասն լուսոյն
զիրն զայն մեզ երևեցուցանէ . Ուստի է զի
՛ըն մեծի իմիք հայելւով յառաջադրեցելում
մի միայն պատկեր երևիցի , որով հետև բա-
զումք են մասնկունք ներտպեցեալք ՚ինմա :
Եւ եթէ հայելին այն իբազումս մասնկունս
բաժանիցի , իսկոյն ՛ըն յիւրաքանչիւրում
մասնկան հայելւոյն պատկերն այն երևեսցի :
Արդ ուստի է , զի լոյսն այն մեծ ՚իմասնկունս
անջատեցեալ զպատկերս բազումս երևեցու-
ցանիցէ . Այսօրիկ ամենեքեան արդարեւ
ասեմք են դժուարինք , բայց ոչ անհնարինք
վս դժուարութեյն , զի զայսօսիկ այսպիսիս
գոլ տեսանեմք , բայց զորպիսութիւն սոցին
անգիտանամք .

Չոյն ասեմք ևս յաղագս զգայողութե-
նս : Գանգի մի ձայն բօլորասպէս , և կայ
ստար

տարելապէս ՚իլսելիս բազումն ներմտանէ օ
 և ոչոք կարէ տալ զպատճառն , թէ զհարգ
 միով ձայնիւ անբաժանելեալ այս եղիցի :
 Ձի յորժամ էս բարբառիմ , դու և ամենե-
 քեան , որք կայք զինն լսէք զձայն իմ . բայց թէ
 որով եղանակաւ մասնկունք յօդոյն ժամա-
 նեալք ՚իյունկս տարածեցին ընդ բնաւ յօդն
 զբոլոր ձայնն իմ անգիտանայք . Ձոր օրինակ
 յորժամ խօսի ոք պարսկերէն , կամ արապե-
 րէն , և կամ հայերէն , կերպագրէ լեզուն
 զչոունչն ՚իյօդս թէ արտաբերմամբ , և թէ կեր-
 պիւ իւրիք ներամփոփմամբ , իսկ յօդն վաղ-
 վաղակի զնոյն ձայնն մինչև ՚յլսելիս հասուցա-
 նէ , բայց թէ որով եղանակաւ այս եղիցի ան-
 գիտանամք .

Դժուարին ևս է առ ՚ի մտածել , թէ ո՞ւր
 սակաւինչ հուր այնքան սաճէ , մինչզի զքա-
 զաքս մեծամեծս և զմայրիս լայնատարածս ալ-
 բիցէ , ՚նորս ոչգոյր հուր . Արդ զայսոսիկ
 այսպէս լինիլ տեսանեմք , բայց զեղանակ
 սաճեցմանն անգիտանամք :

Ձարմանալիկ և ևս , զի ՚իյսական թօթա-
 փելն ՚իմիոյ ճրագէ հազար ճրագունք լու-
 ցանին , և բոց առաջնոյ ճրագին ոչինչ կեր-
 պիւ նուազի : Արդ զայսպիսիս հանապա-
 զօր՝ տեսանեմք , բայց զպատճառ եղելու
 թնն

Թէն անդիտանամք : Սակայն ոչ վնայնորիկ ստորասեմք զնոյնս գոլ անհնարինս , վն ոչ ունելոյ զպատճառս ինոցունոց .

Դարձեալ գիտեմք , զի աշխարհ էզերեցեալ է և ծայրունակ , վն զի է եղական , քանզի ամ եղական զծայր ունի և ընդ սահմանաւ պարիակի , բայց զկերպ էզերեցման նորին ոչ իմանամք . Եւ թէ կամիցի որ սահմանաւ գրել զէզերս նորին , իսկոյն խնդրի ինմաննէ թէ զինչ իցէ անդրքան զնոյնս . զի էթէ պատասխանիցէ զոչինչ գոլ , հակամարտի մտի իւրում . որ ստորասե զհակառակն : Իսկ թէ ասիցէ գոլ զտեղի ինչ . իսկոյն եզրուկացունի , թէ գուցէ ևս աշխարհ :

Առ այս ոմանք տգիտաբար ասացին թէ ծայրունք աշխարհի լերինք են , և անդր քան զլերինս ծով . Եւ թէ գուցէն հրեշտակք ոմանք , որք կրիցեն զաշխարհ , զիմի անկանկիցի . Բայց հակադրի նոցա սյսպէս , ծովն սոյն և հրեշտակք ոչ են իմեջ աշխարհի , ուր ուրեմն իցեն , և անդր քան զգոսա զինչ իցէ , միթէ ամ գոլով ամենակարօղ , ոչ կարէր զաշխարհ այնպէս ստեղծանել , զիմի անկանկիւր , և էթէ անկանկեր , յո արդեօք անկանկեր , որովհետև ոչ գոյ տեղի : Իսկ էթէ գոյ տեղի , ուրեմն գոյ և աշխարհ : Ապառ
րեմն

ութիւն աշխարհ ըստ որում անարած, է ծայրու-
տակ եւէրջունակ, բայց թէ ըստ որում ոչ
դիտեմք .

Դարձեալ մինչ իմիտածեմք զստեղծագոր-
ծութի աշխարհի, և ժամանակի, ասեմք, թէ
ոչոք իստեղծութեան ունէր զլինելութի իւր
նախքան զստեղծանիլն, ուրեմն և ժամա-
նակն նախքան զլինիլն իւր, ոչունէր զգոյ-
հայց իմացողութիւն մեր ըստ համոզմանն
Արիստոտելի որդէ զմեզ ասել, թէ նախկե-
տին այն յառաջ քան զարարչագործութիւն
իմանեցեալ իցէ ժամանակ, որովհետեւ նախ-
կետութիւն, և յետեւութիւն են տարբերութիւնք
ժամանակի .

Եւ յայտմանէ սուարկեմք թէ, ուրեմն գոյր
ժամանակ, նախքան զժամանակ, իսկ ժամա-
նակն ոչ կարէ գոյ ստանց աշխարհի . Ապա
ուրեմն, և աշխարհ գոյր նախքան զլինիլն
իւր : Բայց այսոքիկ են անհնարինք, զի գոյն
նախքան զլինիլն, սցսինքն, մինչ ոչ գոյր, է
հակասութի : Վս զի դիտեմք, թէ ամ ետկ
իցէ ստեղծեցեալ իցեութէ ւոյ բարձրելոյն,
և ունիցի զսկիզբն իւրոյ լինելութեւն . Բայց
զայստակ մեք դժուարաւ իմանամք, սակայն
ոչ վնայնորիկ ստորասեմք զնոյնս գոյ անհնա-
րինս, զի ան իցոչնչութէ ի գոյութի եւծ
զարու-

զարարածս, ուրեմն էր երբեմն զի ոչէին
կշեռոյ եղեն .

Այս ևս է՝ դժուարին առ'իյիմանալ, զի
յերկինս զբազում ինչ տեսանեմք, բայց թէ
որով եղանակաւ լինիցին անդիտանամք,
այսինքն, թէ զխորդ արեակայութիք և գիշե-
րահանգիտութիք իտեղեացն իւրեանց շար-
ժեցան կշեռս ընկրկեցան զքսան և ութն աս-
տիճանօք, և նոր օրն, այսինքն, մուտ արե-
գականն իխայն, որ'ինախնուին հանդիպիւր
նառաջնում աստիճանի խոյին, այժմ հանդի-
պի ներկորդում աստիճանի ձկանն. Եւ աստե-
ղքն անշարժք և անմոլարք իտանեն իւրեանց
չուեցին յայլ տուն. Ուստի նորադոյնք աս-
տեղաբաշխք, և երկբաշափք զերկուս զօտիս
կենդանակերպականս վարկանեն, զմինն կո-
չեն աստղալից, և զմիւսն թափուր յաստե-
ղաց : Այլ և աստեղքն մոլորականք փոխեցին
զվերնակողմն իւրեանց և զներքնակողմն, այս-
ինքն, զտեղիս բարձրագունիս և զցածագու-
նիս ; Իսկ իմաստասուրք ի փոփոխմունս և ի
տարբերութիւն սոցլին հայելով հակառակ իրե-
րաց խօսեցան . Ուրեմն կամ սքա կամ նոքա
և կամ երկաքանչիւրն մոլորեցան . Եւ այս վս-
տինք եղև, զի զկատարեալ հաւաստութի ոչ
զաին վս դժուարիմացութե առաջակային .

Դար-

Դարձեալ, որք հետեւին աստեղաբաշխութեան, թէ աստեղք յերկինս սեւեռեցեալք գոն ոմի ոստիփսցտի, և բեւեռիտակի, և թէ շարժին միայն իշարժիլն երկնից, յորս գոն սեւեռեցեալք, և այսպէս զերկուս շարժութիս ներհակս, ընմիում շարժակասում սահմանադրեն, իբր թէ նոյն շարժելին իմիում և ինոյնում ժամանակի յարեւելից յցարեմուտս, և յարեմոից յցարեւելս շարժիլ կարիցէ: Արդ եթէ ճշմարիտ է այս, ուրեմն մոլորեցեալք են իմաստունքն, որք ուսուցանեն զմի և զնոյն շարժելին իմիում և ի նոյնում ժամանակի ոչ կարող գոլ արտածել զերկուս ներհակս շարժողութիս: Իսկ եթէ իմաստունքն ուղղապէս խօսեցան, ուրեմն աստեղաբաշխքն են մոլորեցեալք, որք ոչ գիտեն զինչ ասեն.

Առ այս պատասխանեն աստեղաբաշխք, թէ երկին է իբրև զանիւ իմն, և աստեղք են իբրև զմրջիւնս ի վր անուոյ, և յորժամ անիւն յարեւելից յարեմուտս թաւալի, մրջիւնքն յարեմոից յարեւելս ընթանան. Արդ այսպիկ շարժութիք ոչ են ներհակք, ուրեմն կարեն պատկանիլ երկնի և աստեղաց: Պատասխանեմք, թէ օրինակս այս, ըստ ինքեան է ճշմարիտ, սակայն ոչ յարմարի օրինակեցելոյն, քանզի

քանզի անիւն եմըջիւնն էն երկու իւր շար-
ժականք , զմ որոյ կարեն ունել զերկուս շար-
ժութիս ներհակս միմեանց . Բայց երկին ևս
տեղքն բնեռեցեալք ինմա առնեն զմի միայն
իւր շարժական . Ուստի էթէ որ սպանանի-
ցէ զմըջիւնս զետեղեցեալս ի վի անւոյ , և առ-
նիցէ զնոսա անշարժս , ըստորում էն ոստք ի
միայտի , ոչ ևս երևեսցին ինմա երկու ներ-
հակք շարժութիք , սյսպէս ասելի է և զառ-
տեղաց .

Դարձեալ նորագոյնք աստեղաբաշխք ըզ
հրատն , որէ ըն հինկերորդում երկնի և քան
զարեգակն բարձրագոյն , մինչ իստորձագոյն
կէտն ժամանէ , ասէն գոլ ցածագոյն քան
զարեգակն ; իսկ զլուսաբերն , որէ ստորնա-
գոյն քան զարեգակն , և մերձաւորագոյն երկ-
րի . մինչ ի վերնագոյն կէտն հասանէ , ասէն
գոլ բարձրագոյն քան զարեգակն և հեռաւո-
րագոյն յերկրէ : Արդ՝ էթէ սուտ է այս , ու
բեմն իսոսցունց զհաւաստի գիտութի ունել
ոչկարեն : իսկ էթէ ճշմարիտ է , ուրեմն հառ-
տատուն իմն է ասացեալն , թէ աստեղք ի
մէջ օդոյն զսկեռումն ոչունին , այլ ըստ
ինքեանց շարժաբերին .

Դարձեալ ասի , թէ ի ժամանակէ Հիփար-
կոսի մեծի աստեղաբաշխին մինչև ցայժմ , որք
էն

Էն ամբ 1700. մերձեցեալիցէ արեգակն յերկիր . 1100000. մղոնիւք . Բանս այս կերպիւ ինչ համաձայն ճշմարտութե տեսանիքսն զի իդարս մերձակայս Երևեցան յերկինս աստեղք բազումք , որք նանցեալս ժամանակս ոչէին երբեք նշմարեցեալք , յորոց չորքն են շուրջ զլուսնթագիւն , և երկուքն շուրջ զերևակիւն : Արդ՝ Էթէ սուտ է այս , ուրեմն իձեռն տեսութե ոչինչ իմանի : Իսկ Էթէ ճշմարիտ է , ուրեմն աստեղք ոչեն բեռեցեալք յերկինս իբրև զոստս իփայտի , քանզի Էթէ այսպէս էր զի արդ աստեղքն , որք շուրջ են զերևակիւն և զլուսնթագիւն , կարեն Երևիլ ինքեքոյ և ի վերոյ նոյն . արդեօք զմուտս կամ զպատուհանս ինչ ունիցին, ընդ որովք անցեալք իջանիցեն ի սոնարհ , և ելանիցեն , ի վեր : Այսքիկ ամենեքեան են զժուարիք , քայց ոչ վասն այսորիկ անկարելիք .

Դարձեալ տեսանեմք, զի արեգակն ընթանայ շարժմամբ թաւալականաւ , և շրջաբերականաւ , այլոչ ուղղաբիւ գնացմամբ , վն որոյ ստորասեն բազումք թէ ինմին, այլև թէ յայլս աստեղս իցէ լինելութի և ապա Կանութի : Էթէ Երբեմն բարձրանայցեն և երբեմն ցածանայցեն : Այլև թէ իտրամադծին իւրեանց , հզօրագոյնք իցեն , իստունս
հետ

Հետակայս սակաւազօրք , իսկ Իտունս տա-
րակայս ամենեւեմ տկարագոյնք : Բայց մեք
վաղուրեմն առփորձեցաք և հաստատեցաք ,
թէ համայնք կեաք երկնից , առ որս շրջաբե-
րին աստեղք , իցեն արեւելք և արեւմուտք ,
բարձունք , և ցածունք : Ապա ուրեմն արե-
գակն և աստեղք ամենեքեան ըն յիւրաքան-
չիւրում կիտի բոլորակին իւրեանց լինին
և ապականին բարձրանալով և ցածանալով :
Եւ հետևապէս իւրաքանչիւր տուն երկնի
տրամագծական , եղիցի հետակայ , և տարա-
կայ : Եւ ըստ այսմ աստեղք ամենեքեան եղի-
ցին միշտ զօրեղք և անզօրք , կարօղք և տկարք :
Իսկ եթէ այսօրիկ այսպէս իցեն , մեծ իմն դըժ-
ւարութիւն է և անկարութիւնս : Եւ եթէ ըստ
նկատման աշխարհն այսպէս թուիցին , կրկին
դժուարութիւն է , որոյ զպատճառն ոչ գի-
տացին :

Բայց եթէ ասիցեն , թէ աստեղք ոչ ըստ
ինքեանց շտրժին , այլ ընդ երկնից . Առայս
հարցանեաք թէ ո՞րք եւ իցէ շարժողն այն :
Արիստոտէլ , զոր կարծեն գերազանցագոյն
քան զայլս ի գիտութիւն և յիմաստութիւն , առե-
լէ հրեշտակք , որք նստին յարեւելս շարժեն
զերկինս . Ուրեմն ըստ բանից նորին ըն
բնաւս կէտս երկնից պարտին զոչ հրեշտակք ,

որով հետեւ իւրաքանչիւր կէտ երկնից է եւ արեւու և մուտ նորին : ըստ որում ցուցաք :

Բայց հարցանեմք այժմ, թէ զիարդ արեգակն մարմնական գոլով իմիռւմ ժամու զննդ ետասան աստիճանս շրջաբերութեն երկնից կատարիցէ ; Եւ թէ զիարդ իծագելն նորին, իսկոյն շառաւիղքն թմրց յամելոյ յարեւմուտս ժամանիցեն :

Դարձեալ իմաստասերք, որք ուսուցին թէ արեգակն և աստեղք զգնտիւն երկրի շրջաբերիցին, կամ թէ գունտն երկրի միայն շարժիցի, և կամ երկաքանչիւրն իմիասին, այսինքն, աստեղք յարեւելից ջարեւմուտս, և երկիր յարեւմտից ջարեւելս, նոքա և ոչ զմիւս երկնից գիտացին, քանզի ոմանք ինոցանէ ինն զոլ զերկինս ասացին, ոմանք երկուտասանս, և այլք վեշտասանս . Եւ առ ի հաստատել զայս հռչակեցին, թէ առաջին շարժունն իւրով արագիւ ընթացմամբն զայլս բնաւս պարունակեցեալս քարշէ յարեւելից ջարեւմուտս, Բայց տշտորիկ յառաջադրութե զոչինչ պատճառ առբերին :

Իսկ մեք գիտեմք հաւաստեալ, զի շարժողին, և շարժեցելոյն հարկէ գոլ իմիասին, կամ ըստ գոյացութե և կամ ըստ դօրութե : Բայց գոյացութի նախկնոյ և առաջնոյ շարժողին

Ժողին յոյժ տարակացեալէ յայլոց շարժե-
լեաց, ուրեմն ըստ գոյացութե ոչէն իմիասին:
Այլ ոչ ըստ զօրութե, ոպգի զօրութի, նախ-
կնոյ շարժողին առայլս շարժելիս հասա-
նիցէ:

Չայսոսիկ և զայլս սոցին նմանս ասէն, բայց
զբանս ոչ առբերեն, այլ յենուն միայն իխօսա-
Արիստոտէլի, զոր իբրև զմարգարէ առննդու-
նին, և ոչ իմիտ ասէն զաջացեալն Գաւթի
մարգարէին ըն սաղմոսին II 5. Էս ասացի
իյափշուծե իմում թէ ամ մարդ ստասաց է:
Այլ հաւատան մանաւանդ Արիստոտէլի
քան թէ բանից մարգարէիցն ամ, ընդ որս ամ
խօսեցաւ: Էւ վն այսորիկ զիրաց ամայնոց
զբան պատճառի խնդրեն: Բայց զորսիսիս
պատճառս յառաջբերին իմաստաստեք, որք
ասէին, թէ գունան երկրի իմէջ օդոյն կա-
խեցեալ կայ և մնայ, իբրև զծանր ինչ իմէջ
թեթևոյն և ոչ անկանի. Ասեմ թէ և ոչ զմի:
Առայս, առասպելաբանէն ոմանք, թէ ինէր-
քոյ երկրի այսորիկ իցէ սյլ իմն երկիր, որ
կրէ զայս, զիմի անկանիցի, և ինէրքոյ նորին
միւս իմն, մինչև յեօթներորդն. Իսկ ինէր-
քոյ եօթանց երկրաց այսորիկ իցէ եզն, և
ինէրքոյ եզին ձուկն, և ինէրքոյ ձկան
լեառն, և ինէրքոյ յերին ծով, իսկ ինէրքոյ

հորին հողին : Արդ՝ եթէ այսօրիկ ստոյգք փցեն , 'իհարկէ կողմն այն ներքնագոյն , զոր մէք ոչ տեսանեմք , եղիցի մեծագոյն քան ըզ կողմնս զայս 'յորում եմք : Բայց տեսանեմք ներ հմտութի , զի կիսագունտն մեր հաւասար է ընդ միւսում կիսագնտին . քան զի կենդանակերպիցն երկուսսանից վեցն միշտ են 'ի վերոյ կիսագնտիս , և վեցն 'իներքոյ , ևյոր ժամ մինն 'ինոցանէ 'յարեմուսս իջանէ , միւսն 'իներքուստ 'յարեւլս ելանէ . ուրեմն երկու կիսագունտքն հաւասարք են միմեանց :

Դարձեալ՝ 'ի ժամանակի գիշերահանգիտութե , արեգակն զայնքան ժամանակս յամէ 'իներքոյ երկրի , որքան 'ի վերոյ , ուրեմն երեւոքեան կողմունքն հաւասարք են :

Դարձեալ՝ մէք ընդ ոլորտս տիեզերաց շրջեցաք , ևստուգիւ տեղեկացաք , զի ոչինչ 'ի վերագեցելոյն 'իներքոյ մեր գտանի . Այլ երկիր գոյ կախեցեալ 'իմէջ օդոյ թարց ձեռնկալութե , ևնպաստութե ուրուք . Եւ ունիկողմանէ 'յայսմանէ ոչինչ անկանի 'իյերկինս , նմանապէս է և 'իկողմանէ 'յայնմանէ : Եւ որ թուի մեզ զարմանալի իմն , թէ ունի բնակիչք այնորիկ կողման ոչ անկանին , այլ ուղղակացութի ճեմեն , գլխովք 'իյերկինս առուղղեցելովք , ևտտիւք 'յերկիր . Զի ունի մէք աստ բնակեցե՞

կեցեալքս 'ոչ անկանիմք 'ի յերկին , այսպէս
էն և անդ բնակեցեալքն :

Եւ ոպ մեք կարծեմք թէ հակոտնեայքն
բնակիցյն անդ 'ի վայր ունելով զգլուխս խ
րեանց , նոյնպէս և նոքա կարծեն վս մեր ;
Ուրեմն յայտէ , զի 'իտեսանելեացս և 'ի զգա
լեացս զբազում ինչ գիտեմք , որոց զպատճառն
անգիտանամք , սակայն ոչ վսայնորիկ ասեմք
զնոսա գոլ սնհնարինս :

Դարձեալ մեք մարդիկ , զիրաց ամայնոց
զգոյն ինչ գիտեմք , զոր և 'ի յըստեղծութեանս
համահաւաստեմք , ըստ որում խօսեցաք 'ի վե
րոյ մինչ ճառեցաք զգոյութենն այ : Բայց
զեղանակ գոյութեն նորին ոչ մարդիկ , այլ
ինքն ամօմիայն գիտէ ; Եւ թէ ասիցէ որ , թէ
էս ծանեայ զնա , սուտ է , քան զի այն , զոր
ծանեաւն է իր ինչ մտացածին , ըստեղծե
ցեալ , եզերեցեալ , և սահմանեցեալ , այսինքն ,
'ի մտի նորին պարագրեցեալ , որ ոչ կարէ գոլ
էութի այ , որ է անեղր , անպարագրելի ,
անսահմանելի , և 'ի յեղականէ իմացողութե
մարդկայնոյ անքննելի :

Ուրեմն ոչոք 'ի յըստեղծութեանս զեղանակ
գոյութենն այ մտօք ըմբռնել կարէ :

Դարձեալ ամէ անբովանդակելի , զի 'յոչ ու
մեքէ պարփակիլ կարէ ; այլ բոլորն է 'ըն բո

ըրում աշխարհի, եբոլորն արտաքոյ բոլորի աշխարհի : գոլով 'իներքս, ոչինչ 'իյիւրոյն անտի արտաքոյ գտանի, ևգոլով արտաքոյ ոչ իմն 'նորին մնայ 'իներքս :

Դարձեալ՝ հաւատամք զմծ յաւիտենական գոլ, առաջի որոյ անցեալք, ևապառնիք անզանազանք են, ևեղեալք ևլինելոցք եբրև 'ներկայք. բայց թէ զխարդ իցէ այս անգի տանալք, վն զի անցեալք, ևապաղայք համեմատեցեալք ընդ կայութե մերում զէակութի ոչունին, և թէ որպէս երկաջանչիւրքս այսոքիկ առանց էակութե առաջի այ զբոլունիցին, անհնարին թուի մեզ, զոր օրինակ, աշխարհ 'տախքսն զլինիլն իւր, ևօր դատատանին չեւս եկեալ, առաջի այ անզանազանք են, բայց մեզ յոյժ դժւարինք առ 'ի յըմբռնել. Օսյոտսիկ հաւատամք հաստատապէս զի էութիւն այ է իմաստութի 'նորին, որոյ բոլորն միանգամայն է անփոփոխելի, անաճելի, ևաննուազելի. Ուրեմն զորինչ միանգամ տեսնե, յաւիտենականապէս տեսնե, ուն յառաջքան զլինիլն աշխարհի, 'նոյնպէս ևայժմ :

Բայց թէ որով եղանակաւ զիրս չեւս ստեղծեցեալս, ևզոչենթակայացեալս իմաստութիւն այ 'նկատիցէ, մեզ դժուարին թուի,
ևանհա-

ևսն հասանելի իմացողութե :

Դարձեալ զիտեմք զի ան է ամենակարօղ , մինչդի զԲԻՐ հաղար աշխարհս ամին նմանս ստեղծագործել կարիցէ . Բայց իմաստունք աշխարհիս այսորիկ սաւն , թէ յոչնչէ ոչինչ լինի , զի ոչ իմացան թէ յոչնչէ իրինչ կարիցէ լինի :

Արդ այսորիկ զորոց մինչև ցարդ ճառեցաք յոյժ գօւարինք էն , և երևին մտաց մերոց իբրև անհնարինք . վս զի որովհետև էութիւն այ է անհուն , որինչ տեսանի ինմա , եղիցի ևս անհուն , իսկ իմացողութիւնն մեր գոլով դուզնաքեսց , նւաղի յայսպիսիս նկատմունս և վերջանայ : Զի էթէ իրք բնականք , և հարկաւորք , զորս իպատճառաց կարեմք հաւաստել , թուին մեզ գօւարինք , որքան գօւարագոյնք և անհնարինք թուիցին մեզ իրքն գերբնականք , զորս իմանալ , և հաւաստել ոչ կարեմք :

Ի իմեսցուք ուրեմն առանձ , և առ մարգարէս նորին , և իննդրեսցուք ուղղիւ սրտիւ , զհաւատս հաստատունս , առ ի խոստովանիլ զճշմարտութիւն զայսոսիկ , մինչև յհեղուին արեան էթէ հարկիցէ : Որոց թէպէտ իմացւածն գօւարին իմն թուի մարդկայնոյ կարողութե , և զքանս առ Բերեցեալս ոչ կարէ

բովանդակել , վն ոչ անկանելոյ նոցին ընդ զգայութիւն , սակայն իձեռն տեսութեց զգալեաց կերպիւ իւրիք կարե լուսաւորիլ , եիմա նալ զնոյնս :

Ասեմք ուրեմն թէ զամինչ , զոր գիտեմք , և ճանաչեմք է գուցնաքեայ մասն իմն յսնգիտելեայն անտի , քանզի մեք ըստ բնականի մերում կարողութե ոչ զամ ճանաչեմք և ոչ զհրեշտակս տեսանեմք . և ոչէն զարմանք , զի էթէ ինեւքոյ այսորիկ լայնատարածի օդոյս զպարունակեցեալս անգիտանամք , զիարգ գիտիցուք զայնս , որք էն արտաքոյ , քանզի ովէ որ գիտէ , և ճանաչէ զայնոսիկ , որքէն իխորս ծովու , և իծոցս երկրի , ով ծանեաւ զձկունս համայնս զմեծամեծս , և զփոքրկունս , զբնաւս ծառս անտառոց , զբոյսս , զխոտս , զտերեւս զծաղկունս , և զպտուղս նոցին զանազանս , զտեսակս , և զեղանակս բուսանելոյ նոցին , և աճելոյ . և ովէ որ գիտաց զգորութիւնս , զտարբերութիւնս , զյատկութիւնս , զորակութիւնս , և զքանակութիւնս նոցին :

Ով իմիտ ածել կարէ , թէ իձեռն նշուից արեգականն համայնք տունկք , և արմտիք բուսանիցին , և պտղաբերիցին . էւթէ իձեռն աղղմանց ճառագայթիցն աստեղաց զանազանապէս գունաւորիցին . էւ կամ ով թւել կարէ

րէ զշիթս անձրեաց , զտերևս ծառոց , եզլաւ
ւազ ծովու :

Ով իմացաւ զաղբիւրս ջուրց , զգետս եզծովս
թէ ուստի էլանիցեն , ե՛յո հեղանիցին , ե՛նով
գիտաց զօրքանութի ալեաց ծովու , ե՛հողոյ
երկրի : Ով վերահասու եղև լինելութե՛ զանա-
զանից գունոց , հոտից եւ համոց . ե՛նով ծա-
նեաւ թէ զինչիցէ ՚ի վերոյ , ե՛ինչերքոյ երկրի :
Ով իմացաւ զգանձս հողմոց , ե՛ւ քանց , ե թէ
ուստի հնչիցեն ե՛յո դիմիցեն : Գիտեմք զի
զօրութե՛ն այ գործին այսօքիկ ամենեքեան ,
բայց զեղանակն օրով գործէ անգիտանամք :
Ոչ ապաքէն զարմանալի իմն է , զի ՚իսակա-
ւու սերմանէ յերկամանց սնտի արտահոսե-
ցելոյ կերպանան մարդիք , եւ ունց աշխա-
տութե՛ն ձեռաց հիանալեալ իւրիք արուես-
տագործութե՛ն ձեակերպին աչք , եւ գործիք տե-
սանելոյ , ականջք , եւ գործիք հոտոտելոյ . բե-
րան , եւ գործիք ուտելոյ , լեզու , եւ գործիք
խօսելոյ . ձեռք , եւ գործիք շօշափելոյ . ոտք
եւ գործիք գնալոյ , եւ այլք զգայութիք ներ-
քինք , եւ գործիք նոցին պատշաճաւորք առ
զանազանս գործս , թէ առհողեկանս , եւ թէ
առ մարմնականս : Եւ միթէ իցէ ոք , որ կա-
տարելապէս իմանայցէ զայսօսիկ թէ որպէս
եղանիցին , եկամ գիտայցէ , թէ զի՛արդ
կեն

Կէնդ անիք ոմանք ծնանիցին առանց սերման, որպիսիք են որդունքն իմէջ ինծորոց, ևս անորոց, ևայլոց իրաց նիւթականաց: Էւ իամ որպէս իսխտորէ, որ զորդունս սպանանէ ծնանիցին որդունք. Ովոք ոչ զարմանայ զծառս, և զտունկս տեսանելով, որոց թէև ամենեցուն հասարակ կերակուր, և սպորուստ երկիր միայն է, տակայն յառաջածեն զտերևս, զծաղկունս, և զմիրգս տարբերս յիբերաց. և ովք ոչ հիանայ իդիտելն զծաղկունս. և զբոյսս երկրի բազմեցանոցօք զունովք զարդարեցեալս, և այժնեցեալս: Արդարև ասեմ, ոչգր:

Ապա ուրեմն զորինչ գիտեմք հիւլլէ իմն է, իսկ զոր անգիտանամք գերազանցեն զսահմանօք: Դարձեալ՝ զորինչ գիտեմք, անկատարապէս գիտեմք, և մեկուսապէս իճշմարտութեց: Ջի եթէ ասացելոյն իմաստասիրաց զուկն դնիցեմք, զչնչութի գիտութե մերոյ դիւրաւ ճանաչեմք. Ջի ստեն իմաստասերք, թէ յայնժամ զիրինչ ճանաչեմք, յորժամ զպատճառ նորին հաւատտեալ գիտեմք, ուրեմն եթէ զպատճառս իրաց անգիտանամք, անգիտացեալք մնան ևս իրքն գիտելիք: զոր օրինակ, սո՛րի ճանաչել զթուղթս զայս կատարելոսպէս, պարտիմք գիտել զպատճառս սորին:

նորին , այսինքն , զնիւթականն , զարարչականն , զտեսականն և զվախճանականն :

Այլ զպատճառս պատճառաց մինչև 'յառաջին պատճառն , այլ մէք զոչոք 'իսոցանէ սմբողջապէս՝ գիտեմք , և ճանաչեմք , ուրեմն և ոչ զսա , ըստ որում ճանաչելի է ճանաչեմք : Քանզի առայս պիտոյէ գիտել զեռւթին , զորակութին , զքանակութին , զառնչութին , և զամ' ինչ որ է 'ինմա , այսինքն , վերմանութիս , զաննմանութիս , զհանգիտութիս և զանհանգիտութիս , զտեղին , զկայն , զհամեմատութիւն առայլս , զմերձաւորութիւն , և զտարակացութիւն : Ըստ այսմ , և 'ինկատմունս երկնայինս , 'նորս պիտոյէ զդուշապէս գիտել զբեւեռս հիւսիսային , և հարաւային , զհաւասարութիս տուրնջեան , և գիշերոյ , զաստեղս օգտակարս , և զլիստակարս , զժամ՝ ծննդեանն , զշրջանակս երկնից , և աստեղաց , զհայեցմունս , տրամագծականս : և զտարակացականս , և զայլս սոցին նմանս : Արդ՝ ո՛ր է , որ զայս ամանսխալապէս գիտիցէ , ուրեմն և ոչ զիրն ճանաչելի ստուգել կարէ :

Դարձեալ՝ մէք մարդիքս ճանաչեմք միայն զպատահմունս էական , և ոչ զգոյացութիս 'նոցին , քանզի ըստ որում իմաստասէրք վկայեն , Ոչինչ է 'իլմացողութիւն , որ ոչ լեալ իցէ նախ

Նախ իյղղայու թիւ . իսկ զյայու թիւ զպատահ
մունս իրաց միայն ըմբռնեն , այսինքն , աչք
զգոյնս , ականջք զձայնս , բերան զհամու ,
քիթ զհոտս , շօշափելիք զջերմն , զցուրտն ,
զդէճն , զչորն , զկարծրն , և զկակուղն . Արդ
այսոքիկ էն պատահմունք և ոչ գոյացութիւք ,
ուրեմն իմացողութի մեր ճանաչէ միայն զպա-
տահմունս , և զպատկերս նոցին , և ոչ զգոյա-
ցութիւն :

Իսկ եթէ ասիցէ ոք , թէ իմացողութի մեր
հետաշօտելով զայսպիսիս պատկերս , ճանա-
չէ զգոյացութիւն էական միջնորդութիւն նո-
ցին : Պատասխանեմք առ այս , թէ ուրեմն
զիրն զայն բազարձակապէս ոչ ճանաչէ :

Աստուտ՝ Արիստոտէլէս համարեցեալն
իմջ փիլիսոփայից գերազանց , իսահմա-
նելն զէական , ոչ ասաց թէ զինչ իցեն , այլ թէ
զինչ առնիցեն , և կամ ուրանօր իցեն : Ըստ
որում իսահմանելն զյնութիւն ասաց : Թէ բնու-
թիւն է սկիզբն շարժման , և զաղարման իրին :
Էւ թէ հոգին է ներգործութիւն , և կերպ
մարմնոյ կենդանւոյ : Էւ թէ լոյսն է կերպ
թանձանցիկ մարմնոյ : Էւ թէ որակութիւն է
ըստ որում որակք ասիմք : Արդ՝ ստոյգ է զի
շարժումն , և զաղարումն եղանին ի բնութեւն ,
և հոգին է կերպ մարմնոյ կենսունակի , այլ

ոչ կենդանութեան անընդունակի : այսպէս լոյսն լուսաւորե զմարմինն թափանցիկ , այլ ոչ զմարմինն անընդունակ լուսոյ : Բայց թէ զինչ իցէ որակութիւն , կենութիւն , կհոգի կլոյս , ոչ բացայայտեաց , քանզի ոչ էտես զգոյացութիւն իրաց , այլ զպատահմունս կզպատկերս , որովք գոյացութիւն ոչ իմանի կատարելապէս :

Ասեմք ուրեմն , թէ զորինչ աստանօր շարագրեցաք , կզորքնչ թողաք համառօտութեան աղաքաւ , դժւարինք էն , այլոչ անհրեարինք , քանզի սոցա ամենեցուն էն թակասութիւն յաշխարհի աստ գոյ յայտնապէս : զորս առ ի յիմանալ , թէպէտ աշխատեցան մարդիք իզանազանս խուզմունս կհարցաքննութիւն , սակայն կատարելապէս վերահասու լինիլ կճանաչել ոչ երբեք կարացին : Ուստի ասէ Սողոմոն , իցիրս էքլէզիասդէայ իգլլուխն 3. ի թիւն 10. տեսի զտառապանս , զորս էտ ամօ որդւոց մարդկան , զի զբաղիցին ինտսին : Կ'ի թիւն 11. Չբնաւօ բարիս արար ի ժամանակի իւրում , կզաշխարհ աւանդեաց տրամախօհութեանցին , զի մի գտանիցէ մարդ զգործն , զոր գործեաց ամօ յրս կզբանէ մինչև յովախճան : Եւ արդարեւ ճշմարիտ է սոյն , զի իմաստունք աշխարհիս այսօրին

բիկ մինչև 'ցայսօր զհակառակս, և զանհա-
րինս անթուելիս խօսեցան ընդէմ միմեանց,
և մինչև 'ցկատարած աշխարհիս վիճաբանու-
թիք նոցին ոչէն սպառելոցք, զի զգործս
զորս անբաւ իմաստութիւն այ գործեաց, որ-
դիք մարդական ոչէն բովանդակելոցք: Ուրեմն
զորինչ համարիմք գիտել, խուն ինչ մասն է
անգիտելեացն: Ապա ուրեմն թէ զիրս ստե-
րանկեցեալս զգայութեց մերոց ոչ իմանամք
սակս 'նուաստութե՛ն ճանաչման մերոյ, զիարդ
իմասցուք զայնոսիկ, որք ընդ զգայութեք մե-
րօվք ոչ անկանին: Եւ եթէ զայնոսիկ, զորս
առեսանեմք, անկատարապէս գիտեմք, և ան-
կատարապէս առհաւաստեմք, որպէս կա-
րասցուք կատարելապէս իմանալ, և պատճա-
ռօք քանի ցուցանել զայնոսիկ, զորս ոչ տե-
սանեմք: Եւ եթէ զէակս, զորս ստեղծեալ է
ամենակարօղն ամօ ոչ կարէ բովանդակել
մարդ, ըստ Սողոմոնի, զիարդ զստեղծօղն
նոցա բովանդակել մարթիցի: Եւ եթէ զմարդն,
որ է աբարած ինչ, ոչ ճանաչեմք իսկապէս,
զիարդ զարարիչն 'նորին անտեսանելի ճանա-
չել կարիցուք: Եւ եթէ մարդ վսեմագունիւ
իմացողութե՛ն իւրով, որով զստեղծուածս
բնաւս գերազանցէ, զգործս այ ոչ կարէ համ-
բմբռնել, զիարդ զեութիւն այ, և զամենա-

կարո-

կարողութի՛ն նորին , զանբաւութի՛ն , և զխմա-
տութի՛ն նորին , որք գերազանցեն զբնաւս յա-
րացոյս և զնմանութիւն , և զբնաւս իմացողու-
թիւնս ստեղծականն , բովանդատել կարիցէ :
Ուստի որ առ՛ի յիմանալ զսփ և զպատճառս
խնդրէ , և համարի թէ իմացողութե՛ն իւրով
զնա չափել կարիցէ իբրև զստեղծական ինչ ,
նա ոչ գիտէ թէ զինչէ անբաւն և անճառե-
լին : Գիտասցէ ուրեմն իւրաքանչիւրք նախ
զինքն թէ զինչիցէ , և ապա սկսանիցի ճա-
նաչել և գիտել զսփ :

Պատասխանի Երկրորդ :



Ատասխանեմք Երկրորդ , իմաս-
տասերք աշխարհիս այսո-
րիկասէն հասարակօրէն , թէ
ոչոք կատարելութի՛ն գոլ կա-
րէ ՚ի պատճառեցելում իմիք ,
որ ոչ իցէ նախապէս , և գերա-
զանցապէս ՚ըն պատճառի իւրում արարչա-
կանի . Քանզի որ ինչ է ՚ի պատճառեցեալն ,
ունի զայն ՚ի պատճառէն իւրմէ առնկա-
լեալ : Արդ զոր ինչ ոչունի պատճառն , զայն
ոչ կարէ տալ պատճառեցելոյն . Ուրեմն կա-
տարելութի՛ք , որք գտանին ՚ի պատճառեցելումն
նախ ,

Նախ գոլ պարտին ի պատճառին իւրում : Բայց այլապէս ըն պատճառում, և այլապէս ըն պատճառեցելում : Վս զի ի պատճառեցեալն համայնք կատարելութիք խտնեցեալք են պակասութե իւրիք : Իսկ ըն պատճառում թարց պակասութե : Արդ քանզի ամէն նախկին կառավրին պատճառ, և պատճառ պատճառաց . Ուրեմն կատարելութիքն, որք գտանին ի յըստեղծուածս, յայ են, քանզի ոչոր կարէ տալ զայն, զոր ոչունի :

Աստուտ զկատարելութիւն Բազումս, որք են ըն յաստուծում, ի յստեղծուածոցս ճանաչեմք կիմանանք . զոր օրինակ, ճանաչեմք զամ գոլ ամենակաթօղ, և ամէն սիմաստ, քան զի կատարելութիք, որք են ի յըստեղծուածս, նախապետապէս պարտին գոլ ներստեղծողին : Բայց ի ստեղծուածս միշտ են մանապէս, և անկատարապէս, իսկ ըն յաստուծում ամբողջապէս, և կատարելապէս : զի որինչ ի յըստեղծուածս, է պատահումն, ներստեղծողին է գոյացութի : և որինչ ի յեալս է եզերեցեալ, ներարարչագործին է անեզր : Ըստ այսմ են և ծնունդն և ծնանիլն ի յստեղծուածս, որք են կատարելութիք ոմանք տրեցեալք յայ, որոյ հրամանաւն աշխն և բազմանան էակք, ու գրէ

Մօլսէս

Մօփսէս 'ի գիրս ծննդոց 'ի գլուխն առաջին 'ի թիւն 27. թէ էստեղծ ամ զմարդն 'իսլատկեր իւր, 'իպատկեր ւն էստեղծ զնա, արու եւգ էստեղծ զնոսա, ևօրհնեաց զնոսա ամ, ևասէ, ածեցարուք ևբազմացարուք ևլլեք զերկիր, իսկ 'իգլուխն 15. 'իթիւն 2. գրէ այսպէս, Եւասաց Աբրահամ, տր ամ զինչ տացես ինձ, էս երթայց առանց ազատից, ևօրդի հոգաբարձուի տսն իմոյ այդ եղիազար դամասկեան: Յաւել ևս Աբրահամ, իսկ ինձ ոչ էսուր զսերմն, ևահա ընտոծինն իմ ժառանգ իմ եղիցի: Եւ վաղվաղակի խօսն ւն էղև առնա ասելով, ոչ եղիցի այս ժառանգքո, այլ որ էլանէ 'ի յորովայնէ քումէ, զինքն ունեսցես քեզ ժառանգ: Արդ ասեմ թէ խնդիրքն ևհայցուածքն Աբրահամու էին 'յայ զի շնորհիցէր նմա զծնունդ, որ է կատարելութի իմն, իսկ ամ միսիթարեաց զնա պարգևելով նմա զզաւակ: Ուրեմն ծնունդ ևզաւակք կատարելութիք էն ևպարգևք 'յայ բարձրելոյն, Ապա ուրեմն և'յաստուծում պարտին գոլ:

Դարձեալ զոր ամ արարածոցս պարգևէ, է զօրութի ևգիտութի ևսէր ծնողին և ծնիցելոյն. Ուրեմն ևինքն նախապետապէս ունի զսցսոսիկ, քանզի էթէ ոչ ունէր, ոչիճ կերպիւ կարէր տալ ստեղծածոցս:

Ասիցէ որ թերևս թէ 'իյարարածս է այլիմս զօրութիւն, այլիմս գիտութիւն, և այլիմս սէր : Պատասխանեմք առայս , թէ ուրեմն ամ ոչ ունի զկատարելութիւն զամենայնս , ուրեմն արարածք ոչ 'յայ , այլ 'յայլմէ ումեքէ ունին զայսոսիկ, որ 'հզօրագոյն ից է քան զամ . Բայց այսէ սուտ , և անտեղի , քանզի ամ է լրումն ամենից կատարելութեց , ուրեմն ոչինչ կատարելութիւն գոյ 'յարարածս, որ ոչիցէ քաշխեցեալ 'յայ ի քր 'ի նախկնագունեղէ և 'յընթահանրէ պատճառէ . Ապա ուրեմն և ծնունդն և ծնանիւն , որք գտանին 'ի յստեղծուածս , գոն ևս 'ըն յաստուծում : Ուստի մարգարէն Էսայիաս խօսելով 'ի Բերանոյ 'յայ 'ի գլուխն 66. 'ի թիւն 9. ասէ , Միթէ էս որ այլոց զծնունդ շնորհեմ , էս ինքն ոչ ծնանիցիմ : Արդ թէպէտ իրաւի է և հաւաստի զի 'ըն յաստուծում գոյ ծնունդ և ծնելութիւն . Սակայն զճշմտարտութիւն զայս եթէ ոչէր ինքն յայտնեալ մեզ , ոչ իմանայաք . քայց որով հետև յայտնեաց մեզ , 'իհարկէ պարտիմք հաւատալ և պատճառօք հաստատել , թէ կատարելութիւն այս , ոչ միայն ոչէ անհնարին , զի իցէ 'ըն յաստուծում , այլ և յոյժ պատեհագոյն նմին :

Իրաւի է ևս զի զեղանակ ծննդեան և ծնելութեան իմանալն է դժուարին իմն , քանզի 'յաշխարհի

խարհի այսմիկ տեսանեմք լինիլ զծնելութիս
'իշարազուգութե արուի և իգի . և ոչ այլապէս :

Բայց քանզի լծծ է ամենակարող անմար-
մին և բոլորովիմք հոգի , ուստի յոյժ դժուա-
րին է 'իմիտ ածել , թէ զիարդ 'իսմին ոքէ
էակ իմն զուտ և պարզագունեղ ծնունդ և ծնե-
լուի լինիցի :

Զիեթե զնոյն եղանակ ծննդեան և ծնելու
թե վարկիցիմք 'ըն յաստուծում , զոր տեսա
նեմք 'ի յարարածս , ոչ միայն դժուարագոյն
և անհնարին եղիցի վերահասութիւն , այլև խո-
կունն զնմանէ եղիցի հայհոյութի :

Վսորոյ վերածել պարտիմք 'իմիտս զայն , զոր
յառ աջագոյն ասացաք , թէ կատարելութիք , որք
գտանին 'իյստեղծուածս , այլապէս են 'ըն յաս-
տուծում , քանզի 'իսոսա են եզերեցեալք , և ժա-
մանակաւորք , անկատարագոյնք և հունաւորք .
իսկ 'ներ աստուծում անժամանակք և ան-
բաւք , անճառելիք , և յամենից անկատարու-
թեց մեկուսացեալք : Արդարև նուազի լեզու-
մեր 'իճառելն զայսպիսեաց . ուստի զայս միայն
ասեմք , թէ վարկէն զկատարելութիս 'ըն յաս-
տուծում ըստ որում են 'իյստեղծուածս ,
է մեծ հայհոյութի :

Ուրեմն զորինչ համեմատաբար խօսիմք կամ
խորհիմք զայ Բարձրելոյն , զմիտս մերս յամե-

նից անակտարութեց արտաքարշէլ, և վերամ-
բառնալ պարտիմք : Ապա ուրեմն մինչ ասեմք
թէ 'լն յաստուծում գոյ ծնունդ, և ծնելութի,
ոչ իմանամք ըստ որում են 'իյստեղծուածս .
գինգի թէպէտ ծնունդն է կատարելութի
իմն, բայց 'իյստեղծուածս ոչէ ազատ 'յանկա
տարութեց, որով հետեւ է մարմնական, և նիւ
թական, ժամանակաւոր և տեղական, 'իյոչնչէ
'իգոյութի եկեալ, և 'իմասնակցութե ծնողաջ
ղգոյութի առեալ : 'Նորում մասնակցութե ոչ
զբոլոր գոյացութի, և զգոլն 'իհօրէն անջատե-
ցեալ, և առանձնացեալ առ ընդունի որդի, այլ
զմասն իմն, ուստի՝ և ժամանակաւ է յետ քսն
զեութի հօր իւրոյ. և քանակութե փոքրագոյն
քան զնա : որ և սակաւ առ սակաւ զաճումն առ-
նու, և 'ի ծնանիլն ոչ իսկոյն ընդունի զզօրու
թի, և ոչ զխօսս, ոչ զիմացողութի և ոչ զգը
'նացս : Բայց ծնունդն, որ է 'լն յաստուծում,
է 'իբաց անջատեցեալ 'յամենից պակասութեց,
որովհետեւ է հոգևոր և ոչ մարմնաւոր, անքա
նակ և անժամանակ, անտեղի և անսկիզբն, մն-
բաւ և անվախճան : 'Նորում ծնողն 'իյաւիտե-
նից մինչև 'ցյաւիտեանս միշտ և անհատաբար
ծնանի զորդին, որ և ոչ զանցեալ ունի և ոչ զա-
սրառնի, այլ ամ ժամանակ առաջի 'նր է ներ-
կայութի . Եւ հետեւապէս որդին 'նր միածին
է ամե-

և ամենակատար , ոչ մասն 'իգոյացութի : Կօր , այլ բոլոր գոյացութի , և եութի նորին , 'իյէութի Կօր արտաքս ոչ էլանէ , այլ կայ յարամայապէս 'ինմին :

Քանզի եութին այ է անեզրական , և թէպէտ որդին ոչէ անձն Կօր , սակայն եութինն Նոյն է ընդ Կօր , և թէպէտ որդին ոչէ Կայր , սակայն է 'իյէութի Կօր :

Այլև Կայրն ոչէր երբեմն ան և ոչ Կայր , այլ միշտ ան , և միշտ Կայր , և հետևապէս որդին ոչէր երբեմն մանուկ , կյետոյ զարգացաւ , այլ միշտ կատարեալ , և անբաւ , և հաւասար Կօր , և ոչէր երբեմն տկար , կյետոյ զօրացաւ , այլ միշտ ամենազօր , ոպ և Կայրն : ոչէր երբեմն տղդէտ կյետոյ իմաստնացաւ , այլ միշտ ամենիմաստ ոպ և Կայր :

Եւ ոչ երբեմն անխօս , կյետոյ սկսաւ խօսիլ , այլ միշտ բարբառ և բան այ Կօր : ոչ ստորանկեցեալ ժամանակի , և ոչ սյարունակեցեալ 'ի տեղւոջ , այլ գեր քան զամ ժամանակ և զտեղի : Այլև ոչ ստեղծաւ 'իյոջնչէ , և ոչ արարաւ յայլմէ եութի , այլ ծնաւ 'իյէութի Կօր , ոչ ըստ մասին հաղորդակցելով , այլ բոլորի եութի Կօր համագոյակից գոյով :

Ապա ուրեմն ամենևին և յամուսնայ Կօր հաւասար , յաւիտենական , ամենակարօղ , ան-

չափ, և անվախճան ու՛ր և հայրն ամբ. ոչիւիք պակաս քան զհայր, և կամ այլիմն ինմանէ, այլ ընդ նմա մի ամբ ամենակատար, ամենաբարի, և ամենամեծ:

Զսոյն ասեմք ևս յաղագս հոգւոյն սրբոյ, որէ հոգի ամ և ոչ որդի, զի իմիում էութե՛ն անձայնում զերիս անձինս խոստովանիմք, այսինքն, զհայր և զորդի և զհոգին սբ, ու՛ր ասացաւ իվերոյ, քանզի իմիում աստուծում գոյ կարողութի, և իմաստութի ևս էր. Զկարողութին հայր գոլ իմանամք, զիմաստութին որդի ասեմք, և զսերն հոգի սբ անուանեմք: Եւ զորինչ խօսեցաք իվերոյ յաղագս կարողութե՛ն իմաստութե՛ն, և սիրոյ. Աստ զնոյնս յաղագս հօր, և որդւոյ և հոգւոյն սրբոյ ասեմք. Եւ ոչ միայն զանուանս լուսապէս իմանամք, այլ և զնշանակութիս անուանցն ճշմարտապէս խոստովանիմք, ըստ որում իմարգարէիցն մեզ աւանդեցաւ. Ուրեմն ամբ ունի զծնունդ, և զուսման ծննդեան: Եւ այս յայտնապէս ցուցանի իբանից իմաստասիրացն, որք ասեն, թէ ծնունդն է յառաջագայութի կենդանւոյ իկենդանւոյն, միաւորեցելոյ ինմանութի նոյնոյ բնութե՛ն, իզօրութե՛ն էլողութե՛ն: Արդ՝ ուր միանգամ գտանի սահմանս այս, անդ իհարկէ եղիցի և ծնունդ, և հետեապէս ճշմարիտ

րիտ ծնող և ճշմարիտ ծնիցեալ, այսինքն՝ ճշմարիտ հայր, և ճշմարիտ որդի: Բայց առ այս իմիտ անցուք զառաջագոյն՝ ասացեալս յաղագս էութեն անձայնոյ, որ ունի զերկուս յառաջագայութիս, որոց մինն է յառաջագայութի իմաստութե, իսկ միւսն յառաջագայութի սիրոյ իկարողութե, և յիմաստութե. Եւ այսոցիկ յառաջագայութեց զինոցունց և զինոսա գոլի յայնցանէ, որք իմեզ են յայտնուպէս իմանամք: Արդ՝ յառաջագայութի իմաստութե իմեզ, է ըստ այսմ սարասի, զի իմացողութի մեր ի ձեռն պաշտամանց զգայութեց զպատկերս իրաց, զորս արտաքուստ ներքնագունի, յղանայ յինքեան, և երևակերպէ և ըստ նոցին զբան ինչ յառաջբերէ, որ է նման իրին իմացելոյ, ուստի և յառաջբերեցեալն բան զիրն իմանեցեալ երևակերպէ և ցուցանէ:

Ըստ այսմ ևս անհայելով յէութի իւր տեսանէ ինմա զբնաւս իմանալիս, և ասէ թէ էս այս ինչ էմ: Եւ յասելն զբան իմն յառաջբերէ, և այս արտաբերեցեալ բանն նմանէ բոլորովիմբ իմացմանն, զի զնոյնն երևակերպէ և ցուցանէ: Ուստի բանն այն յառաջեկեալ ասի, զի յառաջագայի յայ յիմացողէ և յասողէ: Բայց ասացեալն և ասողն, յառաջածեցեալն և յառաջածողն առնչաբար համարեալ

ին, և հակակայելով համազանազանին: Ուրեմն այլ է ասողն և այլ ասացեալն, այլէ յառաջածողն, և այլ յառաջածեցեալն, քանզի հակակայից պարտէ գոլ միշտ երկու: Ուրեմն, և յառաջածողն և յառաջածեցեալն եղիցին երկու: Ապա ուրեմն ամ, որէ յառաջածող, և բանն իւր որէ յառաջածեցեալ էն երկու, զանազանութե առնչականաւ համազանազանեցեալք: Լնմանք միմեանց ըստ իսկութե բանի:

Բայց բանն այ յառաջածեցեալ ոչէ պատահումն, ըստ որում է՝ իմեզ, Ջի ամ զիմաստութի իւր ոչ ներընդունի յարտաքուստ ում մարդիք, այլ յիւրմէ էութե, և զորինչ գիտէ, յինքենէ գիտէ. և զայս վկայեն համայնք իմաստասերք: Ուրեմն բանն այն է՝ իզոյացութե այ, և յինքեան ենթակայացեալ: Ապա ուրեմն է ամ: զի որինչ գոյ՝ ըն յաստուծում, ամ է: Աստուստ բանն այ, գոլով յառաջածեցեալ չայ, է նման իրին իմացելոյն, և գոլով բան այ, է ամ, և ինքեամբ ենթակայացեալ: Եւ ըստ այսմ բանն այ, գոլով յայ յառաջեկեալ, կենդանի է, սակա յառաջագայութե իւրում՝ ի կենդանւոյ միացելոյ ի նմանութի նոյնաց բնութե, իզօրութե ելողութե իւրոյ: Ապա ուրեմն յառաջագայութի բանին այ է ճշմարիտ

րիտ ծնունդ: Եւ Բանն յառաջեկեալ է Ճշմարտապէս ծնիցեալ, և որդի: Իսկ ան յորմէ է Բանն, յառաջեկեալ, է Ճշմարիտ ծնող, և հայր:

Ուրեմն յառաջագայութի Բանին այ է ծնունդ, և յամենից անկատարութեց զատեցեալ, և Բացորոշեցեալ: Քանզի սահմանագրութի ծննդեանն ամբիւ յարմարի նմին, զի զորմէ ևստորոգի սահմանն, ստորոգի ևս զնմանէ սահմանեցեալն:

Չոր օրինակ, Կենդանի Բանականն որ է սահման մարդոյ, զորմէ ևստորոգիցի, ստորոգի ևս մարդն:

Արդ՝ սահմանագրութի ծննդեանն է ելումն Կենդանւոյ ի Կենդանւոյն միացելոյ ի նմանութի նոյնոյ բնութե ի զօրութե ելողութե իւրոյ, ուն ասացաք ի վերոյ: Իսկ յառաջագայութի Բանին այ է ելումն Կենդանւոյ ի Կենդանւոյն միացելոյ ի նմանութի նոյնոյ բնութե ի զօրութե յառաջագայութե իւրոյ, ուրեմն յառաջագայութի Բանին այ է Ճշմարիտ և իսկ Կական ծնունդ:

Դարձեալ Թեպէտ ծնունդն ի յատեղծւածս է ևստարեւութի իմն Ճշմարիտ, սակայն է խառնեցեալ ընդ անկատարութիս Բազումս, զի ծնեցեալն ինոսա ոչ առնու զբովանդակութի ծնողին իւրոյ, այլ ոչ կարէ վարկաւ զակի

դակի հանգիտանալ կատարելութե նորին ,
 ոչ ըստ մարմնոյն , ոչ ըստ մտացն , ոչ ըստ
 զգայութեցն , ոչ ըստ խօսիցն , ոչ ըստ գոր-
 ծոցն , ոչ ըստ վարուցն , եւ ոչ ըստ այլոց իրաց ։
 Ուստի թէպէտ նմանի ծնողին իւրում ըստ
 տեսակին , սակայն բիւրովք այլովք տարա-
 ձայնի , եհակակայի նմին ։ Բայց յաւիտենա-
 կան որդին այ , հօր իւրում ամենեւին է հան-
 գէտ , եհաւասար , եբոլորովիմբ նման , բայ
 յայնմանէ , զի ոչէ հայր , ոպ այլուրեք ասե-
 լոցք էմք ։

Արդ՝ վնդի որդին այ է բանն այ , իսկ իմա-
 նալն այ զեութի իւր , եասելն թէ ես այս
 ինչ էմ , է ծնունդ բանին , էւ զի ամն հայր
 յաւիտենից մինչէ յաւիտեանս միշտ իմանայ
 զինքն եասէ , թէ ես այսինչ էմ , ուրեմն բանն
 այ միշտ ծնանի ։ քան զի ամն հայր ոչ երբէք
 դադարի յիմանալոյ , զի էթէ դադարիւր եր-
 բէմն , պակասիւր իգոլոյն ։ Բայց այսէ անկա-
 րելի ոպ իվերոյ առաջաւ , ուրեմն ամ հայր
 միշտ իմանայ , եմիշտ զբան իւր յառաջածէ ։

Այլ ամն հայր զինքն ամենակարօղ իմա-
 նալով , զբանն ամ ես ամենակարօղ երեւո-
 ւերպէ , ուրեմն բանն այ է անբաւ , ենոյն
 ընդ բոլորի եութե հօր , եգոլով յաւիտենա-
 կան միշտ ծնանի , եմիշտ ծնանիցի թարց
 տար-

տարբերութե ժամանակի , որոյ ոչ անցեալ
գոյ և ոչ ապագայ , սյլ գոլով ներկայ զբնաւս
յաւիտեանս իմիում կիտի պարունակէ : Եւ
այս է բան մարգարէին , որ ասէ յարգանտեյա-
ռաջքան զարուսեակ ծնայ զքեզ : Եւ թէ որ-
դի իմ էս դու , և էս այսօր ծնայ զքեզ : Ար-
գանտն է էութիւն մայ , կամ իմացումն նորին :
Իսկ յառաջն նշանակէ զյաւիտենականութիւն ,
որ ի վերէ քան զբնաւս ժամանակս , Այսօրն
նշանակէ զներկայութի յաւիտենականութեն ,
որ միշտ ներկայ է , և ներկայագոյն քան զայ-
սօրն , զի ոպ առաջաք , մծ մշտնջենաւոր է ,
ոչ զանցեալ ունի և ոչ զապառնի : Ուստի
որ ոք զայսոսիկ իմանայ , ոչ երբէք երկբայի
ի վր ասացելոցն յաղագս յաւիտենականի
ծննդեանն բանին մայ . Եւ հետեապէս հաւատ-
տայ ի քս , խոստովանի և քարոզէ զբանն մայ
գոլ ճշմարիտ և կատարեալ որդի մայ , և բո-
լորովմբ նման հօր , յաւիտենական , ան-
չափ , անեզր , և յամում հաւասար նմին :

Իսկ միւս երգութիւն , որ յառաջագոյնի ի
զօրութե և յիմաստութե , ըստ որում ասա-
ցաւ , զորն այսպէս և ըստ այսմ սարասի բացա-
յայտեմք : Յորժամ կամն մեր միտէ ի ինդրելի
և ի սիրելի ինչ , այն որով միտէ , է սեր , որ
դրդէ զսիրօղն ի յստիպումն ի շարժումն ,
և ի հա-

և ի հակամիտումն . Բայց սերն և սիրօղն տար-
բերին ի միմեանց . Այսպէս ամ զինքն կատա-
րելապէս իմանալով զոլ ամենաբարի , ամե-
նև իմբ կամուստեք զինքն կամի և սիրէ , վն զի
բարի է , ուստի և բղիւսէ յինքենէ զսեր իմն , այս-
նքն , զայն , որով զինքն սիրէ . Բայց բղիւսօղն
և բղիւսեցեալն տարբերին ի միմեանց , և առնչա-
բար հակակային , զի հակակայից միշտ պար-
տէ զոլ երկուս . Ուրեմն այլ է ամ սիրօղ ,
և այլ է սերն ի նմանէ բղիւսեցեալ : Աստուտ
ունիմք զերկուս հակակայութիւն առնչա-
կանս ըն յեութեն այ , որոց մինն է այ ասո-
ղին , և քանին ասեցելոյն : Իսկ միւսն է այ
սիրօղին , և սիրոյն բղիւսեցելոյ : Ապա ուրեմն
հակակայութիւն սյսոքիկ առնչականք է լոզու-
թեցն , սյսինքն , յայլմէն և այլն յամ է , և ոչ
զոյ այլ բաց յասացելոյն :

Դարձեալ , ոչ է բնութի սիրոյ զինմանիցի
բղիւսողին իւրում , ըստ որում բանն նման է
ասողին , Այլ յատկութի է նր միայն քարշել
և խոնարհեցուցանել զսիրօղն առ սիրեցեալն .
Ուստի սերն այ բղիւսեցեալ ի նմանէ , ոչ
կարէ ասիլ որդի այ , ուր ասի բանն այ ,
այլ մանաւանդ շունչ և ոգի այ վերակոչի :

Քանզի ի բնութե իւրմէ ունի , զի չնչի-
ցէ , և շարժիցէ զսիրօղն , և առ սիրեցեալն

զսիր-

դարձուցանիցէ , ևսակա այսորիկ շունչ և հոգի մը անուանակոչի :

Դարձեալ սէրս այս , բղխեցեալ յայ ոչ է պատահումն , վս զի ոչ ելանէ ՚ի գիտութե իրայ յարտաքուստ բերեցելոյ , ուն հանդիպի ՚ի մեզ , այլ ՚ի ծանօթութե էութեն անայնոյ և գիտելեացն ՚ի նմա :

Այլև ոչէ պատահումն , գոլով ՚ըն յեութեն այ , զի որինչ է ՚ըն յաստուծում , ան է : Ուրեմն սէրն այ , է ՚ի գոյացութեն այ և ինքնագոյ . Ուրեմն սէրն այ բղխեցեալ ՚ի նմանէ զերկուս ունի զգիտմունս , մինն է ՚ի կողմանէ իւրմէ , որով զսիրողն տանի առ սիրեցեալն : Իսկ միւսն ՚ի կողմանէ այ սիրողին , և ըստ այսմ ինքն սէրն ան է : Ապա ուրեմն յայտնապէս տեսանի , թէ ոյր աղագաւ բանն այ , ասի որդի այ , իսկ սէրն ոչ կոչի որդի այ , այլ հոգի այ : Քանզի բանն ՚ի զօրութե ելողութե իւրոյ նմանէ իւրում ասողին , ըստ սահմանագրութե ծննդեանն : Իսկ սէրն ՚ի զօրութե բղխմանն իւրոյ յառաջագայի ուն շարժողութի և շունչ : Էւ երկօքեանն սոքա ան էն ուն ասացաւ : Ուրեմն պատեհաբար և վայելչաբար մարգարեքն այ ուսեալք ՚ի նմանէ վս բանին , և վս սիրոյն այ խօսեցան . Ջբանն որդի , և զսէրն հոգի
մը

ԾԲ անուանակոչելով :

Այլև յայտնի է թէ՛ ճշր աղագաւ առն՝
 ձեռութիւք այսոքիկ , ամենսկարօղ , յաւիտե-
 նական , Բարի , անչափ կայլք , ոչ ասին որդի կոչ
 հոգի սբ , կոչ Բազմացուցանեն զանձնաւո-
 րութիս , ոպ էն Բանն կսէրն : Քանզի ամ ,
 զայլ իմն զանաղանութի ոչ ունի Բաց յառն-
 չականէ : Էլողութեն , որէ միոյն ՚ի միւսն ,
 կամ յորմէ այլն , որե է կրկին ըստ կրկնոյ
 շարժմանն , որոց մինն է ՚ի յիմացմանէ առ ՚ի
 յիմանալ , և ըստ այսմ Բանն ծնիցեալ լինի :
 Իսկ միւսն է ՚ի կամաց առ ՚ի կամիլ կառ ՚ի-
 սիրել , և ըստ այսմ սէրն Բղխեցեալ լինի :
 Եւ Բաց յայսցանէ Երկուց շարժողութեց այլ
 իմն շարժումն ՚ըն հոգւոջ իմացականում՝ ոչ
 գտանի : Ուրեմն կոչ առնչական զանաղա-
 նութի Էղիցի :

Արդ՝ վս զի վերոգեցեալքն առնձեռու
 թիք ոչ ըստ իմացման , կոչ ըստ կամաց
 յառաջագային ըստ որում էն Բանն կսէրն :
 ուրեմն ոչ որդի կոչ հոգի սբ ասիլ կարեն ,
 կայսպէս ոչ Բազմանան անձինքն ամայինք :
 Ուստի ուր հայր և որդի և հոգին սբ ոչ նկա-
 տեն զառնչական տարբերութի Էլողութե
 անդ ամիւ մի էն : Վս որոյ ասեմք թէ հայր
 է ամ : որդի է ամ : և հոգին սբ է ամ : անձինք
 Երեք .

Երեք . և Ծ մի : Անձինք Երեք , սակս առն :
Հականի Հակակայութեն , իսկ Ծ մի , սակս
միոյ բնութե և եութեն :

Չոյն ասեմք ևս սակս այլոց առնձեռութեցն
այ , այսինքն , հայր է ամենակարող .
որդի է ամենակարող , և հոգին ուր է ամենա-
կարող : Բայց ոչ Երեք ամենակարողք , այլ
մի ամենակարող :

Սոյնպէս հայր է յաւիտենական , որդին է
յաւիտենական , և հոգին ուր է յաւիտենական ,
բայց ոչ Երեք յաւիտենականք , այլ մի յաւի-
տենական : Այսպէս հայր է անչափ , որդին է
անչափ , և հոգին ուր է անչափ , բայց ոչ Երեք
անչափք , այլ մի անչափ : Վասն զի իմէջ
ամենակարողութեն , յաւիտենականութեն ,
և անչափութեն ոչ զոյ առնչական հակա-
կայութի ելողութե :

Չի ըստ կանոնին հաստատունոյ , զոր ունիմք
յԾ , և առ նորին առնձեռութիս , ուր
առնչական հակակայութի ոչ գտանի , անդ
մի են Երեք անձինքն ; իսկ ուր գտանի , անդ
զանազանին :

Ուստի անձն հօր , ոչ է անձն որդւոյ , և ոչ
անձն հոգւոյն սրբոյ , սակս հակակայութե
առնչականի ելողութեն : Բայց որինչ է հայր ,
է և որդին և հոգին ուր , սակս ոչ զոյն ինմա
առնչա-

առնչականի հսկակայութե : Նմանապէս անձն որդւոյ , ոչէ անձն հօր , եոջ անձն հոգւոյն սրբոյ , սակայն որինչ է որդին , է ևհայր ևհոգին ուր : Ասպէս անձն հոգւոյն որբոյ , ոչէ անձն հօր , եոջ անձն որդւոյ : սակայն որինչ է հոգին , է ևհայր ևորդին :

Եւզի բազմաւորութի անձանց այսոցիկ զոչինչ պակասութի ևզանկատարութի առբերէ քուծեն այ գոլով սոնչական եոջ ընդարձակ , քանզի եթէ գոյր ընդարձակ , առբերէր զանկատարութի իմն , զի բազմաւորութին ընդարձակ , է ընդունակ բազմաւորութե , իսկ բազմաւորութին առնչական , ոչէ ընդունակ բազմաւորութե իմիք : ուրեմն զանկատարութինչ , ոչ կարէ առբերել :

Եւզի բազմաւորութի մասանց սոսմիմեսնս զխառնումն նշանակէ , բայց երեք անձինք անծութեն ոչ գոն երեք մասունք , եոջ երեք անծութիք , այլ իւրաքանչիւրն ինոցանէ ունի զբոլոր անծութի . քանզի որինչ է որդի ևհոգին ուր , է ևհայր : որինչ է հայր ևհոգին ուր , է ևորդի : ևորդինչ է հայր ևորդի , է ևհոգին ուր : Ուստի հայր ևորդի ևհոգին ուր , ոչէ երեք մասունք , ուր թէ ինոցունց անծ իցէ բազմաւորեցեալ , այլ իւրաքանչիւրք ինոցանէ է անծ կատարեալ : այսպէս երկուքն իմիասին է մի

է մի անկատարեալ, և երեքն միահաղոյն են մի անկատարեալ : Սակս ուր իւրաքանչիւրն ինոցունց զոյ յերիս ; և երեքն յերկուս ; և մինն յերկուս, և երկուքն ի մի : և մինն ինոցանէ է ուն երկու և երեք, և երկուքն ուն մի, և երեքն ուն երկու և մի :

Արդ յայտցանէ յայտնապէս Երևի, զի ան-
ձինք այսոքիկ անծայինք ոչ են իբր մասունք
բաղադրութե ընդունակք, և հետևապէս ան-
ոչ է բաղադրեցեալ, թէ և ունիցի զբաղմա-
ւորութի առնչական :

Ուրեմն զորինչ իյսկզբանէ մինչև յայս վայր
շարագրեցաք և բացայայտեցաք, թէ յաղագս
յառաջագոյութե իմաստութեն իկարողութե,
թէ յաղագս բղիման սիրոյն իկարողութե
և յիմաստութե, և թէ յաղագս յառաջագայու-
թեցն, որք էլողութիք են և ոչ բաժանմունք,
զոն հաւաստիք : Բայց առ ի հերքել իմտայն
ընթերցողաց զբնաւս դժւարութիս գրեցե-
լոցս, յառաջբերցուք զորինակ հոգւոյն բա-
նականի :

Ասեմք թէ հոգին բանական սիրէ զինքն,
ուն հաստատեցաք ի վերոյ : քանզի իբնութե
Քւրմէ ունի զայն : Ուրեմն և ճանաչէ զինքն;
վն զի ոչինչ է սիրեցեալ, որ ոչիցի նախ ճա-
նաչեցեալ : Բայց յորժամ հոգին բանական

սիրէ զայլինչ արտաքոյ ինքեան , յայնժամ յայտնապէս երևին երեք իրք , այսինքն , հոգին սիրող , իրն սիրեցեալ , ևսէրն , որով սիրողն սիրէ : Նմանապէս երևին երեք իրք յայտնապէս , մինչ ճանաչէ զայլինչ արտաքոյ ինքեան , այսինքն , հոգին ճանաչող , իրն ճանաչեցեալ , և ճանաչումն : Իսկ յորժամ հոգին բանական սիրէ զինքն , երևին միայն երկու իրք , այսինքն , հոգին սիրող , ևսէրն , որով սիրէ զինքն : Այսպէս յորժամ հոգին ճանաչէ զինքն երկու իրք միայն երևին , այսինքն , հոգին ճանաչող , և ճանաչումն : Վս զի ճանաչողն և ճանաչեցեալն նոյն են : Բայց յորժամ հոգին բանական ճանաչէ զինքն ևսիրէ , յայնժամ պարզապէս երևին երեք իրք , այսինքն , հոգին , ճանաչումն , ևսէրն : Լերեքեանս այսոքիկ մի են , և գոլով կատարեալք , են հաւասարք միմեանց :

Երեք են յաղագս առնչականի հակակայութե , զի ճանաչողն ճանաչողութե է ճանաչող , և ճանաչողութի 'ի ճանաչողէն ասի ճանաչողութի : Սիրողն սիրով է սիրող , ևսէրն է 'իսիրողէն : Վս որոյ ոչ սէր առանց սիրողի , և ոչ սիրող առանց սիրոյ ասի : Նմանապէս ոչ ճանաչող , առանց ճանաչողութե , և ոչ ճանաչողութի թարց ճանաչողի :

Արդ՝

Արդ՝ վս զի Ճանաչօղ և Ճանաչողութի առնչաբար հակակային , իհարկէ երկու պարտին գոլ , զի են հակակայք : Այսպէս սիրօղ ևսիր առնչաբար հակակային , իհարկէ երկու պարտին գոլ : Աստուտ հոգին Ճանաչօղ ևսիրօղ , և Ճանաչողութի ևսիր , գոլով առնչականք , իհարկէ են երեք : Եւ եթէ որ բայասէ զայսոսիկ , բացասել պարտի ևս թէ հոգին ոչ կարիցէ Ճանաչել զինքն ևսիրել :

Եւ զի Ճանաչողութի ևսիր են գոյացութիք , ուրեմն ոչեն ըն հոգւոջ ըստ եղանակի պատահման , քանզի պատահմունք ոչ կարեն արտելանել իտեղւոջին նորում են , ոպ տեսանի յայանապէս իգոյնս , զի գոյն իմն , որ գունաւորէ զթուղթս զայս , ոչ կարէ զայլիմն թուղթ գունաւորել : Բայց հոգի սիրովն , որով զինքն սիրէ , կարէ և զայլինչ արտաբոյ ինքեան սիրել : և Ճանաչմամբն , որով զինքն Ճանաչէ , կարէ և զայլս Ճանաչել :

Ապա ուրեմն Ճանաչողութի ևսիր ընհոգւոջ էականապէս գոն , ըստ որում է ինքն հոգին . Քանզի թէպէտ առնչաբար հակակային միմեանց , սակայն՝ իւրաքանչիւրն ինոյանէ գոյ ըն յիւրում գոյացութի , և ոչ են ոպ գոյնն և գունաւորեցեսլն , զի գոյնն ըն գունաւորեա

ցելում է իբր՝ նենթակայ ոջ , և ըստ ինքեան ոջ
ենթակայանայ , քանզի մարմինն գունատ օրե-
ցեալ է գոյացութի , իսկ գոյնն որ ՚ինմա է
սլառահումն :

Զի ունի ղերկուս բարեկամս իմանամք ղեր-
կուս մարդս , որոց երկաքանչիւրն ըստ որում
էն մարդիք , էն գոյացութիք , և ոչ ինչ կեր-
պիւ առնչականք ; Բայց ըստ որում էն բա-
րեկամք էն համառնչականք ; Այսպէս սիրօղ ,
և ճանաչօղ գոյացութիք էն : և ճանաչողութի ,
ևսէր էն ևս գոյացութիք : Բայց սիրօղ ևսէր ,
ճանաչօղ և ճանաչողութի համառնչականք
էն : այլ ոչ հոգի և միտ , ունի և ոչ երկու մար-
դիք համառնչականք եղիցին :

Այլ սիրօղ ևսէր , ճանաչօղ և ճանաչողու-
թի վնդի էն համառնչականք , ոչ կարէն ան-
ջատիլ իմիմեանց պահելով զառնչակցութիւնս
իւրեանց , ունի և ոչ երկու բարեկամք : Քանզի
եթէ սէրն , որով հոգին սիրէ զինքն ոչնչա-
նայցէ , և կորուսանիցէ զգոլն իւր , կորուսցէ
ևս միանգամայն հոգին զսիրողութի իւր :
Այսպէս եթէ ճանաչումն , որով հոգի զինքն
ճանաչէ , ոչնչանայցէ , և կորուսանիցէ զգոլն
իւր , կորուսցէ ևս միանգամայն ինքն հոգին
զճանաչողութի իւր : Եւ թեպէտ գլուխն
և գլխաւորն , մասն և բոլորն էն ևս համառն-
չականք ,

չականք , սակայն կարեն անջատիլ իմիմեանց ,
այլ ոչ սերն կսիրողն , Ճանաչողն և ճանաչումն :

Եւ զոր ստացաք ի վերոյ թէ հոգին , ճանա-
չումն կսէրն , գոլով կատարեալք , էն հաւա-
սարք միմեանց , յայտնի իմեք : Քանզի եթէ
հոգին բանական սիրիցէ զինքն նուազագոյն
քան զորէ , այսինքն , եթէ սիրիցէ զինքն այն-
քան , որքան սիրելի է մարմինն , մեղանչէ ,
կսէր նորին առինքն ոչէ կատարեալ , զի հո-
գին գերազանցագոյն է քան զմարմինն , ուստի
կմեծագունի սիրոյ է արժանի : Եւ եթէ սի-
րիցէ զինքն առաւելքան զոր է , այսինքն , այն-
քան , որքան սիրելի է անձ ըստ սցամ ևս մե-
ղանչէ , կսէր նորին ոչէ կատարեալ , զի ան-
է գերազանցագունեղ , ուստի և գերազան-
ցագունեղի սիրոյ է արժանի : Իսկ եթէ սիրի-
ցէ զինքն այնքան որքան է սիրելի , յայնժամ
սերն հաւասար է սիրողին , և կատարեալ : Լսի-
րողն սիրոյն հաւասար .

Նմանապէս , և ճանաչողութի նորա եթէ
նուազագոյն իցէ քան զճանաչողն , այսինքն ,
եթէ ունիցի զկատարեալ զօրութի ճանաչո-
ղութե , և նուազապէս ճանաչիցէ զինքն , ճա-
նաչումն այն , եղիցի անկատար : Եւ եթէ ճա-
նաչիցէ զինքն գերագոյն քան զորէ , գերա-
գոյն եղիցի բնութի ճանաչողին , ըստ որում է

Ճանաչող, քան զինքն ըստ որում է, Ճանաչեցեալ, զոր օրինակ, Ճանաչումն մարմնոյ, որով մարմինն Ճանաչի, գերագոյն է քան զմարմինն, քանզի Ճանաչողութիւն կենդանութիւն իմն է ՚ի Ճանաչողն, իսկ մարմինն ոչէ կենդանութիւն : սյլ ամ կենդանութիւն գերագոյն է քան զմարմին, թէպէտ ոչ ըստ քանակուէ, սյլ ըստ զօրութե :

Բայց հոգին մինչ Ճանաչէ զինքն, Ճանաչողութիւն այն, ոչէ գերագոյն քան զինքն, զինոյն է Ճանաչողն և Ճանաչեցեալն. Ուրեմն մինչ զինքն միայն Ճանաչէ և ոչ զայլ ինչ, յայնժամ Ճանաչողութիւն նորին հաւասար է ինքեան, զի Ճանաչողութիւն իւր ոչէ ՚ի բնութե սյլ ուրուք, մինչ Ճանաչէ զինքն : Եւ այսպէս մինչ բոլորովիմ : Ճանաչէ զինքն թարց սյլում ումէք, յայնժամ Ճանաչողութիւն այն, ոչ նւազ, և ոչ առաւել է զինքն քան զՃանաչողն : Ապա ուրեմն ստուգիւ ասացաւ, թէ երեքեան այսօրիկ յորժամ են կատարեալք ՚ի հարկէ են հաւասարք :

Դարձեալ, Ճանաչողութիւն ասերն, ոչ են մասունք հոգւոյ, քանզի ոչոք մասն զբոլորն իւր պարունակել կարէ, իսկ հոգին յորժամ զինքն կատարելապէս Ճանաչէ ասերն, նորին Ճանաչողութիւն ասերն զբոլորն պարունակէ,
Ուրեմն

Ուրեմն ճանաչողութիւնս ասէրն ոչէն մասունք :

Դարձեալ էթէ երեքեանս այսոքիկ էն գոյացութիք, և իւրաքանչիւրոք ինոցունց ոչէ արտաքոյ միւսոյն, ուրեմն էն մի գոյացութի :

Բայց ոչէն մի գոյացութի որպիսի է գոյացութի ըմպելոյն իջրոյ իգինւոյ և իմեղերէ խառնեցելոյ . Այլ էն հակակալք միմեանց, Քանզի հոգի ինքնին զինքն սիրէ, և ինքնին զինքն ճանաչէ, և արտաքոյ ինքեան զայլինչ ոչ ճանաչէ, և ոչ սիրէ . Ուրեմն իհարկէ երեքեանս այսոքիկ էն մի գոյացութի : Բայց էթէ խառնմամբ իմիասին բաղադրիցին, ամենևնիմբ ոչկարէն լինիլ երեք, այլև ոչկարէն ունել առմիմեանս զառնչական հակակայութի : Զոր օրինակ էթէ իմիոյ գրամէ ոսկւոյ զերիս մատանիս նմանս միմեանց զուգիցէ ոք, երեքեանս այնոքիկ մատանիք գոլով նմանք միմեանց համառնչակիցք եղիցին, և երրորդութի իմն ինոսին երևեսցի, բայց հայելով ինիւթն, այսինքն, յոսկին, մի եղիցին : Իսկ էթէ խառնիցէ ոք զնոսա ընդ միմեանս, և ձուլիցէ զգունս իմն, երրորդութիւն այն իսկոյն քարձցի իմիջոյ, և եղիցի մի ոսկի թարց երրորդութե : Այսպէս մինչ հոգի ճանաչէ զինքն նսիրէ, զերրորդութի իմն ցուցանէ յինքեան, այսինքն, զհոգին, զճանաչումն, և զսէրն, թարց

շփոթման առ իրեարս, թէ և իւրաքանչիւրքն իցեն յինքեանս; և իւրաքանչիւրքն ըն յիւրաքանչիւրում: և իւրաքանչիւրքն ըն յերկաքանչիւրում: և երկաքանչիւրն ըն յիւրաքանչիւրում: և եռաքանչիւրն նամենեան:

Իւրաքանչիւրքն են յինքեանս, զի Հոգի ըստ ինքեան գոլով յինքեան ստի, թէ և իցէ ճանաչող, ճանաչեցեալ, և ճանաչելի իւրով ճանաչողութի: Կամ սիրող, սիրեցեալ, և սիրելի սիրով իւրով: և ըստ այսմ ունիցի զսոնչական հակակայութի: Այսպէս ճանաչումն, թէպէտ և ունի զնկատումն առ Հոգին ճանաչող կամ ճանաչեցեալ, սակայն՝ և յինքեան ճանաչող և ճանաչեցեալ է: Վս զի ճանաչողութին, որով Հոգի զինքն ճանաչէ, յինքեան ոչէ անծանօթ: Նմանապէս սերն, թէպէտ և զնկատումն ունի առ Հոգին սիրող կամ սիրեցեալ, զի է սեր նորին, սակայն և սեր է ինքեանն, ուս և յինքեան սեր է, Քանզի և սերն է սիրեցեալ, և ոչ իւր արտաքոյ ինքեան: Եւ այսպէս երեքեանս սցտքիկ, սցսինքն, Հոգին, ճանաչումն, և սերն գոն յինքեանս:

Իւրաքանչիւրքն են յիւրաքանչիւրն, զի Հոգին սիրող է ըն սիրոջ: և սերն է ի ճանաչման Հոգւոյն սիրողի, իսկ ճանաչումն է ըն Հոգւոջ ճանաչողում:

Իւրա-

Իւրաքանչիւրքն էն յերկաքանչիւրսն , զի հոգի , որ զինքն ճանաչէ ևսիրէ , և միանգամայն ՚լն սիրոջ և ՚լն ճանաչման իւրում : և ճանաչումն և ՚լն հոգւոյ ճանաչողի ինքեան ևսիրողի և ՚լն սիրոջ : Իսկ սերն է ՚լն հոգւոյ սիրողի ինքեան և ճանաչողի , և ՚լն ճանաչման :

Երկաքանչիւրքն էն յսրաքանչիւրսն , զի հոգի , որ զինքն ճանաչէ ևսիրէ , ճանաչողութիւն իւրով և ՚լն սիրոջ , ևսիրութիւն իւրով և ՚ի ճանաչողութե : Քանզի նոյն սերն և ճանաչողութիւն գոն իմիասին ՚լն հոգւոյ , զի նոքօք զինքն սիրէ և ճանաչէ :

Եւ աքանչիւրքն էն նամենեւան , զի հոգի բոլորովիմբ զինքն ճանաչէ ևսիրէ : և ճանաչումն զինքն բոլորովիմբ սիրէ : ևսերն բոլորովիմբ զինքն ճանաչէ : Ապա ուրեմն երեքեան սյտօքիկ անանջատուիք էն իմիմեանց , բայց անանջատութիւն նոցա զարմանալի իմն է :

Դարձեալ իւրաքանչիւրքն ՚լն իւրաքանչիւրսն էն գոյացութիւք , և երեքեանն մի գոյացութիւ և մի էութիւն , վն զի էն առմիմեանս համառնչակաւիք :

Արդ՝ զասացեալս զսյտօսիկ առ էութիւն այլ վերաբերիցուք , Քանզի ևսն զինքն սիրէ և ճանաչէ , սակայն կատարելագունեղապէս , և գերա-

և զերազանցագունեղապէս : Սակայն որոյ, և յառաջածէ զբան իւր, որ զինքն երևակերպէ Ճշմարիտ ամբ : Երբ զսէ զսէր իւր, որ զինքն սուրի սիրէ ին խոնարհեցուցանէ : Եւ երեքեանս այստքիկ, այսինքն, ամեն ասող և սիրող, և բանն, և սէրն են գոյացութիք, և հետեւապէս են մի պոյացութի, և իւրաքանչիւրքն յինքեանս, և իւրաքանչիւրքն յերկաքանչիւրս, և երկաքանչիւրքն ին յիւրաքանչիւրս, և եռաքանչիւրն յերիս : Ուստի և իւրաքանչիւրն է ամբ կատարեալ, և երկաքանչիւրն մի ամբ կատարեալ, և եռաքանչիւրն մի ամբ կատարեալ, ամենակարող, պարզագունեղ, և առանց ումեք բաղադրութե :

Իսկ զոր ասացաք թէ երեք այստքիկ, են երեք անձինք, այսինքն, հայր, և որդի և հագին մը, զայսոսիկ ըստ հաւատոյ մերում դաւանիմք և խոստովանիմք : Քանզի ամեն ամենակարող, ինքն մարգարէից իւրոյ սրբոյ յայտնեաց մեզ զնոյնս, ոպ ասացաք յառաջագոյն :

Դարձեալ պիտելի է և այս, զի ամբ ոչ գործէ ըստ եղանակի ստեղծուածոցս, որպէս թէ իկնոջէ և ըստ մարմնոյ ծնանիցի զլուսակ իւր, և մանաւանդ՝ զայսպիսիս ասելն, և կամ խորհիլն մեծ հայհոյութի է : Այլ ասելն և կամ խօսիլն

խօսիլն իւր է ծնունդ որդւոյ իւրոյ : Կբանն
առաջեալ 'իմմանէ , է որդի ծնիցեալ , ամե-
նայնիւ կատարեալ Լնման հօրնայ , անբա-
ւելի , Կանճառելի : Եւզի երեք այսօրիկ ան-
ձիք են մի ամ կատարեալ Կամենամեծ , ըստ
յայտնութի : մարդարեւիցն : Ուստի առ այս
ճշմարտութի գլխաւոյց ինչ 'իյերկրայնոցս
առբերելն զժողարին Կանկարելի իմնէ : Քան-
զի ամ ծնունդ 'իյատեղծուածս անջատմամբ
լինի , իսկ 'լն յատուծում թարյ ումեք ան-
ջատութի :

Արդ' ո՞վ Պարսիկք , միթէ ուսայք ումեքէ
զամ հաւասար վարկել ստեղծուածոցս , քա-
լիցի այս ձեզ , զի որչափ բարձր է ամ Կգեր
'իվերոյ քան զստեղծուածս , այնչափ բար-
ձրագոյնք են գործքն նայ քան զստեղծուա-
ծոցս , քանի իւրաքանչիւր գործող , գործ-
ծէ ըստ որում է ինքն :

Վերջ Առաջնոյ
Հատորին :

Հատոր




Հասոր Էրկրորդ .

Յաղագս Քի Հատ որում Զ Մսիհ :

Գլուխ Առաջին .

Յաղագս Անուանն Քի :



Րիստոս անունս առ երեսե-
ցիս ասի Մսիհ : առ յոյնս
քրիստոս : առ լատինացիս
ունքթուս : առ հայս օծեցեալ
կամ օծած : որոյ թարգմանու-
թիւն իբարբառս պարսից Է
Մալիտէ . վն զի իժամանակս նախկինս
սովորութի եր օծել զթագաւորս լատ հրա-
մանին նոյ, ու Սաւուղ առաջին թագաւոր
երեսեցւոյ և Դաւիթ թագաւոր և թագաւոր,
կայլ ք օծեցեալք եղէն : և ոչ միայն սոքա, այլև
քահա-

քահանայք և մարդարեք օծանէին հոգւով
սրբով ։

Աւստի Գառիթ իսաղմուն 104. ի թիւն 15.
աւէ . մի մերձէնայք յօծեցեալս իմ , և իմար-
դարեւս իմ մի մեղանչէք ։ Եւ Ամբակում ըն
պլիտն 3. ի թիւն 13. աւէ , ելեր ի կէցութի ժո-
ղովրդեան քոյ , ի կէցութի ընդ օծեցելոյ քում ։
Եւ Եսայիաս խօսելով զկիւրոսէ , հոգւովն
այ ի գլուխն 45. ի թիւն 1. աւէ , Ջայտոսիկ
աւէ ար օծեցելոյն իմում Կիւրոսի , զորոյ կա-
լայ զաջն զի Էնթարկիւցեմ առաջի երեսաց
Նորա զաղգս ։ Այս Կիւրոս օծեցեալ էղև յայ ,
և Էսա . ի նմանէ զհրաման աւերելոյ զբաբի-
լոն , սակս բաղմութե յանցանայ և ամբար-
շտութեց Նոցին ։ Բայց յս քս , զորմէ Է գի-
տաւորութի բանիս , օծաւ . յայ ոչ ըստ էղա-
նակի այլոց , զի ոչ ոս զկիւրոս առ ի առա-
քիլ առ մի միայն քաղաք ։ Ե ոչ ոս զմարդարեան
առ ի առաքիլ առ մի միայն ազգ , այլ և ոչ ոս
զքահանայսն առ ի զոհել զզոհս ցլուց և նո-
խազայ , և ոչ ևս ի բրև զԳառիթ առ ի յիշխել
ի վր միոյ թագաւորութե ։ Այլ օծաւ ի վր
ամենից բնակչայ տիեզերաց , առ ի ազատել
զմարդիս ի մեղաց իւրեանց , և առ ի առնել
զհաշտութի ի մեջ այ և արարածոցս , ոս զի
Նովաւ և ի նա օրհնիցին համայնք ծնունդք

աշխարհի , ըստ որում Ճառելոցք եմք առ յապա ; Աստուտ յայտէ , զի օծումն յի քի գերազոյն էքան զօծումն հանուրց օծեցելոց :

Գլուխ Երկրորդ .

Յազազս օրհնութիւն զոր ընկալաւ ազգ մարդկան ի ձեռն քի ծնկեցելոյն ի զաւակէն Նահապետայն :



Սեմքթէ ամ խոստացաւ Աբրահամու յարուցանել նմա զզաւակ ի ձեռն որոյ ստանալոցք էին հեթանոսք զօրհնութի : Եւ զայս վկայէ Մովսէս ի գիրս ծննդոց ի գլուխն 12.

Ի թիւն 1. ասելով , Եւ ասէ ամր ջաբաւհամ , Էլ յերկրէ քումէ , և ի յազգակցութէ քումէ , և ի տանէ հօր քոյ , և էկ յերկիր զոր ցուցից քեզ : Լարարից զքեզ յազգ մեծ , և օրհնեցից զքեզ , և մեծացուցից զանուն քո , և եղիցիս օրհնեցեալ : Օրհնեցից զօրհնիչս քոյս : Լանիծեցից զանիծիչս քոյս : Եւ ի քեզ օրհնեսցին բնաւք ազգակցութիք երկրի : Եւ ի գլուխն 17. ի թիւն 9. ասէ , Ասաց դարձեալ ամ ջաբաւհամ , և զու ուրեմն պահեսցեք զուխտ իմ ,

իմ, ևսերմն քո զկնի քոյ, իճնունդս իւրեանց :
 Ես եւ ուխտ իմ, զոր պահեսցեք իմեջ իմ, ևձեր,
 ևսերման քոյ զկնի քոյ : Եւ փատեսցի իձէնջ
 ամ արու, և թլփատեսցեք զմարմին թլփանն
 ձերոյ, զի իցէ ինչան ուխտի իմեջ իմ, ևձեր :
 Եւ զկնի սակաւուց ի թիւն 15. ասէ, Ասաց
 և ևս ամ ցարբահամ, զՍարաի կին քո մի կո-
 չիցես Սարաի, այլ Սարա, և օրհնեսցի զնա,
 և ինմանէ տայ քեզ զորդի, զոր օրհնելոց էմ,
 և եղիցի յազգս, և թագաւորք ժողովրդոց ծա-
 գեսցին ինմանէ : Անկաւ Աբրահամ ի վր
 երեսաց իւրոց և ծիծաղեցաւ, ասելով ի սրտի
 Բարոմ, միթէ հարիւրեմէնի ծնանիցի որդի,
 և Սարա ինմանեմեան ծնանի : և ասաց ցած,
 օշթէ իսմայէլս այս կեսցե արաջի քոյ : Եւ
 ասէ ամ ցարբահամ, Սարա կին քո ծնցէ քեզ
 զորդի, և կոչեսցես զանուն նր իսսակ, և հա-
 մակացուցից զուխտ իմ ընդ նմա, իյուխտ
 յաւիտենական, և ընդ սերման նր զկնի նր :
 և ի վր իսմայէլի ևս անսացի քեզ, ահա օրհնե-
 ցից զնա, և աճեցուցից և բազմացուցից զնա
 յոյժ : զերկոտասան Դուքս ծնցէ, և արարից
 զնա յազգ մեծ : Բայց զուխտ իմ կացուցից
 ընդ իսսակայ, զոր ծնցէ քեզ Սարա, ի ծա-
 մանակի այսմիկ ըն միւսում տարւոյ : Եւ ի
 գլուխն 18. ի թիւն 17. ասէ, Եւ տասց Թր,
 մի թէ

մի թէ թագուցանել կարացից յաբարհամու
զոր առնելոյ էմ, որով հետեւ լինելոյ է յազդ
մեծ՝ և կորովագ ունեղ, և օրհնելիք իցեն ինմա
ամք ազգք երկրի : Եւ ի գլուխն 21. ի թիւն 9.
ասէ, Եւ տեսեալ Սարայի զորդին Ագարայ
էգիպտացւոյ զի խաղայր ընդ իսաակայ որդւոյ
իւրում, ասաց յաբարհամ, իբացհան զա-
ղախինդ այդ, և զորդի նր, քանզի ոչ եղիցի
ժառանգ որդի աղախնոյդ, ընդ որդւոյ իմում
իսաակայ, և խիստ թուեցաւ աբարհամու վն
որդւոյ իւրոյ : Առոր ասաց ամ, մի՛ խիստ
թուիցի քեզ ի վր մանկանն, և ի վր աղախ-
նոյ քոյ, զամ ինչ զոր ասիցէ քեզ Սարա, լուր
ձայնի նորա, զի իսաակաւ կոչեացի քեզ սերմն ;
բայց և զորդի աղախնոյդ արարից յազգ մեծ, զի
սերմն քո է : Եւ յարեաւ աբարհամ ընդ առա-
ւօտն և առեալ զհաց և գտիկ ջրոյ, եղ ի վր ու-
ռու նր, և աւանդեաց նմա զմանուկն և ար-
ձակեաց զնա . Եւ ի գլուխն 22. ի թիւն 1. ասէ :
Եւ յետ լինելոյ բանից այսոցիկ, փորձեաց
ամ զաբարհամ և ասաց յնա, աբարհամ,
աբարհամ, և նա պատասխանեաց, ահա ա-
սիկ էմ, և ասէ յնա, առ զորդիդ քո միա-
ծին, զոր սիրես զիսանկ, և գնա դու յեր-
կիրն տեսութե, և անդ մատուցես զնա յող-
ջակեզ ի վր միոյ լերանցն, զոր ցուցանիցեմ

H

քեզ :

քեզ , Ուրեմն յարեալ աբրահամու 'ի գիշերի
համետեաց զէշ իւր , եածեալ ընդ իւր զեր-
հուս պատանիս , եզիսաակ որդի իւր , եիբրե
համահատեալիցեր զփայտս 'յողջակեզ , գնաց
'ի տեղին , զոր հրամայեալէր նմա ամ , ե'յս-
ւուրն երրորդի ամբարձեալ զաջս էտես
զտեղին 'իբացուստ , եասաց 'ցպատանիս իւրս ,
սպասեցէք աստ հանդերձ իշովդ , եես եմա-
նուկս մինչև ցանդր ճեպեալք , յետորոյ երկր-
պագեալք իցեմք դարձցուք առ ձեզ : եառեսալ
զփայտսն ողջակիզին եեբարձ 'ի վր իսաակայ
որդւոյ իւրոյ , իսկ ինքն տաներ 'ի ձերս զհուրն
եզսուրն : եմինչ երկոքեանն ճեպէին 'ի միասին ,
ասաց իսաակ 'ցհայր իւր , հայր իմ , ենա պա-
տասխանեաց , զինչ կամիս որդի , Ահա ասէ
հուր , եփայտուոնք , ուր է զոհ ողջակիզի , եա-
սաց աբրահամ , ամ 'նախատեսանիցէ ինքեան
զզոհ ողջակիզի որդի իմ . ճեպէին ուրեմն զու-
գաբար , եեկին 'ի տեղին , զոր ցուցեալէր 'նմա
ամ , 'նորում շինեաց զսեղան , եհամադրեաց
'ի վր զփայտս , եիբրե կապեալիցեր զիսաակ
որդի իւր , եդ զնա 'ի սեղանի 'ի վր դիզոյ փայ-
տիցն եձկտեաց զձեռն եխլեաց զսուրն , զի
զենուցու զորդի իւր : Եւ ահա հրեշտակ տն
'յերկնից աղաղակեաց ասելով Աբրահամ Աբրա-
համ , որ պատասխանեաց , ահա ես իկ եմ :

Եւ ասաց

Եւասայ նմա , մի ձկտիցես զձեռն քո 'ի վր
պտանւոյդ , եւ մի առնիցես դմա զիրինչ , այժմ
ծանեայ , թէ երկնչիցիս 'յայ , եոչ անխայեցեր
միածնի որդւոյ քում վն իմ : Ամբարձ Աբրա-
համ զաջս իւրս , եւ տես 'իյետկոյս իւր խոյ
մի 'իմէջ ցաքից յենեալ եղջրօքն : Եւյետ սա-
կաւուց 'ի թիւն 15. ասէ . Եւ կոչեայ հրեշ-
տակ ւոն զաբրահամ երկիցս անգամ 'յերկնից
եւ ասէ , 'յանձն իմ երդուայ , ասէ ւոր , փո-
խանակ զի արարեր զիրդ զայդ , եոչ անխայ-
եցեր որդւոյ քում միածնի վն իմ : օրհնեցից
զքեզ , եւ քաղմացուցից զսերմն քո ուն զաստեղս
երկնի , եւ իբրեւ զաւազ , որէ առ ափն ծովու :
Ժառանգեսցէ սերմն քո զդրօնս թշնամեաց
իւրոյ . եւ օրհնեսցին 'ի սերման քում ամք ազգք
երկրի , զի հնազանդեցար ձայնի իմում :

Արդ 'ի քանս այսոսիկ ամայինս զերկուս իրս
պարտիմք նկատել , նախ զի աբրահամու եր-
կու որդիք եղեն , մինն կոչիւր իսմայել , 'իյԱ-
գարայ աղախնոյն , իսկ միւսն 'իսսակ 'ի Սա-
րայէ կնոջէ : Եւ թեպէտ իսմայել եւ եղև որդի
աբրահամու , սակայն իսսակ ասի զաւակ
աբրահամու , եւ իսսակայ խոստացաւ ւած , զի
ամ ազգ երկրի 'ի նմա օրհնիցին : իսկ իս-
մայելի քանզի եւնա սերմն էր աբրահամու .
խոստացաւ , օրհնել եւ քաղմացուցանել զոր-

դիս նր , ևտալ նմա զերկոտաւան իշխանս
Յերանայ նր : Բայց զուխտ և զխոստումն
Օրհնութե ամենից աղբաց , եդ ՚ի Սաակ և ՚ի
Ծնունդս նր :

Երկրորդ , զի եթէ ամ աղգ զՕրհնութի
ստանալոց էր . Ուրեմն նախ ամենեքեան ընդ
անիծիւք էին . Եւ անիծից այնոցիկ կրկին է
պատճառ : Առ աջինն է մեղքն Աղամայ , Բան-
զի Աղամ ստեղծեցեալ եղև յայ , և չնորհօք
նորին ընտրեցաւ և բարեկամացաւ նմա , մինչ
զի եթէ պահեալէր զպատուիրանս այ , վերա-
փոխեցեալ էր յարքայութին Երկնից : Բայց
քանզի յանցեաւ զպատուիրանաւն այ , սպ-
առամբեցաւ և զրկեցաւ ՚ի չնորհայն : Վն
որոյ արքայութին Երկնից փակեցաւ ընդէմ
նմա և զաւակաց նր , որք ծնանելիք էին
՚ի նմանէ : Եւ այսպէս եղև սո աջին պատ-
ճառ անիծից մեղքն աղամայ նախահօրն
մերոյ : Երկրորդն է մեղք որդւոյն աղամայ ,
որք ամենեքեան եղէն մեղանչականք . Ուստի
Դաւիթ մարգարէն ՚ի սաղմոսն 13. ՚ի թիւն
3. այլև ՚ի սաղմոսն 52. ՚ի թիւն 4. ասէ .
Ամենեքեան խոտորեցան ՚ի միասին ևսնալի-
տանայան : ոչօք է որ առնէ զբարի և չէ ոք
մինչև ՚ի մի : Քանզի այնքան յաճախեցան
՚ի նոսա մեղք , մինչզի մոռացեալք զամօն
Ճշմարիտ ,

Ճաշմարիտ , սկսեցին պաշտել զարարածս ,
 սցսինքն , զաստեղս , զարեգակն , զլուսինն ,
 զգարինս , զծառունս , և զայլս իրս ձեռա-
 կերտս : Եւ այսպէս մեղանչելով ընդէմ մյ
 համայնք ծնունդք աշխարհի , հեռացան
 յարքայութեն երկնից և անկան իններքոյ անի-
 ծից : Ուստի կամելով մոն մյ բառնալ զա-
 նէծն զայն և օրհնել զմարդիկ , և ածել զնո-
 րս ի ճանապարհս ուղղութե և կեցութե ,
 կոչեաց զաբրահամ և ասաց ջնա , ի զաւակե
 քում և օրհնութի ընկալցին համայք ծնունդք
 երկրի : Եւ զսոյն խոստումս կրկնելով առ
 իսաակ , և առ Յակոբ յորգին իսաակայ ի գիրս
 ծննդոց , ի իղլուխն 26. ի թիւն 2. ասէ . ՄԻ
 իջաներ յեդիպտոս , այլ հանդիր յերկրին ,
 զոր ասիցեմ քեզ , և պանդխտեաց ինմա ,
 և եղեց զնդ քեզ , և օրհնեցից զքեզ . զի քեզ
 ևս երման քում տաց զէնաւս գաւառս զայ-
 դոսիկ , լնլով զերդումն , զոր խոստացայ
 աբրահամու հօր քում . և բազմացուցից զսերմն
 քո ի բրե զաստեղս երկնի , և տաց յեղնորդաց
 քոց զէնաւս գաւառս զայդոսիկ , և օրհնես-
 ցին իսերման քում մմք ազգք , երկրի : Բո-
 խանակ զի հնազանդեցեալ եղև աբրահամ
 ձայնի իմում և պահպանեաց զհրամանս ,
 և զպատուիրանս իմ . և զարարողութիս և զօրէնս .

պահեաց : Եւ ի գլուխն 28. ի թիւն 11. ղ Յակոբայ ասի , թէ Ննջեաց ըն նոյնում տեղւոջ և ետես յերազս զսանդուխտ կացեալ ի վի երկրի , որոյ կատարն հասեալ յերկին , և հրեշտակս ան , որք ելանէին և իջանէին ընդ նա , և զտր որ յենեալ ի սանդուխտն ասեր ինքեան , Էս եմ տի ան աբրահամու հոր քոյ , և ան ի սասակայ , զերկիրդ յորում ննջես , քեզ տաց և սերման քում , և եղիցի սերմն քո ի բրեզիոշի երկրի , և ընդարձկեսցիս յարեմուտս և յարեւելս , ի հիւսիս , և ընդ հարաւ : և օրհնեսցին ի քեզ և ի սերման քում հանուրք ցեղք երկրի : և եղէց պահապան քո . յոև Ճեպիցես , և վերածից զքեզ ի յերկիրս այս , և ոչ թողից մինչև համալրեցից զքնաւս , զորս ասացի : Աստուստ յայտ է . թէ որպէս համայնք ազինք երկրի ընդունելոցք իցեն զօրհնութի ի զաւակին Աբրահամու , ի սահակայ , և Յակոբայ , որէ ինքն քո :

Եւ քանզի Յակոբայ երկուտասան որդիք ծնան , որք և յերկուտասան ցեղս բաժանեցան . Ուստի տեսանել պարտէ մեզ , թէ յորմէ ցեղէ ընտրեալիցէ ան զքո զորդի իւր ըստ մարմնոյ : Եւ այս յայտնի ի բանիցն Յակոբայ նահապետի , որ ի գիրս ծննդոց ի գլուխն 49. ի թիւն 10. մինչ օրհնէր զՅուդա որդի

դի իւր ասաց , Մի բարձցի գայիսոն 'ի Յուդայէ , և դուքս 'ի Երանայ նորա , մինչև գայցէ , որ առաքելին է , և նա եղիցի ակնկալութի հեթանոսաց : Այլե 'ի Բանիցն Եսայեայ , Որ 'ի գլուխ 11. 'ի թիւն 10. ասէ , 'Յառուր յայնմիկ արմատն Յեսեայ , որ կայ 'ի նշան ժողովդոց , զնա հեթանոսք աղերսեսցեն , և եղիցի գերեզման նր փառաւոր : Ապա ուրեմն այն է քս , առ որ հեթանոսք ակնունէին , որ և եղև ծնիցեալ 'ի զաւակեն Յեսեայ 'իցեղէն Յուդայի : Իսկ եթէ Ճշմարտապէս և հաւաստապէս այն է քս 'յոր ազգ և աղինք յուսացեալք էին , առ 'ի ընդունել զօրհնութի , ուրեմն նա է իսկապէս դուքս , մարգարէ , հովիւ , քահանայ , թագաւոր , փրկիչ , օրինադիր , տր և ամբ , որ պարգևեաց զօգնութի մարդկան , որում և ամբք պարտական է զծառայական երկրպագութի մատուցանել :



Գլուխ Երրորդ .

Յաղագս Թէ քսէ Ճմարիտ Իշխան :



Զխանութիւն քի հաւատի նախ Իբանիցն Միքիսայ Մարգարէին, որ ի գլուխն 5. իթիւն 2. ասէ , Եւ դու Բեթղէհէմ Եփրատայ , փոքրիկ ես իհազարս յուզայ , իթէն Էլցէ ինչ , որ իցէ տիրող իյիսրայէլ : Երկրորդ իբանիցն Եսայէայ , որ ի գլուխն 55. իթիւն 3. ասէ Զիջուցէք զունկն ձեր , և Էկէք առիս , լարուք , և Էկէցցէ հոգի ձեր , և հարից ընդ ձեզ զուխտ յաւիտենական , զողորմութիւն Գաւթի զհաւատարիմս , Ահաւասիկ Էտու զնա վկայ ժողովրդոց , Դուքս և հրամանատու հեթանոսայ : Ահաւասիկ զազն զոր ոչ զիտէիր կոչեացէս ; Լազինք , որք ոչ ծանեան զքեզ առքեզ ընթացին , վս տն ւայ քոյ Լսրբոյն իսրայէլի , զի փառաւորեայ զքեզ :

Երրորդ իբանիցն Երեմիայ մարգարէի , որ իգլուխն 33. իթիւն 14. ասէ . Ահա առուրք զան , ասէ տր , Եյարուցից զբան բարի , զոր խօսեցայ ցտունն իսրայէլի , և ցտունն Յուդայ , յառուրսն յայնոսիկ և ի ժամանակին յայնմիկ

բողբոջեցուցից Ղրաւթի զբողբոջն 'արդարութե , կարասցէ զդատաստանն և զարդարութի 'իյերկրի , յաւուրնն 'յայնոսիկ կեցուցի Յուդան , և երուսաղէմ' բնակեացի ապաւինօրէն , և այս է անունն , զոր կոչեսցեն 'նմա , տր' արդարմեր : Եւ զկնի այլոց բանից 'ի թիւն 20. ասէ . Չայսոսիկ ասէ տր . Էթէ խանգարուն կառիցէ լինիլ դաշն իմ ընդ տունջեանն , և դաշն իմ ընդ գիշերոյ , զի մի' լինիցի տիւ և գիշեր 'ի ժամանակի իւրում : Եւ դաշն իմ խանգարուն գոլ կարասցէ ընդ Գաւթի ծառայի իմում , զի մի լինիցի 'ինմանէ օրդի , օր թաս գաւօրիցէ 'յաթօռ 'նր : Եւ զկնի տակաւուց , 'ի թիւն . 25. ասէ ' Չայսոսիկ ասէ տր , Էթէ զդաշն իմ 'իմէջ տունջեանն և գիշերոյ , և զօրէնս երկնի և երկրի ոչ եդի , ապա և զսերմն Յակոբայ և Գաւթի ծառայի իմոյ 'ի բացհերքեցից , զի մի սունուցում 'ի սերմանէ 'նորս զիշխանս սերմանն Աբրահամու , իսսակայ , և Յակոբայ , զի վերածից զդարձ 'նոցա , և տղորմեցայ 'նոցա : Բանք այսոքիկ , զորս ար ար խօսեցաւ ընդ տանն Յուդայի , խոստմունք էն յաղագս քի , որ է ծագունն արդարութե , առ 'ի ուղղել զարդարութի 'իյերկրի , քանզի անունն 'նր է տր' արդարմեր : Ուրտի 'ի ժամանակի գալստեանն 'նր , կեցուցեալ լիցի

լիցի Յուդա, զի Է ինքն Ճշմարիտ կեցուցիչ :
 Եւ որպէս տիւ և գիշեր պակասիլ ոչ կարեն, զի մի լինիցին ի ժամանակի իւրեանց, նոյն պէս պակասիլ ոչ կարէ սերն Դաւթի և որդւոց նր, որք նստցին յաթոռ նր : Զսոյն հաստատէ ևս ամ. Եզեկիէլիւ մարգարէիւ ի գլուխն. 34. ի թիւն. 22. ասելով, Եւ կեցուցից զհօտն իմ, և ոչ ևս եղիցի ի յառիշտակութի, և դատեցից իմէջ խաշին և խաշին, և յարուցից ի վր նոցա զհովիւ մի, որ հովուիցէ զնոսա, զծառայն իմ Դաւիթ, ինքն հովուեսցէ զնոսա, և ինքն եղիցի նոցա ի հովիւ : Իսկ էս տր, եղէց նոցա յամ, և ծառայն իմ Դաւիթ ի իշխան իմիջի նոցա; էս տր խօսեցայ : Իբանս յայտոսիկ կոչէ ամ զքս Դաւիթ, այսինքն, ի զաւակի Դաւթի, որ եղև Ճշմարիտ հովիւ և իշխան իմէջ ժողովրդեան իւրոյ : Ապա ուրեմն քս Է Ճշմարիտ դուքս, և իշխան, և հովիւ, և թագաւոր և տր ի զաւաստի Դաւթի :



Գլուխ Չորրորդ .

Յաղագս թէ քԾ Է ևս Մարգարէ :



Գիրս երկրորդօրինի 'ի գլուխն' 18, 'ի թիւն. 15. Ասէ Մովսէս . Չմարգարէ 'յազգէ քու մէ , և 'յեղբարց քոց , իբրև զիս , յարուսցէ քեզ մօր մօր քո , նմա լիցես , ոպ 'հայցեցեր 'ի տէ մայ քումէ 'ի Քօրեփ , յորժամ գումարն ժողովեալ եղև , և ասացեր , ոչ յաւելից լսել զձայն մօն մայ իմոյ , և զհուրդ զայդ մեծագունեղ ոչ ևս տեսից , զի մի մեռաց . Եւ ասէ 'ցիս մօր , զամ' ինչ բարւոք խօսեցան , զմարգարէ յարուցից 'նոցա 'ի միջոյ եղբարց իւրեանց նման քեզ , և եդից զբանս իմս 'ի բերանոջ նր , և խօսեսցի ընդ 'նոսա զամ' ինչ զոր 'հրամայեցից նմա ; իսկ որ զբանս նր , զորս խօսեսցի 'յանուն իմ' ոչ կամիցի լսել , Ես վրէժխնդիր արտակայացայց : Ապա ուրեմն ըստ բանից սցսոցիկ քԾ Է ևս Մարգարէ :



ԳՂՈՒԽ ՀԻՆԿԵՐՈՐԴ .

Յաղագս Թէ ՔԽ Է ԿԵԿՈՒԿԻՃ :



Որինչ իվերոյ ստացաք յաղագս օրհնութեն, զոր ընդունելոցք էին ազգք և ազկինք իքսէ, նոյնքն հաստատեն մեզ թէ քս իցէ ևս Կեցուցիչ : Քանզի ստացաւ, թէ յաւուրսն յայնոսիկ Կեցուցեալ լիցի Յաղա : Բայց Եսայի մարդ արէն զճշմարտութիւն զայս հաւատաւելով ի գլուխն . 45. և ի թիւն 8. առէ, Յօղեցէք Երկինք իվերուստ և ամացք անձրևիցեն զարդարն, բանիցի Երկիր և բողբոջիցէ զԿեցուցիչն : Իսկ ի գլուխն . 62. ի թիւն . 1. առէ, Վս սիւնի ոչ լռեցից, և Վս Երուսաղէմաց ոչ հանդեսցց, մինչև Երանիցէ իբրև զճառագայթ արդարն նր, և Կեցուցիչն նր ունի զզամբար վառիցի, և տեսեն ազկինք զարդարն քո, և բնաւք Թագաւորք զվեհասիառն քո, և Կոչեսցի քեզ անուն նորոգ, զոր բերան ան անուանեսցէ : Եւ զկնի սահաւոց ի թիւն . 11. առէ : Ասացէք զստեր սիւնի, ահաւասիկ Կեցուցիչն քո գայ . Ահաւասիկ վարձ իւր ընդ իւր, և գործ իւր ստացի իւր :

իւր : Ապա ուրեմն իբանից յայսցանէ յայտ
է թէ քս կեցուցիչ իցէ :

Գլուխ վեցերորդ .

Յաղագս թէ քս Քահանայ է և տր :



Հմարտութիւն այս հաւաստի
պարզապէս ՚ի Դաւթէ մար-
գարէէ , որ ՚ի սաղմոսն . 109.
իթիւն . 1. խօսելով յաղագս ,
քի ասէ . Ասաց տր ՚յտր իմ ,
նիստ ընդաջմէ իմէ , մինչև

էդից զճշնամիս քոյս պատւանդան ուտից քոյ :
Էւ զինի սակաւուց ՚իթիւն . 4. ասէ . Էրդաւ-
տր , և ոչ զղջասցի , դու ես քահանայ իյաւի-
տեան , ըստ կարգին Մեքիսէթէկի : իբանից
յայսցանէ Երեւ թէ քս տր է և քահանայ .
Քանզի Մեքիսէթէկս այս Էղև միանգամայն
Թագաւոր և քահանայ , որ առաջի Աբրահա,
մու ըստ սովորութե իւրում մատոյց զհաց
և զգինի , մինչ դարձեալ գայր ՚ի կոտորածէ
Թագաւորացն , և օրհնեաց զնա : Իսկ Աբրա-
համ ետ նմա զտասանորդս յամենից ընչիցն ,
զորս աւար հարեալէր , ըստ որում ասէ Մով-
սէս ՚իդիրս ծճնդոց ՚ի Գլուխն . 14. ՚իթիւն .

18. Իսկ Մելքիսեթէկ արքայն Սաղիմայ յառաջբերեալ զհաց ևզգինի, քանզի էր քահանայ աս բարձրագունեղի, օրհնեաց զնա, ևասաց, օրհնեցեալ Աբրահամ ասլ բարձրեջով, որ եստեղծ զերկին ևզերկիր : Եւ օրհնեցեալ ասն բարձրեալ, որոյ նախախնամելովն թշնամիք իձեռս քոյս են : Եւ ետ նմա զտասանորդս յամենից : Ապա ուրեմն քս է տի ևքահանայ ըստ կարգին Մելքիսեթէկի :

Գլուխ Եօթներորդ .

Յաղագս թէ քս է օրինադիր ևթագաւոր :



Օրինադիր գոլն քի հաւաստեմք այնու, զի օրէնքն Մովսէսի փոփոխեցան ինմա, քանզի ինախնուն քահանայք հնոյ օրինին քահանայագործէին ըստ կարգին Ահարոնի, ևորք իցեղէն Ղևեայ զոչխարս ևզեզինս մատուցանէին : Բայց քս գոլով քահանայ իցեղէն Յուդայի ևըստ կարգին Մելքիսեթէկի զհաց ևզգինի մատոյց . Եւ զի քահանայութիւն, ևպատարագքն փոփոխեցան, փոփոխեցան ևս օրէնք : Ուստի Դաւիթ իսաղմոսն

մոսն 39. Իթիւն 7. խօսելով զս մատուցման պատարագին, իդէմս քի ասէ, զզոհն և զպատարագ ոչ կամեցար, այլ զլսելիս կատարեցեր ինձ։ Զողջակէզն և զվս մեղացն ոչ խնդրեցեր; յայնժամ ասացի։ Ահա գամ։ Ըն գլխով գրգոյն գրեցեալէ զինն, զի առնիցեմ զկամն քո; Երիմ կամեցայ, և զօրէնն քո իմէջ սրտի իմոյ։ Իբանից յայսցանէ յայտնապէս երևի, թէ ամ, որ հրամայեալէր զպատարագն, որվս մեղացն մատուցանել, մերժեաց և հերքեաց։ Ուստի ասէ քս, թէ Ահա գամ, առ ի քահանայագործել ըստ կարգին Մեղքիսէթէկի, և ըստ կամաց քոց զպատարագ մատուցանել։ Իսկ յաղագս լուծման և փոփոխման օրինացն Մովսէսի. Երեմիաս ուսեալ իմնէ ի գլուխն 31. Իթիւն 31. ասէ. Ահա և ասիկ աւուրք եկեացեն, ասէ Եր, և հարից ընդ տանն իսրայելի և ընդ տանն Յուդայի զուխտ նոր, ոչ ըստ դաշանն, զոր կռեցի ընդ հարոյն նոցա, յաւուր յորում կալայ զլեռանէ նոցա, զի արտածիցէի զնոսսս յերկրէն Եգիպտոսի, զդաշն, զոր խանգարուն արարին, և ես տիրեցի նոցա, ասէ Եր։ Իբանից յայսցանէ ամայնոց յայտնապէս երևի թէ օրէնքն Մովսէսի, և պատարագքն, և սկիւ քահանայութիւն Ահարոնի զփոփոխումն առեալք

առեալք իցեն : Իսկ քս գողով քահանայ նորոգ ըստ կարգին Մէլքիսեթէկի , իցէ օրինադիր , մարգարէ , իշխան , դուքս , կեցուցիչ , տը , և թագաւոր իցեղէն Յուդայի :

Գլուխ Ութերորդ .

Յաղագս թէ որպիսի թագաւոր իցէ քս :



Ո՛ր այս , թէ արդեօք թագաւորութին քի իցէ միայն ի վր որդւոցն իսրայէլի , և ժամանակաւոր , թէ ի վր բոլորից տիեզերաց , և մշտնջենաւոր , պատասխանէ : Դաւիթ մարգարէն իսաղմոսն 2. ի թիւն 6. իղէմս քի ասելով , Իսկ էս կացուցեալ եղէ թագաւոր ի նմանէ ի վր սիոնի լերին սրբոյ նորա , քարոզող զհրաման նր : Տի ասաց ՚ցիս որդի իմ էս դու , էս այսօր ծնայ զքեզ : Խնդրեա ՚յինեն , և տայ քեզ զհեթանոսս ի ժառանգութի քո , և ի յատայողութի քո զեզերս երկրի : Հովւեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ , և իբրեւ զանօթ բրտի փշրեսցես զնոսա : Եւ արդ՝ թագաւորք իմացարուք , հմտացարուք որք ողատէք զերկիր : Իբանից յայսպանէ յայտնապէս

նապէս երևի թէ քս է Թագաւոր Բոլորից տիեզերաց , և Թագաւորութիւնն է՝ տրեցեալ յայն ի ժառանգութիւն մշտնջենական : Վս որոյ ով Թագաւորք և զատաւորք երկրի իմացարուք և իմստաւէք , ծառայելով նմա երկիւղիւ , և ցնծալով առաջի նր դողութիւն :

Չսոյն ճշմարտութիւն ամարգարէն Էսայի ի գլուխն 2. ի թիւն 2. հաստատէ ասելով , Եւ եղիցի յաւուրս յետինս նախապատրաստեցեալ լեառն տունն տնն ի գագադան լերանց , և վերասցի ի վր Բլրոց , և հեղիցին առ նա ամք հեթանոսք , և երթիցեն ժողովուրդք Բաղուժք , և ասասցեն , Եկէք և ելցուք ի լեառն տնն , և ի տունն այն Յակոբայ , և ուսուցէ մեզ զճանապարհս իւրս , և շրջեսցուք ի շաւիղս նր , զի իսիոնէ ելցէ օրէն , և քան տնն յերուսաղէմ : և դատեսցէ զհեթանոսս , և յանդիմանեսցէ զժողովուրդս Բաղուժս :

Եւ Միքիաս ի գլուխն 4. ի թիւն 1. ասէ , Եւ եղիցի : Ըն յետնում աւուրց եղիցի լեառն տունն տնն նախապատրաստեցեալ ի գագադան լերանց , և վսեմ ի վր Բլրոց , և հեղիցին առ նա ժողովուրդք , և կանխեսցեն սղինք Բաղուժք , և ասասցեն , Եկէք , Ելցուք ի լեառն տնն , և ի տունն այն Յակոբայ : և ուսուցէ մեզ զճանապարհաց իւրոց , և երթիցուք ի շաւիղս նր :

նք : զի իսիոնէ ելցէ օրէն , և բան մն իյերուսաղէմէ , և դատեսցէ իմէջ ժողովրդոց բազմաց , և կշտամբեսցէ զազինս հզօրս , մինչ յհեռաւորն : Ուրեմն ըստ բանից այսոցիկքս է Թագաւոր և ժառանգորդ հանրոյ աշխարհի . որ և դատեսցէ զժողովուրդս , և յանդիմանեսցէ զազինս , և քարոզեսցէ զհրամանս և զօրէնս այ ի վր սիոնի լերին սրբոյ նք . քանզի օրէնք իսիոնէ ելցեն , և բան մն յերուսաղէմէ , և հանուրք ժողովուրդք ընթասցեն առնա իյրնդունել զօրէնս յայ կենդանւոյն , և բնաւք մոլորեալք դարձեալք ի ծանապարհ մն ուղղեսցեն զինքեանս , և գնասցեն զհետքի , որ է իշխան և Թագաւոր և քահանայ , ըստ կարգին Մելքիսեթէկի : Հստ որում ասէ Դաւիթ իսաղմոսն 71. ի թիւն 1. Աժ զդատաստան քո արքայի տուր , և զարդարութի քո որդւոյ Թագաւորի : և զկնի ի թիւն 11. ասէ . Եւ երկրպագցեն նմա ամք Թագաւորք երկրի , ամք ազինք ծառայեսցեն նմա : Զկնի որոյ ի թիւն . 17. ասէ , իցէ անուն նք օրհնեսցեալ իյաւիտեանս , յառաջ քան զարե յարամնայ անուն նք : Եւ օրհնեսցին ի նմա ամք ցեղք երկրի , ամք ազինք մեծացուցեն զնա :

Առայս վկայութի , ոմանք ընդիմաբանեն ասելով , թէ Դաւիթ զբանս զայսոսիկ վս Սողոմոնի

ղոմնի իցէ ասացեալ : Բայց մեք պատասխա
 նեմք , թէ Սողոմոն ոչերբեք ՚իծովէ մինչև
 ՚իծով Թագաւորեաց , եւ ոչ ևս մինչև ՚իծագս
 աշխարհի : Այլ ոչերբեք երկրպագին նմա
 ամք Թագաւորք երկրի , եւ ոչ ևս ամք ազինք
 ծառայեցին նմա : Այլ ասացեալէ վս քի ոմ
 Էրեւ յայտնասպէս ՚իթիւն 17. ուր ասի, Է-
 օրհնեսցին ինմա ամք ցեղք երկրի, ամք ազինք
 մեծացուցեն զնա . որ միայն պատշաճի քի ,
 քանզի ՚ինմա ամք հեթանոսք ընկալան զօր-
 հնութի : Ապա ուրեմն քս տիրեսցէ ՚իծովէ
 մինչև ՚իծով , և ՚իգետոց մինչև ՚իծագս աշ-
 խարհի , և ամք Թագաւորք երկրպագեն
 նմա , և ամք ժողովուրդք ծառայեսցեն նմա :
 Աստուտ՝ Թագաւորութին քի ոչէ միայն
 ՚իվր միոյ, կամ երկուց մասանց աշխարհի, կամ
 ժամանակաւոր , այլ ՚իվր բոլորի աշխարհի
 ամշտնջենաւոր : Ուստի ասէ Դաւիթ ՚իսաղո-
 մոն . 131. ՚իթիւն . 10. Վս Դաւթի ծառայի
 քոյ , մի դարձուցաներ զերեւն քրիստոսի քոյ :
 Երդուաւ տր Դաւթի զճմարտութի , եւ ոչ
 զրկեսցէ զնա : ՚իպտղոյ որովայնի քոյ եղից ՚իվր
 ամբողջ քոյ : Եթէ պահիցեն որդիք քոյք զկը
 տակն իմ , և զվկայութիս զայստսիկ , զորս ու
 սուցից նոցա : Էւ որդիք նոցա մինչև յյաւիթ
 տեան նսային ՚իվր ամբողջ քոյ :

Դարձեալ ՚իսաղմոսն ՏՏ. ՚իթիւն 21. ասէ ;
 Փտի զդաւիթ ծառայ իմ : ձիթով սրբով իմով
 օծի զնա : Քանզի ձեռն իմ օգնեսցէ նմա ,
 և բազուկ իմ զօրացուցէ զնա : Ոչինչ շահեսցի
 թշնամին ՚ի նմա , և որդին անիրաւութե մի
 առադրիցէ մնասել նմա : Եւ համահատից
 յերեսէ նորա զթշնամիս նորա , և զատիչս
 նորա ՚ի փախուստ դարձուցից : Եւ ճշմարտու
 թի իմ , և ողորմութի իմ ընդ նմա , և յանուն
 իմ բարձրացի եղջիւր նորա : Եւ եդից
 ՚ի ծովու զձեռն նորա , և ՚ի գետս զաջ նորա :
 Նա կարգացէ առ իս , հայր իմ էս դու :
 Եւ իմ , և Քերընդունօղ կեցութե իմոյ : Եւ էս
 անդրանիկ եդից զնա , բարձր գերբան զթագա
 ւորս երկրի : ՚ի յաւիտեան պահեցից նմա զո
 ղորմութի իմ , և կտակն իմ հաւատարիմ
 նմա : Եւ եդից ՚ի յաւիտեանն յաւիտենի
 զսեբն նորա , և զգահոյկ նորա որպէս օրն երկ
 նի : Իսկ էթէ լքանիցեն որդիք նորա զօրէնն
 իմ , և ՚ի դատաստանս իմս ոչ շրջիցին : Եթէ
 զարդարութիս իմս անյարգիցեն , և զպատ
 ւիրանս իմս ոչ պահիցեն : Այցելից գաւազա
 նաւ անիրաւութեց նոցա , և ձաղանօք մեղաց
 նոցա : Բայց զողորմութի իմ ոչ տաքացրեսցից
 ՚ի նմանէ , և ոչ մնասեցից ՚ի ճշմարտութե իմում :
 Եւ ոչ անյարգեցից զկտակն իմ , և որք
 յառաջա

յառաջագոյն իշրթանց իմոց , ոչ արարից
խանգարունս : Մի անգամ երգւայ իսրբոջ
իմում եթէ Դաւթի ստիցեմ : սերմն նո-
րա իյաւիտեան մնասցէ : Եւ գահոյկ նորա
ոպ զարեգակն առաջի իմ , և ոպ զլուսինն
կատարեալ իյաւիտեան : և վկայ իյերկնի
հաւատարիմ : Ապա ուրեմն ըստ բանից սցսո-
ցիկ քս է որդի մյ անդրանիկ , և Թագաւոր
գեր քան զենաւս Թագաւորս երկրի , որոյ
սթոռն իյաւիտեան մնալոց է :

Ուստի մարգարէն ոչ ասէ , ոպ օրն երկրի
որ վերջանայ ի գիշերի և ծածկի ի յսուերաց .
այլ ոպ օրն երկնի , առ որ ոչ երբէք հասա-
նին սուերք , զի լոյս արեգականն միշտ զեր-
կինս լուսաւորէ , և պայծառացուցանէ ճառա-
գայթիւք իւրովք : Եւ եթէ որդիք նր , այս-
ինքն , հաւատացեալքն ինա ոչ սլահիցեն
զօրէնս նր , գաւազանիւք այցարասցէ մեղաց
նոցա , այլ զողորմութի իւր ոչ արգելցէ ,
և զուխտ իւր ոչ անյարգեսցէ : Եւ զօրինչ խօ-
սեալիցէ , ոչ երբէք ապուսեսցէ : Եւ այսպէս
զաւակն դաւթի քս իյաւիտեան կացցէ , և
թոռ նորա ոպ զարեգակն առաջի մյ միշտ
մնասցէ : և ոպ զլուսինն լրացեալ և կատարեալ
վկայ հաւատարիմ իյերկնս եղիցի :

Քսոյն ճշմարտութի հաստատէ ևս Դանիէ

Իգլուխն. 7. Իթինն 9. ասելով, Հայեի. մինչև
գահոյկք եղան, ևհինն աւուրց 'նատաւ,
հանդերձ 'նր սպիտակ իբրև զձինն, ևհերք
զլիտյ 'նորա իբրև զասր մաքուր :

Եւյետ սակաւուց 'իթինն. 13. ասէ. Հայ-
եի ուրեմն 'իտեպէան գիշերոյ, ևահա ընդ
ամսս երկնի իբրև զորդի մարդոյ գայր՝ ևմինչ
'ցհինն աւուրց ժամանեաց, ևյանգիման 'նո-
րա մատուցին զնա. Եւ էտ 'նմա զպետու-
թի, ևզպատիւ, ևզթագաւորութի, ևամք ժո-
ղովուրդք, ցեղք, ևլեզուք 'նմա ծառայէն :
Պետութի 'նր պետութի յաւիտենական, որ
ոչ բարձցի, ևթագաւորութի 'նորա, որ ոչ եղ-
ծանի : Արդ՝ ով է որդին մարդոյ, որ մա-
տեաւ առ հինն աւուրց, ևամ էտ 'նմա զպե-
տութի. զպատիւ, ևզթագաւորութի, էթէ
ոչ ինքն քս, որում բնառք ազինք ևազգք
ծառայելոցք են : Ապա ուրեմն թագաւորու-
թին քի է յաւիտենական ևանվաստան, ևկա-
րողութի 'նր է անբաւելի, զի է ճշմարիտ
դուքս, ևիշխան, ևմարգարէ, ևհովիւ, ևքա-
հանայ, ևօրինադիր, ևկեցուցիչ, ևթագաւոր,
որում հանուրք թագաւորք երկիրպագելոցք
են. ևսթոռ 'նր ոպ զօր երկնի, ևոպ զարե-
գակն ևզլուսինն լրացեալ իյաւիտեան, ևթա-
գաւորութին 'նր է անեղծանելի : յորմէ ևհա-
նուրք

նուրք զօրհնութի ընկալցին, և զկէցութի գտ-
ցեն, որում և երկրպագանիցեն իբր պարսւան-
դեցեալք իբարերարութէ նորին: Աստուստ՝
նվ է, որ կարիցէ ուրանալ զիշխանութիւն քի,
կամ արգելուլ, զի ազինք երկրի կամ թա-
ղաւորք մի՝ ծառայիցեն նմա: Քանզի ինքն
ամբ հրամայեաց, զի իսիրտ երկրի երկրպագ-
ցեն նմա:

Գլուխ իններորդ

Յաղագս Գալստեանն Քի:



Ամանակ գալստեանն քի նշա-
նակեցաւ յստաջագոյն՝ ի Յա-
կոբայ նահապետէ, որ իյօր-
հնէլն զորդին իւր Յուդա
իգիրս ծննդոց ի գլուխն 49.
իթիւն. 10. ասաց, Մի բառ-
նիցի գայիսոն ի Յուդայէ, և դուքս յերանաց
նորա, մինչև գայցէ որ առաքելին է, և նա
էզիցի անկալութի հեթանոսաց:

Այսինքն, Քս յս խոստացեալն Աբրահա-
մու, իսսակայ. և Յակոբայ, որում աննու-
նէին հեթանոսք առ ի ընդունել զօրհնու-
թի, ոչ եկեացէ յորքան ժամանակս գտանի-

ցին թագաւորք և իշխանք 'ի ցեղէն Յուդայի,
այլ եկեացէ յայնժամ, մինչ թագաւորք և իշ-
խանք պակասեսցին 'ի նմանէ : Բայց որդիքն
խորսյէլի զքանս զայսոսիկ ոչ իմացան, և ոչ ծա-
նեան զժամանակ գալստեան 'նր : Ուստի Յով-
սէէ մարգարէն 'ի գլուխն . 3. 'ի թւն 4. ասէ .
Ձի զաւուրս բազումս 'նայցին որդիքն իս-
րայէլի առանց թագաւորի, և առանց իշխա-
նի, և առանց պատարագի, և առանց սեղա-
նոյ, և առանց եփուտի, և առանց թերափի,
և զկնի այսոցիկ դարձցին որդիքն իսրայէլի
և ինդրեսցեն զտօր անձ իւրեանց, և զԴաւիթ
արքայն իւրեանց : Այսինքն, որդիքն իսրայէլի
տգիտանալով զժամանակ գալստեանն քի սպա-
սեսցեն զամս բազումս թարց թագաւորի և իշ-
խանի . ինկ 'ի վախճանի տեսանելով զմո-
լորուծիս իւրեանց, դարձցին և ինդրեսցեն
զտօր անձ իւրեանց, և զյս քս, որ է որդի
Դաւթի ըստ մարմնոյ : Եւ այս յայտնի իմն
է, քանզի որ 'ի ճանապարհէն իւրմէ դար-
ձեալ ընդ կրունկն, զայլ իմն ճանապարհ
խնդրէ, ցուցանէ, թէ 'նախ մոլորեալէր :
Այլ և որ զայլ իմն իր խնդրէ, ցուցանէ, թէ
ոչ ունիցի զնոյնն : Ըստ սոյմ ևս երայեցիք
կալով զամս բազումս զրկեցեալք 'ի թագաւո-
րոց, 'ի իշխանաց, 'ի պատարագէ, և 'ի սե-
ղանոյ

ղանոյ , ոսկ տեսանի նայամիկ ժամանակի ,
 "նորում" գոն ցրեցեալք յամուրեք , և ըմբռ-
 նեցեալք 'ի գերութիս ; 'ի վախճանի դառնա-
 լոցք էն առ տի ամեն իւրեանց , և խնդրելոցք էն
 զԴաւիթ թագաւորն իւրեանց , այսինքն , զքս ,
 զոր մեք այժմ եկեալ ճանաչեմք , և նորայի-
 մարեցեալք տգիտանան , և շրջին թափառաց
 կանք :

Գլուխ Տասներորդ .

Յաղագս թէ քս ծնանելոյ գոյր 'ի կուսէն
 'ի Բեթղէհէմ քաղաքի :



Պակասիլ թագաւորացն և իշ-
 խանացն 'իցեղէն Յուդայի ,
 ծնաւ քս և նստաւ 'յաթոռն
 Դաւթի , առ 'ի հաստատել
 զտրութի 'նորա մինչև 'յաւի-
 տեան ; Որոյ ծնունդն եղև
 'ի կուսէն Մարիամու 'ի Բեթղէհէմ քաղաքի ,
 ըստ որում ճառէ մարգարէն Եսայի 'ի գլուխն
 7. 'ի թիւն 14. Ահա կոյս յղասցէ , և ծնցէ
 զորդի , և կոչեսցի անուն նորա Էմանուէլ ;
 Եւ Միքիաս մարգարէն 'ի գլուխն 5. 'ի թիւն
 2. առէ , Եւ դու Բեթղէհէմ Եփրատայ փոց
 րիկ

րիկ էս 'իհազարս Յուդայ, 'իքէն էլցէ ինձ,
որ իցէ տիրող 'իյիսրայել. Ապա ուրեմն հա-
ւաստապէս քն ծնիցեալ էղև 'իկուսէ 'իբէթ-
ղէհէմ քաղաքի:

Գլուխ Մեռաւաներորդ՝

Յաղագս թէ Հարկաւոր էր գալուստն, քարո-
ղութիւն, և սքանչելագործութիւն Քի:



Քն օրինադիր գոլ հաստա-
տեցաք 'իվերոյ, Ուրեմն Հար-
կեր նմա, զի եկեալ զօրէնս
և զպատուիրանս ան քարողի-
ցեր, ոչ միայն 'իվր լերինն
Սիոնի, այսինքն, 'իյերուսա
ղէմ, այլև 'ըն բոլորում աշխարհի. Ուստի
Դաւիթ խօսելով 'իդէմս քի 'իսաղմոն. 2.
'իթիւն. 6. ասէ, իսկ էս կացուցեալ էղէ թա-
գաւոր 'իվր սիոնի լերին սրբոյ նի, քարոզէլ
զհրաման նորա: Չոյն և Եսայի և Միքիա
վկայեցին 'իվերոյ ասելով, թէ 'ի սիոնէ էլցէ
օրէն, և բան տն 'յերուսաղէմէ, և թէ հա-
նուրք ազինք և թողովուրդք ընթանալոցք իցէն
առ նա ասելով, եկացք էլցուք 'ի լեառն տն,
և 'իտունն ան Յակոբայ, և ուսուցէ մեզ զճա-
նապարհս

նապարհս իւրս , և գնացուք 'ի շաւիղս նորա : Գարձեալ նոյն Եսայի մարգարէն 'ի գլուխն 42. 'ի Թիւն 1. ասէ . Ահա առիկ ծառայ իմ , վերընկալայց զնա . Ընտրեցեալն իմ , ընդ որ հաճեցաւ հոգի իմ . Էտու զոգի իմ 'ի վր 'նորա . զգատաստան հեթանոսաց յառաջբերցէ , ոչ աղաղակեացէ , և ոչ աչառեացէ , և ոչ լիցի ձայն նորա արտաքս , զեղեգն ջախջախեցեալ ոչ փշրեացէ , և զպատրոյկն ծխուն ոչ շիջուացէ , 'ի ճշմարտութե արտածիցէ զգատաստան , ոչ եղիցի տրտում , և ոչ ամբոխուն . մինչև գնիցէ 'ի յերկրի զգատաստան , և օրինի նորա կղզիկք սպասեցէն : Իսկ 'ի գլուխն 61. 'ի Թիւն 1. Ասէ , Հոգի ւն 'ի վր իմ , վն այնր զի օծեալիցէ ւն զիս , առ 'ի յաւետարանել հեղոց առաքեաց զիս , զի բռնեցէմ զբեկեցեալս արտիւ , և քարոզիցէմ գերեաց զներողութի , և փակեցելոց զբացումն , զի քարոզիցէմ զամ ւն ընդունելի , և զօր վրեժխնդրութե ւն մերոյ , զի մխիթարիցէմ զամս սգաւորս , և այլն : Արդ 'ի քանս յայտոսիկ խօսի քն զինքենէ թէ օծեալ իցէ զինքն ւն , և առաքեալիցէ 'յաշխարհ , զի տայցէ զառողջութի հիւանդայ , և քարոզիցէ գերեաց զազատութի , բանտարկեցելոց զփրկութի , և զամ հաճոյական ,

այսինքն ,

այսինքն, զժամանակ ընդունելի նորում պարտէ առնել զսպաշխարութի, զի մերձ է օր վրէժխնդրութե, և օր հատուցման, որ է օր մեծի դատաստանին : Քան զի զայնոսիկ, որք ոչ հաւատան բանին քի, և ոչ կամին լսել նմա, դատապարտելոց է անձ : Ըստ որում ստէ Մովսէս իյերկրորդօրինի իգլուխն 18. իթիւն 17. Զմարգարէ յարուցից նոցա իմիջոյ եղբարց իւրեանց նման քեզ, և եղից զբանս իմ ըն բերանոջ նորա, և խօսեսցի առ նոսա զամ ինչ, զորս հրամայեցից նմա. իսկ որ զբանս նորա, զորս խօսիցի յանուն իմ, լսել ոչ կամիցի, եւ վրէժխնդիր արտակայացայց . Ապա ուրեմն հարկաւորէր գալուստն քի, և քարոզութի նորա : Այսպէս ևս սքանչելագործութիւն նորա, ըստ որում ասէ Եսայի իգլուխն 35. իթիւն 4. Սաացէք փոքրահոգեաց, զօրացարուք և մի՛ երկնչիք, ահա ասիկ անձեր զվրէժխնդրութի հատուցման օռօածեսցէ, անձ ինքն էկեսցէ, և կեցուցէ զձեզ յայնժամ բացցին աչք կուրաց, և ականջք խլից ընդարձակիցին, յայնժամ ցաթքեսցէ կաղն իբրև զեղջրու, և բացեսալ եղիցի լեզու համերց : իսկ իգլուխն 42. իթիւն 6. ասէ . Ես ան կոչեցի զքեզ արդարութե, և կալայ զձեռանէ քումէ, և պահեցի զքեզ, և ետու
զքեզ

զքեզ յուխտ ժողովրդեան , ՚ի լոյս հեթա-
նոսաց , զի բանայցեիր զաջս կուրաց , և ար-
տածիցեիր իյարգելմանէ զկապեցեալն , ՚ի-
տանէ բանտի զնստեալն ՚ի իսաւարի , Ես տր ,
այս է անուն իմ : Ապա ուրեմն ըստ բանից
սյսոցիկ զհռչակումն օրինաց , և զարարումն
մեծամեծից սքանչելեաց ունիմք ՚ի քսէ : Եթէ
ճշմարտապէս ինքն իցէ կեցուցիչ և անձ : քան-
զի ոչ ասէ թէ առաքեացէ անձ ձեզ կեցու-
ցիչ , այլ թէ ինքն եկեացէ և կեցուցէ զձեզ .
Աստուստ՝ նկատելիք էն բանք մարգարեիցն ,
թէ ոպ յարմարք և համաձայնք իցեն միմեանց :

Գլուխ Երկուսասաներորդ

Յաղագս Չարչարանաց և մահւանն քի :



Է որպէս զինի հռչակման
և հրատարակման օրինացն ապարտիցեր
մեռանիլ քի , վը-
կայէ մարգարէն Եսայի ՚ի զը-
լուին . 53. ՚ի թիւն 1. ասելով .
Ո՛ հաւատաց լոյ մերում ,
և բաղուկ տն ում յայտնեցաւ , և լեռացաւ .
իբրեւ զընծիւղ առաջի նորա , և իբրեւ զար-
մատ իյերկրէ ծարաւութե , օջոյ նմա տե-
սակ

սակ , եոջ վայելչութի . և տեսաք զնա , եոջ
 գոյր հայեցւած . և ըղձայաք նմա : Քամահե-
 ցելոյ կյեանորդի արանց , առն ցաւոց , և գի-
 տողի զտկարութի , և իբե թագուցեալ էրես
 նի , և քամահեցեալ . ուստի եոջ վարկաք զնա .
 Քրաւի զսխտածէտութիս մերս ինքն եբարձ ,
 և զցաւս մերս ինքն կրեաց . և մեք համարե-
 ցաք զնա իբրե զբորոտ , և հարկանեցեալ
 շնայ . և խոնարհեցեալ . իսկ ինքն վիրաւորե-
 ցաւ վն անիրաւութեց մերոց , և ձաղեցաւ վն
 չարագործութեց մերոց . խրատ խաղաղութե
 մերոյ ի վի նորա , և հարւածով նորա առող-
 ջացաք . Ամենեքեան մեք իբրե զոչխարս մո-
 ջորեցաք , իւրաքանչիւրոք խոյսետ ի ճանա-
 պարհ իւր , և եղ տր ի նմա զանօրէնութի մե-
 րոց ամենից . մատուցաւ զի ինքն կամեցաւ ,
 և ոջ եբաց զբերան իւր . ոպ զոչխար ի սոսա-
 նունն ածցցի , և իբրե զգառն առաջի խու-
 զողի իւրեան անմռնչասցի , և ոջ բայցե զբե-
 քան իւր , իյանձկութե , և ի դատաստանե-
 քարձաւ , զտոհմն նորա ո պատմեսցե , զի բա-
 ցահատեցաւ իյերկրէն կենդանեաց . վն չա-
 քագործութե ժողովրդեան իմոյ բախեցի զնա ,
 և տացե զամբարիշտս փոխանակ դամբարանի ,
 և զփարթամն փոխանակ մահւան իւրոյ . վն
 այնր զի զանիրուութի ոջ գործեաց , և ոջ
 գտաւ

գտաւ 'նէնգութի 'իբերանոջ 'նորա . Եւ մը
կամեցաւ փշրել զնա 'ի տկարութե . եթէ դնի-
ցէ վն մեղի զհոգի իւր , տեսցէ զսերմն եր-
կայնակեաց , եկամ' մ'ն 'ի ձեռին 'նորա ուղ-
ղեսցի . փոխանակ զի աշխատեցաւ հոգի 'նո-
րա . տեսցէ կյապեսցի , 'ի գիտութե իւրում
արդարացուցէ ինքն արդար ծառայ իմ զբա-
զումս , եզանօրէնութիս 'նոցին ինքն տարցէ .
վն որոյ բաշխեցից 'նմա զյոգունս , եհո-
րիցն բաժանեսցէ զաւարս , փոխանակ զի մատ-
'նեայ 'իմահ զհոգի իւր . երնդ չարագործս
համարեցաւ . եինքն զմեզս բազմաց կրեաց .
եվն յանցաւորաց աղաչեաց : Ապա ուրեմն
ըստ բանից այսոցիկ պարտէր չարչարիլ քի-
ւմեռանիլ :

Գլուխ Երեքտասաներորդ .

Յաղագս ժամանակի մահւանն քի :



Ժամանակն , յորում մեռանե-
լոց էր քն . բացայայտե Դա-
նիէլ մարգարէն 'ի գլուխն 9 .
'ի թիւն 21 . ասելով , Եւ մինչ
դեռ խօսէի յաղօթի , ահա-
ւասիկ սցրն Դաբբիէլ , զոր
տեսեալի 'ի տեսլեան յիսկզբանէ , վաղվա-
ղակի

զակի թռեալ մերձեցաւ յիս ի ժամանակի պա-
 քտարագին երեկոյեան, և ուսոյց զիս, և խո-
 սեցաւ ինձ, և սասաց, Դանիէլ այժմ էլի, զի
 ուսուցանիցեմ զքեզ, և իմանայցես, ի յսկզբա-
 նէ աղաչանաց քոյ էլ խօս, իսկ էս էկի, զի
 զեկուցանիցեմ քեզ, զի այր բաղձանաց էս.
 դու ուրեմն ուշդիր խօսին, և իմա զտեսիլն,
 էօթանասուն էօթներեակք համառօտեցան
 ի վր ժողովրդեան քոյ, և ի վր քաղաքի սրբոյ
 քոյ, զի սպառիցի սխալումն, և զվախճան
 բառնուցու մեղն, և ջնջիցի անիրաւութի,
 և առածիցի արդարութի յաւիտենական, և լը-
 նանիցի տեսիլն ամարգարեութի, և օծանիցի
 նքն սրբոյ. գիտեան ուրեմն, և խելամուտ լեր,
 ի յէլից խօսին, զի վերստին շինիցի երուսա-
 ղեմ, մինչ ճքս դուքսն, էօթներեակք էօթն,
 և էօթերեակք վացսուն և երկու եղիցին, և վեր-
 ատին շինեսցի հրապարակ և պարիսպք ինե-
 ղութե ժամանակաց, և զկնի էօթներեկաց
 վացաներկուց սպանցի քս, և ոչ եղիցի ժողո-
 վուրդ նր, որ ուրանալոց է զնա, և զքաղաքն
 և զսրբարանն տարացրեսցէ ժողովուրդն ընդ
 Դքսին, որ գալոց է. և վախճան նր ցրումն:

Արդ՝ զէօթներեակս զայսոսիկ, այսինքն,
 զշաբաթս, զորս Դանիէլ աստ՝ յիշէ. զէօթն
 ամ իմանամք զմինն, և ըստ համարոյս այսորիկ
 էօթ-

Եօթնէրեակք Եօթանասունք . Էղիցին չորս
 Կարիւր և ինքսուն ամք , որոյ Թւոյ զսկիզբն
 Խմանամք ի ժամանակէն Արտաշիսի Թագաւո-
 րին պարսից , յորժամ՝ հրամայեաց զԵրուսա-
 ղէմ վերանորոգել . մինչև յժամանակն , յո-
 րում վէսպասիանոս Թագաւորն հռօմայեց-
 ւոց զնոյն Երուսաղէմ աւերեաց : Եւ այս է
 զոր Գաբրիէլ կանխաւ ասաց , թէ զքաղաքն
 և զտեղի նւիրանացն աւերեսցեն զինւորք
 քնդ իշխանին , որ գալոց է , և վախճան նորա
 ասպատակութի Էղիցի : Եւ թէ յայնմիկ ժա-
 մանակի սպառեսցին յանցանք և թողցին մեղք :
 Վս այսորիկ ի գալստեան քի իմէջ՝ այնր ժա-
 մանակի Բարձցի կռապաշտութի , և բնակիչք
 Երկրի ինքեանք զինքեանս մատուցանիցեն
 առ նա , և մեղք և անօրէնութիք թողեցեալք
 լիցին , և համայնք ծնունդք Երկրի հաւատա-
 ցեալք իքս զթողութի մեղաց առնուցուն ,
 և զօրհնութի գտցեն , և յայնմ ժամանակի
 վրկութի մշտնջենաւոր յառաջացի , պս-
 ինքն , ամ մարդ ի ձեռն քի կեցցէ՝ և տեսիլ
 և մարգարէութի , որ յաղագս քի զվախճան
 առցէ . քանզի զկնի գալստեանն քի մար-
 գարէութիք ոչևս են հարկաւորք . և օծանիցի
 նքն սրբոց , որ է քս , հոգւովն սրբով . օծմամբ
 ամծութեն , ոպ ասացաք ի վերոյ : Եւ այս յայտ-

նի իմն է , քանզի ոչոք իսոսկից մարդկանց ասի մք սրբոց , այլ միայն օծ . ուրեմն մարգարեութիս այս է զքսե :

Զկնի այսոցիկ ասաց Գաբրիէլ յԴանիէլ . Էթէ զկնի վացսուն և երկու շաբաթուց սպանցի քս , այսինքն , զկնի չորից Հարիւրից ամաց , ևովոք զքս ուրասցի , ոչ եղիցի ժողովուրդ նորա , և ոչ գտցէ զօրհնութի , և զարքայութիւն մայ : Ապա ուրեմն Դանիէլ բացայայտագոյն խօսի յաղագս գալստեանն քի . և ժամանակի մահւան նորա , ըստ որում և թւիցես :

Պիւլի Չորեքտասաներորդ .

Յաղագս որպիսութե մահւանն քի :



Րպիսութի մահւանն քի մասամբ իւիք իբանիցն Եսայեայ մարգարէի , զորս յիշեցաք ի վերոյ բացայայտեցաւ . իսկ այժմ առ բերցուք զասացեալն Սողոմոնի , որ ի գիրս իմաստութե ի գլուխն , 2. ի թիւն 12. մարգարեանայ խօսելով բաբառնաբար զսպանչացն քի այսպէս , Դարանեսցուք ուրեմն զարդարն , վն

վսգի անօգուտ է մեզ, և հակառակ է գործոց մերոց, և նախատէ զմեզ մեղօք օրինացն, և վատահամբաւէ իմեզ զմեզս խրատու մեռոյ, խոստանայ զինքենէ զգիտութիւն մյռնել. և որդի մյ զինքն անւանէ: Եղև մեզ իխայտառակութի խորհրդոց մերոց. ծանր է մեզ ևս առ ի տեսանել, քանզի աննման է այլոց կեանն նորա. և փոփոխեցան ճանապարհք նորա: Իբր զխաղալիս համարեցեալք էմք ինմանէ. և խորշի ի ճանապարհաց մերոց իբրև իգարշուծեց. և գերաբերէ զվախճանս արդարոց, և պարծի ի նքեան զմծ հայր ունել. Տեսցուք ուրեմն եթէ խօսք նորին իրաւիք իցեն, և փորձեսցուք զայնս, որք գալցք են նմա, և գիտցուք զայնս, որք եղիցին վերջք նորա. Զի եթէ է ճշմարիտ որդի մյ. վերընկալցի զնա, և ազատեսցէ զնա ի ձեռաց հակառակորդաց. թշնամանաւ և տառապանաւ հարցցուք զնա, զի գիտիցեմք զպատկառ նորա, և խելամուտք լինիցիմք համբերութե նորա: մահւամբ վատթարագունեղիւ դատապարտեսցուք զնա. քանզի եղիցի նմա նկատումն իխօօից նորա. Զայսոսիկ խորհեցան և մոլորեցան, քան զի կուրացոյց զնոսա չարութիւն նոցա, և ոչ գիտացին զխորհուրդս մյ:

Արդ Բանք այսօրիկ Սողոմոնի Բայայայտեն զՀարաբարոյութիս յուղայեանց , որք ասեին խաբեսցուք զարդարն , այսինքն , զքս . որ 'ի մարգարեից վերաձայնի , տո՛ր արդար մեր : Մահւամբ խայտառակիւ սպանցուք զնա . այսինքն , մահւամբ խաչին , զի գրեցեալ է թէ անիծեցեալ ամ մարդ , որ կախեցեալ կայցե զփայտէ : Ասա ուրեմն ունիմք յայտնապէս . 'ի Սողոմոնէ , թէ քս մահւամբ խաչի մեռանելոց իցեր : զի ասաց զինքն որդի ան , և հայր իւր կոչեաց զանձ :

Իսկ Զաքարիաս մարգարէն 'ի գլուխն ԻԿ . 'ի թիւն 12 . խօսելով 'ի դէմս քի , ասէ . Եւ կշռեցին զվարձն իմ զերեսուն արծաթիս . Եւ ասաց տո՛րցիս , Զգեա՛ն զդա՛ն առ ձուլակերտն , զգինդ վայելուչ , որով գնահատեցայ 'ինոցունց . Եւ բերի զերեսուն արծաթիս և ընկեցի զնոսա 'ի տուն տո՛ն առ ձուլակերտն : Յայսօրիկ Բանից յայտնապէս տեսանի վաճառեցումն քի ընդ երեսուն արծաթեաց : Եւ թէ ինքն իցէ Ճշմարիտ տո՛ր և անձ խաչեցեալ վս մեր :

Իսկ Դաւիթ մարգարէն 'ի սաղմոսն 40 . 'ի թիւն 10 . խօսելով 'ի դէմս քի յաղաղս մատնչացն յուղայեանց ասէ . Եւ քանզի մարդն խաղաղութե՛ն իմոյ 'յոր յուսացայ : որ ուտէր զհացս իմ . մեծարար 'ի վր իմ զխաբէութի : Եւ

Եւ իսաղմոսն 72. իթիւն 14. ասէ . Եւ եղէ
ձաղեցեալ զօրհանապազ . և կշտամբունի իմ
իշառաւօտս : Եւ իսաղմոսն 68. իթիւն 22.
ասէ . Եւ ետուն իկերակուր իմ զլեղի, և ըն
ծարաւոյ իմում արբուցին ինձ զքացախ : Եւ
իսաղմոսն 21. իթիւն 17. ասէ . Քանզի շը-
ջապատեցին զինն շունք բազումք , ժողովն
ջարաբարոյից պաշարեաց զիս : Ծակեցին զէձու
իմ և զօտս իմ , և թւեցին զամս ոսկերս իմ :
Իսկ ինքեանք համանկատեցին և ներդիտեցին
շիս , բաժանեցին ինքեանց զհանդերձս իմ .
և ի վր պատմութեանի իմոյ արկին զվիճակ :

Իսկ Եսայի իգլուխն 50. իթիւն 6. ասէ
Զմարմինն իմ ետու բախողաց . և զայտունս
իմ փետողաց , զերես իմ ոչ դարձուցի ինա-
խատչաց , և ի թգանողաց իշիս :

Եւ Զաքարիաս իգլուխն 13. իթիւն 6. ասէ .
Եւ ասասցի նմա . Զինչ էն վերքդ այդոքիկ
իմիջոյ ձեռաց քոց : Եւ ասասցէ . Այսոքիւք
վիրաւորեցայ իտան այնոցիկ , որք սիրելին
զիս : Եւ իգլուխն 12. իթիւն 10. ասէ , Եւ հե-
ղից ի վր տանն Դաւթի , և ի վր բնակչայն
էրուսաղէմի զոգի շնորհի և պաղատանայ ,
և հայեացին առ իս , զոր սկեռեցին , և կոծես-
ցեն զնա կոծիւ իբրեւ ի վր միածնի . և ցաւես-
ցին ի վր նորա , ոպ սովորութիւն քաւիլ ի վր
անդրանկի :

Դարձեալ Եսայի 'ի գլուխն II. 'ի թիւն IO. ասէ. յաւուր այնմիկ արմատն Յեսսեայ, որ կայ 'ի նշան ժողովրդոց, զնա հեթանոսք աղաչեսցեն, և եղիցի գերեզման նորա փառաւոր: Ապա ուրեմն ըստ մարգարեից այսոցիկ հարկեր քի ճաշակել զմահ. մատնիլ 'ի ձեռս թշնամեաց. վաճառիլ ընդ երեսուն արծաթեաց, թքանիլ, կշտամբիլ, գանիլ. լեղեաւ և քացախաւ արբուցանիլ. մահու և խաչի դատապարտիլ, 'ի ձեռս և յոտս խոցիլ, բեւոք պնտիլ, մեռանիլ, և թաղիլ 'ի գերեզմանի:

Գլուխ Հնգետասաներորդ:

Յաղագս իջմանն քի 'ի Դժոխս:



Արկաւոր էր իջումն քի 'ի դժոխս, առ 'ի ազատել զհոգիս բանտարդեցեալս սակս մեղաց, և անհնազանդութե նախ. նոյ հօրն մերոյ Ադամայ. Բանգի 'ի մեղանչելն նորա, մեղան ևս ընդ նմա համայնք ծնունդք նորա, և որք միանգամ վախճանեցան մինչև 'իքս իջին 'ի իմպոսն. Ուստի քս եկեալ վս թողու թէ

ղուծէ մեղաց , կամաւ յանձն էառ զմահ ,
 'իվր խաչին , եւջ 'իդժոխս , եզնախահարս
 սուրբս , այսինքն , զԱդամ , զՆոյ , զԱբրա-
 համ , զԻսահակ , զՅակոբ , եզայլս մարգարէս ,
 որք ակնունէին գալստեան նորին , ազա-
 տեաց ; Վս որոյ ասէ Չաքարիաս մարգարէն
 'իգլուխն 9. 'իծին 9. Յնծա յոյժ դուստր
 սինի , զւարճացիր դուստր երուսաղէմի ,
 ահա թագաւոր քո եկեսցէ քեզ , արդար , եկե
 ցուցիչ , ինքն աղքատ եհեծեալ 'իվր իշոյ ե'իվր
 աւանակի իշորդոյ : Եւկորուսից զկառն 'ի
 յեփրաիմայ , եզերիվարն 'իյերուսաղէմայ ,
 ետարացրեսցի աղէղն պատերազմի , եխօսեսցի
 զխաղաղութի հեթանոսաց , եպետութի նո.
 բա 'իծովէ մինչն 'ի ծով , ե'ի գետաց մինչն
 'իծագս երկրի . Դու ես արեամբ կտակիքոյ
 զերծուցեր զկապեցեալս քոյս 'ի լճէն 'նո-
 բում ոչ գոյ ջուր :

'իբանից յայսցանէ յայտ է , զի քս թագաւորն
 խորայելի , արդարն , եկեցուցին , որ բստ
 նմանութե աղքատի ուրուք հեծեալ 'իվր
 աւանակի իշոյ տիրեաց 'իծովէ մինչն 'իծով ,
 եմինչ 'իծագս աշխարհի , եարեամբն իւրով վե-
 րածեաց զարդելեցեալս 'իբանտի , որ է դժոխն :

Գլուխ Վեշտասաներորդ

Յաղագս թէ մարմինն քի ոչետես զապահանութի իգերեզմանի :



Մարմինն քի վսայնորիկ ոչետես զապահանութի , զի եր միաւորեցես ընդ ամուսնն անձնաորապէս : Ուստի զկնի պատարապէլոյ զնոյնն հօր արիւն խաչին վս կեցութեալ գի մարդկան . վերստին կենդանացոյց զնա անապահանապէս , եյարեաւ իգերեզմանէն . Էւ զայս վկայէ մարգարէն Դաւիթ իսաղմոսն . 15. իթիւն 8. ասելով , Նախատեսանէի զտի առաջի իմ յամ ժամ . զի է ընդ աջմե իմէ , զի մի սասանեցայց : Վս այսորիկ ուրախացաւ սիրտ իմ , եցնծացաւ լեզու իմ , եւ եմարմին իմ վերահանգիցէ յուսով : Քանզի ոչ լքեսցես զհոգի իմ ընդ զծոխում , եւ ոչ տացես սրբոյ քում տեսանել զապահանութի :

Արդ զբանս զայսոսիկ , ոչ ասաց Դաւիթ վս ինքեան , զի նա զկնի մահւան ոչ յարեաւ իմեռելոյ , այլ վս քի : Ապա ուրեմն մարմինն քի իգերեզմանի ոչետես զապահանութի : Եւ հոգի նր ոչ յամենայ իգծոխս , այլ յարեաւ իմեռելոյ :

Գլուխ Եօթնևտասներորդ

Յաղագս թէ քս ընդ աջմէ հօր բազմի :



Քիտոս յարեալ իմեռելոյ , և
լստ հաճութե հօր արեւ յեր-
կինս , ևնտի ընդ աջմէ նորա ,
ևհանուրք ազդ ևազինք պար-
տին նմա երկիրպագանել . ոմ
ասէ մարգարէն Դաւիթ . իսաղ-
մոսն 109 . իթիւն 1 . Ասաց արեւ արեւ իմ , նիստ
ընդ աջմէ իմէ , մինչև եղից զթշնամիս քոյս ,
պատւանդան ոտից քոյ : Եւ իսաղմոսն 71 .
իթիւն 8 . ասէ , Տիրեցէ նա իծովէ մինչև
իծով . և իղեաց մինչև յեզերս ոլորտի երկ-
րաց : Իսկ իթիւն 11 . ասէ , Եւ երկիրպագ-
ցեն նմա ամբ թագաւորք երկրի , ամբ ազինք
ճստ սցեցեն նմա : Ապա ուրեմն լստ բանից
այսոցիկ քս նտի ընդ աջմէ հօր , ևհամայնք
ազինք երկրի երկրպագելոցք են նմա : Բայց
ոչ վաղվաղսկի իղալտեան նր , այլ զկնի
մահւանն , յարութեն , համբարձմանն իյեր-
կինս , ևնտմանն ընդ աջմէ հօր իւրոյ , մինչ
թշնամիք նորա , որք ոչ ընկալան զնա լինի-
ցին պատւանդան ոտից նր , հաւատարմ
ևյենլով ինա : ևայսպէս ընդհանուր աշխարհ
ընկա-

ընկալեալ զօրհնութի նորա , արքայութեն
երկնից մասնակիցք եղիցին 'իյաւիտեան :

Գլուխ յւթնամանէրորդ .

Յաղագս թէ քս տր է բոլորի աշխարհի :



Անցանէ, զորս ասացաք 'իվե-
րոյ , բաւականապէս ծանու-
ցաւ մեզ , թէ քս տր ևդա-
տաւոր իցէ ընդհանրոյ աշ-
խարհի . Զի իւրաքանչիւր
Թագաւոր տր է իւրոյ Թա-
գաւորութե . ևմեծագոյն քան զինքն ոչոք է
'իԹագաւորութե իւրում , ևոչոք զպատուիրա-
նաւ նորա զանցառնել կարէ . զոր օրինակ
'իԹագաւորութե այսմիկ պարսկականի , ով է
որ կարիցէ ընդիմանալ կամ անհնազանդ լի-
նիլ հրամանի Թագաւորին , որով հետե ոչոք
է մեծագոյն քան զինքն ; Ապա ուրեմն քս, որ
ըստ հաճութեն այ հօր կացուցեալէ Թագա-
ւոր 'իվի հանրոյ աշխարհի , ևժառանգորդ
տիեզերաց , ունելով զտրութի իւր 'իծովէ
մինչև 'իծով , ևստացւած նր մինչև 'իծագա-
ւորի , համայնք ազինք ևԹագաւորք ծառայ-
էն

էն նմա, և երկիրպագանէն, և աթոռ նորա
ոպ զօր երկնի, և իբրև զարեգանն առաջի ան,
և ոպ զլուսինն լրացեալ իյերկինս, իշխանու
թի նորա, իշխանութի յաւիտենական, որ ոչ
բարձցի, և արուծի նորա յազգաց յազգս,
և ոչ խանգարեսցի: և այսպէս օրինադիր
և հրամանատու է համայնից բնակչաց երկրի,
ոպ ցուցաք ի վերոյ:

Գլուխ Իննևտասներորդ.

Յաղագս թէ քԾ Է յազգէն Դաւթի և ծնիցեալ
իկուսէ իբեթղէհէմ քաղաքի:



Կայուծքն առբերեցելովք ի
վերոյ բաւականապէս հաւաս
տեցաք, թէ ար ցԾ է ճշմարիտ
քԾն, զոր մարդարեք գալոց գոլ
նախաճառեցին: Իսկ այժմ
տեսցուք և հաստատեսցուք

թէ քԾ է իզսուակէ Դաւթի, և որդի կուսին
Մարիամու, ոպ և եբրայեցիք հակավկայեն.
Քանզի մայր Մարիամու էր Աննայ, և հայր
նորա Յովակիմ, իսկ Յովակիմ էր որդի Մա
տաթեայ, որ եղև որդի Ղևեայ. զաւակ իզա
ւակէ իջանելով մինչև ի նախնան եղբայրն

Սողո-

Սողոմոնի , և երկաքանչիւրն որդիք Դաւթի մարգարէին , ըստ որում Ճառէ աւետարանն Ղուկասու : Ուրեմն Մարիամ իկողմանէ հօրն է իսերմանէ Նաթանայ , որէ որդի Դաւթի , իսկ Աննայ դուստր Մատթանայ , որ էղև որդի Էղիազարու , և այսպէս զաւակ ի զաւակէ Թնչև ' յՍողոմոն որդի Դաւթի և եղբայր Նաթանայ վերոգեցելոյ : Ապա ուրեմն սրբուհի կոյսն Մարիամ իկողմանէ հօրեմօր է դուստր Դաւթի : Ուրեմն և մօր յս իկողմանէ ծնողաց է որդի Դաւթի և ժառանգորդ իշխանութե և թագաւորութե նորա : Բայց զգուշաբար նկատելիք են աստ՝ քանք աւետարանչայն սրբոց , մի գուցէ ոք զյս վարկիցէ գոլ որդի Յովսէփայ ըստ մարմնոյ , քանզի յս իմաքրադունելէ յարենէ կուսին Մարիամու յղացաւ , այլոց իյերանացն Յովսէփայ . զի Յովսէփ ոչ մերձեցաւ առ կոյսն Մարիամ , այլ միայն փեսայացաւ նմա , զի մի եբրայեցիք տեսանելով յղացեալ զնա թարց առն քարկոծիցէին . Եւ զի էր սովորութիւն ևօրէն , հրէից , զի դստերք նոցին պսակաւ շարսզուգէին ընդ արանց , իհամազգակցութիւն իւրեանց . Ուստի և սրբուհին Մարիամ որ էր իզաւակէն Դաւթի , էղև ընդ Յովսէփայ փեսային իւրոսմ : Զանդի վերոգրեցելոյն

Մատ-

Մատթանայ երէք ծնունդք եղէն, ուստր մի
անուամբ Յակոբ. և երկու դատելք. որոց մինն
կոչիւր Սաբէ. և միւսն Աննա : Ի Սաբէէ ծնի-
ցեալ եղև Եղիսաբէթ կինն Զաքարեայ, որև
մայր եղև Յովսէփն : Եւ Յաննայէ
ծնիցեալ եղև Մարիամ կոյսն : Աստուստ Յա-
կոբ Է հայր Յովսէփու ամուսնացելոյ ընդ
կուսին Մարիամու. Եւ մայր կուսին Մա-
րիամու Է քոյր Յակոբայ : Իսկ Մատթան Է
պսայ երանուհւոյն Մարիամու և Յովսէփայ.
Եւ երկոքեանս այսոքիկ են յաղգէն Դաւթի :
Ապա ուրեմն Յովսէփ ամուսինն երանուհւոյն
Մարիամու Է փեսայ Յովակիմայ. Աստուստ
տոր յս որդի Յովսէփայ ասացաւ, զի մի հրէ
այքն զչարացեալք կարկոծիցէին զՄարիամ
կոյսն : Բայց յս ոչ եղև յղացեալ իսերմանէ
սուն, այլ ի զօրութե հոգւոյն սրբոյ. և յա-
րենէ մաքրագունեղէ երանուհւոյն Մարիա-
մու. Ուստի ինքն երանուհին Մարիամ զկնի
ծննդեանն կոյս մնաց, ուն և նախ քան զծը-
նանիլն զտրն մեր յս քս : Եւ այսպէս զնա
միշտ կոյս ճանաչեմք և հաւատամք. Ուրեմն
տրն մեր յս քս ծնիցեալ եղև ի կուսէ ըստ
նախագուշակութե մարգարեիցն : Այլ տրն
մեր յս քս ծնաւ ի բէթղէհէմ քաղաքի ըստ
մարգարեիցն. և թագաւորք երէք հմուտք
իմաստ

իմաստութե եկին յարևելից երկրպագանել
նմա. որոց մինն էր իյեթովպիոյ. երկրորդն
իհնդկաց. և երրորդն իսպարսից:

Գլուխ Քսաներորդ.

Յաղագս թէ քս ծնիցեալ եղև ի ժամանակի
այնմիկ նորում ոչ թագաւոր գոյր և ոչ
դուքս իցեղէն Յուդայի:



Երջին թագաւոր իցեղէն Յու
դայի եղև Սեթեկիա. ուն
վկայեն գիրք եբրայեցւոց, որև
իձեռն նաբուգոդոնոսորայ
գերեցեալ, վարեցաւ ի Բաբելոն,
և անդ մեռաւ:

Իսկ զկնի նորա այլոք թագաւոր իգաւա-
նէն Յուդայի ոչեղև. այլ միայն իշխանք
ովանք, որոց վերջինն, ուն պատմէ Յովսէփոս
եբրայեցին, եղև Յաննիա հայր Մելքեայ, որ
էր հայր Ղևեայ. և Ղևի հայր Մատաթեայ.
որ եղև հայր Եղիակիմայ, այսինքն, Յովակիմայ
որ էր հայր սրբուհւոյն Մարիամու յորմէ
ծնաւ քս: Ուրեմն տրյս է իգաւակէ Դաւթի.
ծնիցեալ ի ժամանակի այնմիկ նորում ոչ
թագաւոր գոյր և ոչ իշխան:

Գլուխ

Գլուխ Բսանկմիերորդ .

Յաղագս թէ ար յս զսքանչելիս արար :



Որ ինչ քս գործելոց էր 'յաշ-
խարհի աստ, մարգարէքն սք
նախագուշակեցին, ըստ որում
և զսքանչելիս նորա . Ուստի
մինչ Յոհաննէս մկրտիչ առա-
քեաց զաշակերտս իւրս առ
յս ասելով, Դու ես որ գալոց էիր, թէ այլում
ակնկալցուք, զինչ ասես, զորպիսի պատաս-
խանի տարցուք այմ, որ առաքեացն զմեզ: Պա-
տասխանեաց յս . գնացէք և պատմեցէք Յո-
հաննու, զոր լուայք և տեսիք, կոյրք տեսա-
նեն, կաղք գնան, բորոտք սրբին, խուլք
լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետա-
րանին . և այլն . Էւ զայսոսիկ ոչասաց միայն
բանիւ, այլ և գործով կատարեաց, զի յորժամ
ընդ քաղաքս և ընդ գիւղս անցանէր, զհիւան
դուծիս և զախտաժէտութիս զանազանս բժշ-
կէր, զցաւս և զտկարութիս փարատէր,
զդէս հալածէր, զայսահարս թաւտէր, հող-
մոց և ծովու հրամայէր, զմեռեալս յարուցա-
նէր, զկաղս գնացուցանէր և զկոյրս լուսաւոթ
րէր . ի այց զայս ամ կուրացեալքն հրեայք, ընչ
կղմե-

կղմեցեալք յանգիտութիս իւրեանց ոչ կամեցան ճանաչել . թէ կայսոնապէս տեանէին զէղեալս ինմանէ . վն որոյ և ոչ գտցեն զառիթս և զպատճառանս անմեղութե : Արդ՝ ասեմք առնոսա , մի թէ քսն գալոց , առաւել քան զայսոսիկ առնելոցեր նշանս , գուք աչօք ձերովք տեսիք զյարութի մանկանն , զկանգնումն անդամալուծին , զկենդանանալն Ղազարու , զգնալն քի ի վր ծովու . զհրամայելն հողմոց և ծովու . և զայլս ոոցին նմանս , և զարմացայք ասելով , ով է սն , զի և հողմք և ծովք հնազանդին սմա : Եւ ոչ միայն զայս , սյլ և աշակերտաց իւրոց ընձեռեաց զնոյն զօրութի առնելոյ զսքանչելիս , զորս մինչև 'ցայս վայր տեսանեմք , ոչ միայն ի հոգեաց , այլ և ի մարմնոց , ի յոսկերաց և ի գերեզմաց 'նոցին արտագործիլ : Զսոյն ևս աշակերտք աշակերտացն գործեն , ի զանազանս գաւառս և ի թագաւորութիս քրիստոնէից , Յորոց զբաղումս էս շարագրօղ գրգոյս Պօղոս փիրօմալուս աչօք տեսի : Քան զի ի թուականութե մերում . 1644. 'նամսեանն օգոստոսի , ի քաղաքին Սուրիանի , ի գաւառին Քալապրիայ յեկեղեցւոջ սրբոյն Տօմինիկոսի , ուր էին բազմութիք մարդկան ժողովեցեալք իբրև հարիւրից հազարաց ի տօնախմբութի , և էս և ընկերակիցք

Կիցք իմ կայաք 'իսպասու սրբոյ սեղանոյն ,
 և մատուցան երկու պատանեակք , մինն տաս-
 նամեայ 'իքաղաքէն Մայիդայ , համր և ան-
 դամալոյծ և ամենեւեմ սապղարացեալ . իսկ
 միւսն հնգետասանամեայ կոյր 'իծնէ , և ան-
 կեալք առաջի օրբոյն խնդրէին զառողջութիւն ,
 և իսկոյն շնորհօքն այ և միջնորդութեւ սրբոյն ,
 կոյրն 'իծնէ լուսաւորեցաւ երկոքումք աչօքն .
 և անդամալոյծն և համրն զարձակուին լեզուի
 և զամբողջութիւն անդամոցն ընկալաւ , 'իզար-
 մացումն ամենից ժողովրդոց : Արդ 'նայսմիկ
 էկեղեցւոյ ոչ անցանէն առուրք նորս ոչ գոր-
 ծիցին սքանչելիք . Ուստի և յամենից գաւառաց
 և քաղաքաց ընթանան առ նա , և թաօ
 գաւորք և իշխանք ընծայիւք այցելանէն նմա .
 իսկ զայլս սքանչելիս , որք 'իզանազանս տեօ
 դիս քրիստոնէից օրրատօրէ արտագործին , ո՞ր
 կարէ պատմել . Ապա ուրեմն ոչ միայն քօ
 այլև ծառայք նորին գործեցին և գործէն մին-
 չև 'ցայսօր զսքանչելիս :



Գլուխ Բսանկերկուերորդ .

Յաղագս թէ քն չարչարեցաւ և մեռաւ :



Մահ և զչարչարանս քի հա-
մայնք մարգարեք վկայեցին .
ոպ Դաւիթ , Դանիէլ , Սողո-
մոն , Էսայիաս , Լայլք . որք
զանազանիւք պարագայիւք
բացայայտեն զնոյնս ; քան զի
նորն մեր յս քն ոպ զոչխար 'իսպանդ վարեցաւ ,
և վն մեղաց մերոց 'իմէջ աւազակաց խաչեցաւ ,
վն սպանչաց իւրոց աղօթեաց առհայր ասելով
Թող սոցա , զի ոչ գիտեն , զինչ գործեն , խոշ-
տանկեցաւ , ապտակեցաւ , թքեցաւ , փշովք
ապակեցաւ , զմահ խաչի 'իյանձն էառ և մե-
ռաւ , վն զի զինքն որդի նյ ասաց , և հայր
իւր կոչեաց զնձ . Ուստի և խաչահանութն
ասէին 'ցոմեանս , էթէ որդի նյ իցէ , փրկես-
ցէ զանձն իւր 'ի ձեռաց մերոց : Եւ ըստ մար-
գարեութեն Դաւիթ , ծակեցին զձեռս և զոտս
նորա , բաժանեցին զհանգերձս նորա , և 'ի վն
պատմութեանի նորա վիճակս արկին : Եւ Յու-
դա մինն 'իյաշակերտաց իւրոց մատնեաց
զնա 'ի ձեռս թշնամեաց նորին , որք Լարբու-
ցին նմա զքացախ լեղեաւ խառնեցելով ,
և երեսնոց արծաթեաց զնա վաճառեցին ,
և յետ

եյեռ վճարելոյ ինմա զբնաւս դժնաբարոյս
 թիս իւրեանց , սպանին զնա ի ժամանակին
 այնմիկ , զոր մարգարէք նախածանուցին . 30-
 րոց եւ զլասն չորրորդ , որ ի գլուխն 7 . ի թիւն
 28 . ասէ . քանզի յայտնեսցի որդի իմ Յս
 հանդերձ այնոքիւք , որք են ընդ նմա , եւ լայել-
 չասցին որք մնացեալքն են յամս չորսհարիւր ,
 եւ եղիցի զինի ամաց այսոցիկ ամեռացի որդի
 իմ քս : Վկայութիս այս յայտնի իմն հաւատ-
 տութի ե զքսէ , թէ յաղագս ամուսնէն եւ թէ
 յաղագս մահուան նորա . Ապա ուրեմն ըստ
 բանից մարգարէիցն չարչարեցաւ ամեռաւ քս ,
 եւ յերրորդում յաւուր յարեաւ : Բայց զերիս
 այսոսիկ աւուրս , ոչ իմանանք աւուրս կատա-
 րեալս , այլ ըստ սովորութե գրոց ամայնոց
 զմասն փոխանակ բոլորի առնումք , այսինքն ,
 յիննէրորդէ ժամու ուրբաթու աւուր նո-
 րում մեռաւ քս , եւ յերեկոյի եղաւ ի գերեզմանի ,
 մինչև 'ցկեսգիշերն նոյնոյ ուրբաթուն թուեմք
 դմի օրն : Եւ ի կիսոյ գիշերոյն յայնմանէ մին-
 չև 'ցկեսգիշերն շաբաթուն , թուեմք զերկ-
 րորդ օրն . իսկ ի միջոյ գիշերոյն յայնմանէ մին-
 չև 'ցարշաբոյն կիրակեի աւուր , յորում ժա-
 մու յարեաւ քս իմեռելոց , թուեմք զերրորդ
 օրն : Եւ ըստ այսմ ասեմք , թէ յարեաւ քս
 իմեռելոց յերրորդում աւուր , կյարութէն

իւրով զսփս ամս , որք էին 'իդժոխս ընդ ինքեան վերաբերեաց , ևմինչև 'ցքառասուն աւուրս կենցաղավարեցաւ ընդ աշակերտաց իւրոց , ևուսոյց 'նոցա զբնաւս հաճութիւնսն , ևհրամայեաց 'նոցա քարոզել զաւետարանն իւր ընդ ոլորտս տիեզերաց : Այլև պատուի քեաց 'նոցա զի մի' մէկնիցին 'յերուսաղէմէ , մինչև առաքիցէ առ 'նոսա 'յերկնից զմիսիծարիչ հոգին սբ : Էւզկնի այսոցիկ բանից համբարձաւ 'յերկինս , ևնստաւ ընդաջմէ հօրնսն ամենակարողի : Ուստի ևգալոցէ 'յաւուրդատաստանի մեծի 'իդատել զկենդանիս ևզմեռեալս :

Ուրեմն ըստ բնաւից այսոցիկ վերոգրեցելոյն քանից ամսայնոց , մորն մեր յս քս ծնաւ 'իկուսէն Մարիամայ 'իցեղէն Դաւթի 'յարմատոյն Զեսեայ 'իբեթղէհէմ քաղաքի 'յերկրին յուդայի , 'իծամանակի 'յոթում ոչ գոյր թագաւոր ևիշխան , ևարար զսքանչելիս բազումս , ևըզնոյն իշխանութի սքանչելագործութե շնորհեաց աշակերտաց իւրոց , մեռաւ , ևյարեաւ ըստ մարգարէիցն վկայութեց : Բայց զայսոսիկ բնաւս , զորս հաւաստեցաք 'իվերոյ ցուցուք այժմ վերստին ըստ աւետարանականի վկայութեն . առ 'իհաստատել թէ յս քս է ճմարիտ ան ևմոր բոլորից :

Գլուխ

Գլուխ Բսանկերէքերորդ .

Յաղագս թէ յս քս է իշխան եղութս եթա-
գաւոր ըստ աւետարանականի
վկայութե :



Իրութին իշխանութին եթա-
գաւորութին քի յայտնապէս
Ճառի 'յաւետարանս . եթէ
ամ հայր առքեալիցէ զնա
'յաշխարհ, զի համայնք ազգ
եազինք 'ինմանէ զօրհնութի
ընկալցին, ըստ որում խօսեցեալէր առ նա-
խահարսն : Իսկ օրհնութիս այս է հաշտու-
թի 'իմեջ մարդկան եւս, քանզի ապստամ-
բեցեալք էին մարդիք, նախ յանցանօք նա-
խահօրն Ադամայ . եերկրորդ անհնազան-
դութեանց յատկականօք, եիւրաքան-
չիւրօք 'ի թիւրս խոտորիւր, ոպ ասացաւ 'ի վե-
րոյ. Բայց զայսպիսի ըղձալի հաշտութիս ոչոք
առակ մարդ յօրինել կարաց . գոլով իւրաքանչիւ
րոյն զգածեցեալք պրտաւորութե իւրիք. Այլև
ոչ 'ի ձեռն պատարագաց ցլուց են խաղաց վեր
ընդունիլ մարթիւր : Ուստի տրն մեր յս քս
հայելով 'ի թշուառութիս ե'ի հարկաւորու-
թիս մարդկայնոյ քնութե, խօսեցաւ առ հայր

Էւր բերանովն Դաւթի ասելով . Ջգո՛ւ
 և զպատարագ ոչ կամեցար , այլ զլսելիս
 կատարեցեր ինձ , զողջակեզն և զվն մեղացն
 ոչ խնդրեցեր . յայնժամ ասացի . ահա դամ .
 ըն գլխոյ գրքոյն գրեցեալ է զինէն . զի առ
 նիցեմ զկամն քո : Եւ այսպէս եկն առ իկա-
 տարել զկամս ւն : Իսկ կամն ւն այն էր , զի
 զմեզս ամենեցուն մարդկան բարձեալ ի վր ին-
 քեան , զինքն ի կեցութի նոցին նուիրիցեր , ուն
 ասէ Եսայի մարգարէն , ամենեքեան մեք
 իբրև զոչխարս մոլորեցաք , և իւրաքանչիւրոք
 խոյս ետ ի ձանձաղարս իւր , և եղ տր ի
 նմա զանօրէնութի մերոց ամենից : Եթէ վն
 չարագործութե . ժողովրդեան իմոյ բախեցի
 զնա , և տայէ զամբարիշտս փոխանակ դամ-
 բարանի , և զփարթաւն փոխանակ մահուան
 իւրոյ . վն այնր զի զանիրաւութի ոչ գոր-
 ծեաց , և ոչ գտաւ նենգութի ըն բերանոյ
 նորա : Եւ ըստ այսմ հնազանդեցաւ հաճու-
 թե հօր վն մեղաց մերոց , զի նա միայն էր
 առանց մեղաց և մաքուր յամենից բժից : Ուս-
 տի գալուստն քի յաշխարհ ոչէր զի վաղվա-
 ղակի զիշխանութի և զթագաւորութի արաս-
 ցէ . ըստ որում կարծէին հրեայք , զի եթէ
 այսպէս իցէր , եկեալիցէր մեծաւ իշխանութե
 և փառօք . Բայց նա եկն իբրև զաղքատ հե-
 ծեալ

ծեալ 'ի վր իշոյ 'ի կրել զչարչարանս , վն բարձ-
ման , եշիջուցման մեղաց . վն որոյ և խոնար-
հութի և ստրկութի մեծաւ կենցաղավարեցաւ ,
անարգ և նուազ քան զամս որդիս մարդկան ,
և առ ոչինչ համարեցաւ , ուն ասէ Եսայի մար-
դարէն : Եւ այս է գրեցեալն 'ի Յոհաննու աւե-
տարանցէն 'ի գլուխն 3. 'ի թիւն 14. Եւ որ-
պէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի ,
այսպէս բարձրանալ պարտէ որդւոյ մարդոյ ,
զի ամ որ հաւատայ 'ի նա , մի՛ կորիցէ , այլ
ունիցի զկեանն յաւիտենական . քանզի ոչ
առաքեաց ամ զորդի իւր յաշխարհ , զի դա-
տիցէ զաշխարհ , այլ զի կեցուցանիցի աշխարհ
ձովաւ : Աստուտ զինքն հօր բանաւոր պա-
տարագ մատոյց վն մեղաց մերոց , և արար
զհաշտութի 'ի մէջ մյ և մարդկան , և աղաւտեաց
զժողովուրդ իւր յանիծից : Եւ յետ կատարե-
լոյ զամ հնազանդութի ել յերկինս , ուր
և թագաւորէ 'ի յաւիտեանս յաւիտենից , և
թագաւորութե նորա վախճան մի՛ լիցի : ուն
ասէ Դանիէլ 'ի գլուխն 7. 'ի թիւն 14. Պե-
տութի նորա սէտութի յաւիտենական , որ ոչ
բարձցի , և թագաւորութի նորա , որ ոչ եղծա-
նիցի : Ուրեմն քն եկն , զի 'նախ զանձկութի
և զչարչարանս կրիցէ , և զմահ յանձն առնու-
ցու , իսկ յետոյ մինչև 'ի յաւիտեան թագաւո-

րիցէ . Ուստի և Մատթէոս 'ի գլուխն 13. 'ի թիւն 11. Եւ Մարկոս 'ի գլուխն 10. և 'ի թիւն 45. ասէն . Քանզի և որդին մարդոյ ոչ էին զի սպասաւորիցիւր նմա, այլ զի սպասաւորիցէր , և տայցէր զհոգին փրկան փոխանակ քաղմաց : Իսկ Ղուկաս 'ի գլուխն վերջին 26. ասէ, Ոչ ապաքէն, զնոյնս պարտ էղև քրիստոսի կրել, և այսպէս մտանել 'ի փառն իւր : Ապա ուրեմն Խոր 50 էին , զի նախ չարչարիցի և մեռանիցի և 'ի ձեռն մահուան իւրոյ զպարտիս անհազանդութե մերոյ վճարիցէ, և ընդ արարչին մերում զմեզ հաշտեցուցանիցէ , և ժողովրդոց իւրոց զօրհնութի տայցէ :

Եւ թէպէտ այսօրիկ ամենեքեան ճշմարիտք էն , սակայն ոչ վս այսօրիկ զիշխանութի թագաւորութե իւրոյ 'ի բաց ընկեց , այլ ջատագովեաց , ըստ որում ասէ Մատթէոս 'ի գլուխն 16. 'ի թիւն 27. Քանզի որդի մարդոյ գալոց է փառիւ հօր իւրոյ :

Եւ Ղուկաս 'ի գլուխն 19. խօսելով 'զամբոխից աշակերտացն 'ի թիւն 37. ասէ, Թէ մինչ ական խնդութե երգել զօրհնութիս յի ասելով օրհնեցեալ թագաւորն , որ էին յանուն Թոն, խաղաղութի 'յերկնի, և փառ 'ի բարձունս, և փարիսեցիքն լուեալք կամեին, զի սաստիցէր նոցա , իսկ յի սպաստասխանեաց նոցա, զի էթէ

սոքա

սոքա լուիցեն, քարինքդ աղաղակեսցեն :

Նաև յորժամ արտաքսեաց 'ի տաճարէն զգնօղս և զվաճառօղս, զթագաւորական իշխանութի 'ի կիրեարկ ասելով, տունն իմ տուն աղօթի կոչեսցի : Եւ զայլս սոցին նմանս արար, որովք նշանակեաց զիշխանութի իւր արքայական . Բայց յորժամ ամբօխն հրէից կամեցաւ կացուցանել զնա թագաւոր, ոչ հաճեցաւ ինքն, այլ փախեաւ 'ի նոցանէ, վն զի թագաւորութի նորա տրեցեալ գոյր յնայ, և ոչ 'ի մարդկանէ . Ու ասէ Դաւիթ 'ի սաղմոսն Երկու, իսկ ես կացուցեալ եղէ թագաւոր 'ի նմանէ 'ի վր սիօնի լէրին սրբոյ նորա : Այլև զի հրէայքն կամէին 'ի ձեռն նորա ազատիլ 'ի գէւրութէն հռոմայեցւոյ, բայց տօրն մեր յսքմ ոչէր եկեալ, զի զազգս և զազինս սրով յաղթահարիցէր, և զթշնամիս նոցին պարտիցէր, այլ զի 'ի ձեռն շնորհի իւրոյ առաջնորդիցէր 'յարքայութին երկնից, և հաւատացելոց իւրոց, իսկև յուսացելոց զսէր և զճշմարտութի ուսուցանիցէր : Այլև ոչէր եկեալ զի սպանցէր զայլս, այլ զի ինքն սպանանիցիւր և զանձն իւր տայցէր փոխանակ բազմաց . Եւ այս է, զոր Դաւիթ 'ի սաղմոսն 109. 'ի թիւն 7. ասէ, 'ի յուղիտոյ 'ի ճանապարհի արբցէ, վասն այնորիկ բարձրացուսցէ զգլուխն : այսինքն քմ նախ չարչարեացի

րեսցի և խաչի համբերեսցէ, և յետ այնորիկ
բարձրացուցի: զգլուխ իւր, զի մշտնջենաւ ո-
րսովէս թագաւորիցէ: Քանզի ան կամեցաւ
մեղմաբար զբնաւս թշնամիս 'նր դնել 'իներ-
քոյ ոտից 'նորա: Եւ կատարեսցի այս 'նախասահ
մանութի, յորժամ համայնք ցեղք երկրի,
և հանուրք թագաւորութիք 'նմա ծառայեսցեն
և երկիր պագանիցեն: Ուրեմն անքն մեր յս. քս
է դուքս և թագաւոր, և տիրեսցէ աշխարհի
'իստիտեանս յաւիտենից, ըստ որում այժմ
սկսեցեալ տեսանեմք:

Գլուխ Քաննեցորսերորդ:

Յաղագս թէ քս է քահանայ և հովիւ ըստ
վկայութե սրբոյ աւետարանին:



Իստոս ճշմարտապէս քահա-
նայ է, որ ոչ զոչխարս և ոչ զառ-
ջառս մատոյց, ոպ զԱհարոն,
այլ զհայ և զգլխի, այսինքն,
զմարմին և զարիւն իւր 'իներ-
քոյ տեսակաց հացի և զինւոյ,
ընշանակեցեալս 'ի Մելքիսեթեկէ, և զձեակեր-
պեցեալս 'ի օջխարս և 'յառջառս Ահարոնի,
քան զի ոպ զոչխար 'իսպանդ վարեցաւ, և ոչ
եղաց

Էբայ վբերան իւր ըստ մարգարեութեն Էսայ-
էայ : Էւ այսպէս զինքն անարատուպէս պա-
տարագէայ , ըստ չորից աւետարանեացն , եվմ
քառութե մեղայ բոլորի աշխարհի , կամաւո-
րապէս յանձն էառ զմահ : Ուրեմն քահա-
նայ է Ճշմարտապէս : Էւ ես հովիւ , ըստ որում
վկայէ աւետարանն Յոհաննու , ի գլուխն 10.
՚ի թիւն 11. Էս էմ հովիւն բարի , հովիւն բարի
տայ զհոգի իւր վմ ոչխարայ իւրոց : Է՛ ի թիւն
14. ասէ Էս էմ հովիւն բարի , և ճանաչեմ զիմ
և ճանաչեն զիս իմոյքն : Իսկ ՚ի թիւն 16. ասէ ,
և զայլս ոչխարս ունիմ , որք ոչեն յայսմանէ
փարախէ , և զայնոսիկ պարտէ ինձ առածել ,
և զձայնն իմ լսիցեն , և եղիցի մի փարախ , և մի
հովիւ : Ոչխարք այսոքիկ , զորոց խօսի քմ , են
ազգք մարդկան , որք հետեւելով կռապաշտու-
թե արտաքսեցան ՚ի հօտէ անապաշտից , և ցրու-
ւեցան . ուստի եկն քմ առկոչել զամենեսեան
ոպ հովիւ Ճշմարիտ և դուքս համայնից ոչխա-
րաց , այսինքն , ամենից ժողովրդոց , զի զամե-
նեսեան միահաղոյն գումարիցէ իմի փարախ
՚ի խել զկենարար ձայնն նորա :

Գլուխ Բտանկհինկերորդ :

Յաղագս թէ քս է ևս Մարգարէ ըստ
աւետարանականի վկայութե :



Արգարէութիւն քի վկայի 'իբա-
նից իւրոց, որ 'ըն յաւետարա-
նում Մատթէոսի 'իգլուխն
13. 'իթիւն 57. և 'ըն յաւե-
տարանում Մարկոսի 'իգլ-
լուխն 6. 'իթիւն 4. ասէ :

Ձի ոչէ մարգարէ առանց պատուոյ, եթէ
ոչ 'իհայրենւոջ իւրում : Իսկ 'ըն յաւետարա-
նում Ղուկասու 'իգլուխն 7 : 'իթիւն 16. մինչ
տեսին զսքանչելին, զոր արար յս, ասացին :
Ձի մարգարէ մեծ յարեաւ 'իմեզ : Ապա ու-
րեմն քս մարգարէ է, զի մարգարէացաւ 'նախ
'իգուշակելն զմահն, զխաչիլն, զյարութիւն
'իմեռելոց, և զհամբարձումն իւր 'յերկինս :

Երկրորդ 'ինախագուշակելն զաւերումն
երուսաղէմի : Երրորդ 'ինախաճառելն զտա-
րածումն աւետարանականի Ճմարտութե,
զդարձումն հեթանոսաց, և զկամակորութիւն
հրէից : Չորրորդ 'ինախագիտելն զսքանչե-
լագործութիւն աշակերտացն 'յանուն իւր,
զհալածանս, զչարջարանս, և զմահս 'նոցա :

Հիւն.

Ճինկերորդ, ինախասեւն զտառապանս և զհաւ-
 ջածմունս, զորս կրելոցք էին հաւատացեալքն
 Բնա, և թէ որպէս յաղթողք գտանելոցք էին
 ի վախճանի: Այլև Մօսէս գրեաց վն նորա,
 ոպ և ինքն տր յն ասէ նաւետարանում Յո-
 հաննու, զի եթէ հաւատայիք Մովսէսի, հա-
 ւատայիք արդեօք և ինձ, զի նա վն իմ գրեաց:
 Ուստի վայ այնոցիկ, ըստ մարգարէիս այսո-
 րիկ, որք ոչ հաւատային ի տր յն, և տակա-
 ւին ոչ կամին հաւատալ, քան զի ինքն ան-
 վրէժխնդիր լինելոց է նոցա:

Գլուխ Բսանկվեցերորդ:

Յազագս թէ քն է օրինադիր ըստ աւե-
 տարանականի վկայութե:



Րինադիր ասեմք զքն, զի զօ-
 րէնս նորս քարոզեաց ի լե-
 րինն Սիոնի, և յերուսաղէմի,
 քանզի անտի ակնկալութի
 ունէին ազգք և ազինք, ըստ
 խոստման մարգարէիցն, որք
 ասացին, թէ ի Սիոնէ ելցեն օրէնք, և քան
 ան յերուսաղէմի:

Իսկ նոր օրէնս այս է օրէն ըղձի և սիրոյ
 ոպ

ոնք աւետարանն Յոհաննու 'իգլուխն ԻՅ. 'իթիւն 34. ասէ , զպատուիրանն 'նոր տամ ձեզ , զի սիրիցեք զմիմեանս , ոնք սիրեցի զձեզ , զի և դուք սիրիցեք զմիմեանս : Զսոյն և Մատթէոս 'իգլուխն 22. 'իթիւն 39. սիրեսցես զմերձաւոր քո իբրեւ զքեզ : Ուրեմն պատուիրանս այս , 'նոր իմն է , քանզի ոչմիայն զբարեկամս , այլ և զթշնամիս հրամայէ սիրել . ըստ որում խօսի Մատթէոս 'իգլուխն 5. 'իթիւն 44. ասելով : Սիրեցեք զթշնամիս ձերս , բարիարարեք այնոցիկ , որք ատեն զձեզ և աղօթեցեք վն հալածողաց , և զրպարտողաց զձեզ : Եւ 'յայլում տեղւոջ հրամայէ թողուլ զպարտիս պարտաւորաց մերոց , որ քանիցս զմեզ գթեցուցանիցեն : Այլև զի մի' ումեք մեղիցեմք , և մի' հատուցանիցեմք զչար փոխա նակ չարի . Եւ այսորիկ սրբոյ օրինի զկանոն իմն համառօտ կարգեաց ասելով , զորինչ կամիք թէ առնիցեն ձեզ մակդիք , 'նոյնպէս արարեք և դուք 'նոցա , և զորինչ ոչ կամիք թէ առնիցեն ձեզ այլք , և դուք մի' առնեք 'նոցա : Եւ այս պատուիրանս լուսաւոր և դիւրին 'յամենեցուն վերընդունելի է , գոլով ըստ բնութե , քանզի իւրաքանչիւր հաճութի և փափաք զայս խնդրէ , և յօժարի :

Եւ բաց 'յայսմանէ զայլս բաղումս օրէնս
Նորոս

Նորս հրամայեաց , զորս օրէնն Մօսիսական
ոչ հրամայէ . քանզի նա ասէ , մի սպանա-
նէր . իսկ Սա ասէ , մի՛ բարկանար եղբօր
քում՝ իտարապարտուց , որ է՝ նոր և պատուա-
կանագոյն : Նա ասէ , մի՛ շնար : իսկ սա
ասէ , եթէ հայիցիս իկին մարդ առ ի ցան-
կանալոյ նմա , անդէն շնացար իսրտի քում :
Նա ասէ , մի երդնուցուս սուտ . իսկ սա
հրամայէ ամենեկն մի՛ երդնուլ , մի՛ յերկինս
և մի՛ յերկիր և մի՛ ի գլուխ քո , և մի՛ յայլինչ , այլ
եղիցի ձեր այժն այժն , և ճշն ոչ : Նա պատուիրէ
ասելով , ական ընդ ական , և ատամն ընդ ատա-
ման : իսկ սա ասէ , մի կալ հակառակ չա-
րին , այլ թողուլ զպարտս միմեանց , և շնոր-
հել իրերաց : Նա ասէ , սիրեսցես զսիրելիս ,
իսկ սա հրամայէ սիրել և զթշնամիս . քանզի
էթէ զայս առնիցէք ասէ , եղիցիք որդիք հօր
ձերոյ երկնաւորի , որ զարեգակն իւր ծագէ
ի վր չարաց և բարեաց : և ասէ զանձրև իւր
ի վր արդարոց և մեղաւորաց : Արդ՝ այսոքիկ
ամենեքեան նորք են , և գեր քան զօրէնս
Մովսէսի : իսկ ինքն քս առե ոչեկի լուծանել
զօրէնս , այլ լնուլ քանզի որինչ յօրէնս Մով-
սէսի պակասիւր ի իօրբութի և ի կեցութի հո-
գեաց , զնոյնն օրէնն քի գերազանցապէս
կատարունակեաց :

Դարձեալ

Դարձեալ նոր ասեմք օրինայն քի՛, զի զարձակումն կնոջ մերժեաց և արգել, ասելով քանզի իյսկզբանէ ոչեղև այդպէս, իբր կամելով մեզ ծանուցանել զայն, որ գրեցեալէ իգիրս ծննդոց, թէ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեանն իմարմին մի: զի զոր ամգուգեաց, մարդ մի՛ մեկնիցէ: Եւ որ արձապէ զկին իւր, արկցէ զնա ի շնուծի, այլև որ զարձակեցեալն առնու շնայ:

Դարձեալ նոր ասեմք, զի զբաճանայութի իմն հաստատեաց, որ է ըստ կարգին Մեղքիսեթեկի, և զպատարագն հին փոխարկեաց իհայ և իգինի, այսինքն, իմարմին և յարիւն իւր, որովք զթողութի մեղաց ընդունիմք, և զկեանս յաւիտենականս գտանեմք: Եւ այսորիկ սրբազանի պատարագիս իհաստատիլն, իսկոյն առջառաց և ոչխարաց զենմունք խանգարեցեալք եղեն, ըստ արում տեսանեմք իհազար վեցհարիւր եօթանասուն և հինկամաց, զի հրեայք զպատարագ ոչ ունին, զի եթէ զայսոսիկ զգուշապէս նկատին և բարեպէս տեղեկանային, արդարև զքս յսեկեալ արդէն ճանաչեին:

Դարձեալ նորասեմք, զի քս էբարձ զխտրուծի կերակրոցն, մինչ առաքեաց զաշակերտս իւրս

իւրս քարոզել զաւետարանն ընդ ամաշխարհ
 ևասաց , զորինչ առաջի ձեր դնիցեն կերի-
 ջիք : Եւայս օրէն վերընդունելի ևպատուա-
 կանագոյն է քան զառաջինն , քանզի հրամայե-
 զայնպիսիս , որք սրբեն զմարդ . ևարգելու
 յայնպիսեաց , որք պղծեն զմարդ : Իսկ կերա-
 կուրք ոչ զսրբութի ևոչ զպղծութի առբե-
 րեն . Ըստ այնմ , որ ընդ բերանն մտանէ ,
 յորովայնն երթայ , ևարտաքս ելանէ , ևոչ
 կարէ պղծել զմարդն : Այլ պղծեն զմարդն ,
 որք իբերանոյն արտաքս գան , զի իսրտէ
 անտի՝ ելանեն խորհուրդք չարք , շնութիւք ,
 պոռնկութիւք , գողութիւք , սուտվկայութիւք ,
 և հայհոյութիւք , այոսքիկ են , որք ստուգիւ
 պղծեն զմարդն . ևոչ զայսինչ , կամ զայն
 ինչ ուտելն իսկտա մարմնոյ : Այլ ամ կե-
 բակուր արարած ւայ է , սպառուրեմն սբ է . զի
 զորինչ եստեղծ ւած բարի է , ըստ վկայութեն
 Մովսէսի իգիրս ծննդոյ . իգլուխն . I . Իսկ
 իբաց կալն իկերակրոց ոմանց հրամայեցաւ
 հրէից քանզի էին խստասիրտք , անիմայք , հե-
 տեօղք զգայութեց իւրեանց , ևնմանիք ման-
 կանց , որք եթէ ոչ ունիցեն զկառավարիչ , ձգեն
 զձեռս իւրեանց իհուրս , ևանկանին իղանա-
 զանս վտանգս : Այլ մանկտիք ըստ սնանե-
 լեայն իւրեանց փոխարկեն զբարս , զի եթէ

ուտիցէն միշտ զմիս դազանի ուրուք , զգէնուն զգարսնորին : Այսպէս ևս հրեայք էթէ ուտէին զմիս աղվէտուց , աղվէտաբարոյք լինէին , այսինքն , նենգաւորք . և էթէ ուտին ՚ի զոհից կռոց , կռապաշտք լինէին . Ուստի անարգել զնոսա յայսպիսեաց մոլութեց ՚ի ձեռն կերակրոց : Բայց ժողովուրդք քրիստոնէից որք զօրէնս , զիմացողութիս , և զսէր ՚ի տնէ շնկալան , կեան ըստ Բանականութե , և ոչ ունին զպէտս այսպիսեաց օրինաց մանկականաց . Բաւական է էթէ ունիցին զհաւատս առ թիւ յս , և զօրէնս նորա պահիցէն . Թէ և ուտիցէն զմիս աղվէտուց և այլոց կենդանեաց , ոչ զնայնորիկ փոխարկէն զբնութիս իւրեանց . Թէ և ուտիցէն զզոհեցեալս կռոց , ոչ վսայնորիկ կռապաշտք լիցին : զի հետեին խեղաց և Բանականութե . և ոչ ոգւոյ , և ցանկութե զգայարանաց . Գիտեն ճշմարտիւ թէ մի է անբարձրեալ , ամենակարօղ , անտէրանց , և արարիչ ամենեցուն :

Դարձեալ նոր ասեմք օրինի այսմիկ , զի ՚ի քարոզութե սորին Բարձաւ հրաման թլիատութե , քանզի ոչ ան յս , և ոչ աշակերտքն նորա պատուիրեցին մեզ թլիատի , այլ ՚ի Բաց հերքէն զնա , որ տրեցեալ եղև Աբրահամու և որդւոցն իւրայելի ՚ինչան ժողովուրդեանն , ճշմարտի

Յշմարտի այ երկրպագողի, առ ի որոշիլ իկո ապաշտից: Բայց գալստեամբն քի բարձաւ թլփատութիւն, զի համայնք, ազգք և ազդէնք տիեզերայ անզանազանապէս կարիցէին դառնալ իկո ապաշտութե առ հաւատն քի, և ընդունիլ ինձանէ զօրհնութիլ: Ապա ուրեմն նշանս այս զանազանիչ ազգաց ոչ ևս ունի զտեղի:

Գլուխ Քսանէօթներորդ :

Յաղագս թէ եր քս թլփատեցաւ :



Լփատեցաւ քս, զի յօրէնս Մովսէսի գրեցեալ եր թլփատել զամս մանկունս ութօրեայս. իսկ մինչ յս եր ութօրեայ, դեռ ևս նոր օրէնն ոչեր հաստատեցեալ, և հինն տալաւին տներ, վսորոյ հարկ եղև հնազանդիլ նմա:

Ալև էթէ քս ոչեր թլփատեցեալ, հրեայքն ոչերբէք անսային բանից նորա, այլ արտաքսէին զնա իմիջոյ ժողովրդոյ: Բայց մեզ պատուիրանս այս ոչեղև տրեցեալ. ուստի ոչ էմք պարտական թլփատիլ: Զի ոչէ մեզ հարկ
M 2 առնել

առնել զայն ամ, զոր արար յս, այլ բաւա-
կան է, զի կատարիցեմք զհրամանս քի կա-
շակերտաց նորին. Վս այսորիկ ամենից քրիս-
տոնէից հարկ է մկրտիլ, զի ինքն քս մկրտե-
ցաւ, և պատուիրեաց ամենեցուն մկրտիլ :
Ուստի և մինչ առաքեաց զաշակերտսն ի քա-
րոզութի ասաց, գնացէք սյսուհետև քարո-
զեցէք զաւետարանն ամենից ստեղծուածոց,
մկրտեցէք զնոսա յանուն հոր և որդւոյ և հոգ-
ւոյն սրբոյ, և այլն : Իսկ այլուրեք ասաց,
որ հաւատասցէ և մկրտեսցի, կեցցէ : Իսկ որք
ոչն հաւատան, դատապարտեսցին : Սովա-
ռւրեմն զերծանիմք ի բնաւից մեղաց մերոց, թէ
յսկզբնականաց և թէ ի գործնականաց, և ըն-
դունելով զօրհնութի իքսէ լինիմք ժառան-
գորդք արքայութե երկնից : Իսկ էթէ զինի
մկրտութեն դարձեալ անկանիցիմք ի մեղս,
հաստատեաց զայլ իմն բժշկութի, զի զմեղս
մերս խոստովանիցիմք քահանայից, որք էթէ
արձակիցեն զմեզ, եղիցուք արձակեցեալք
առաջի սյ. Առ այս ևս տր յս զաշակերտս
իւրս քահանայս կարգեաց, և ետ նոյա իշխա-
նութի հարգելոյ զայլս քահանայս, և թողլոյ
զմեղս ձրի, և ասաց, Առ ք զհոգի սբ, որոց
թողուցուք զմեղս, թողեցեալք լիցին նոցա,
և զորս կապիցէք, կապեցեալք լիցին : Զայսո
սիկ

սիկ և զայլս սոցին նմանս պատուիրեաց մեզ
'ի ձեռն աշակերտաց իւրոց :

Գլուխ Քսանեութներորդ :

Համառօտութի վերոգեցելոցս :



Րիստոս օրէնսդիր մեզ էղև, զի
զնոր օրէն քարոզեաց, այս-
ինքն, զօրէն սիրոյ և ըղձի :
Իսկ զօրէնն Մօսիսի զտրե-
ցեալն 'իլերինն Սֆնայի ոջ
էլոյծ, այլ էլից, և կատարու-
'նակեաց 'իկեցութի հոգեաց մերոց. և զբնաւս
պատուիրանս 'իյերկուս Համառօտեալ միաւո-
րեաց, այսինքն, 'իսէրն այլ և ընկերին: Չպատ-
ուիրանն որ վս շաբաթու պատէհաւոր վար-
կաւ, զոր և աշակերտքն նորա զօրութեն, զոր
'ինմանէ ընկալեալք էին, փոխարկեցին 'իմիա-
շաբաթն և սրբեցին: Չպսակն սրբազնագոր-
ծեաց, յորժամ 'իկանա գալիլիացոց 'իհար-
սանիս կոչեցաւ: Չարձակումն կնոջ սրգել,
և զզուգաւորութիւն զայն անադիր վերահաս-
տատեաց: Չպատարագս մատուցանելիս ըստ
կարգին Ահարոնի, փոխարկեաց 'իպատա-
րագն ըստ հարգին Մելքիսեթեկի: Չթլփա-
M 3 տութիւն

տուութիւն , որ էր նշան բաժանման ազանց , ելոյժ , և զամենեսեան միահաղոյն իճշմարիտ անպաշտութի հրաւիրեաց : Ձկերակրոց խտրութիւն իբացըկեց , և զուտելիս բնաւս միահաղոյն սրբեաց : Ձմիրտութիւն , որով ծնունդք երկրի օրհնին իքս և դառնան առ ճշմարիտն ան , հաստատեաց և հրամայեաց . Եւ զսրբազնութի ապաշխարութե որով վերստին գործեցելոց մեղաց ներումն շնորհի , հարգեաց : Այսոքիկ ամենեքեան գրեցեալք գոն՝ ըն յաւետարանում : Եւ այսէ նոր օրէնն զոր ետ մեզ քս :

Եւ վս այսորիկ ան իձեռն Երեմիայի մարգարէի խոստացաւ որդւոցն իսրայելի ի գրւուին 31. իթիւն 31. ասելով . Ահա ասիկ աւուրք գան , և հարից տանդ իսրայելի և տանդ Տակոբայ զուխտ նոր , ոչ ըստ դաշինն , զոր կուէցի ընդ հարցն նոցա , յաւուր այնմիկ յորում կալայ զձեռանէ նոցա , զի արտածիցէի զնոսա յերկրէն Եգիպտոսի . զգաշն զոր խանգարուն արարին , և ետ տիրիցի նոցա , ասէ տր : տաց զօրէնն իմ իյաղիս նոցա , և ըն սրտի նոցին գրեցից զնա : և եղէց նոցա յան , և ինքեանք եղիցին ինձ ի թողովուրդ : իբրանից այսցանէ հաւատտեմք , Նախ թէ ան յետ օրինացն Մովսէսի ետ զայլիմն օրէն որդւոցն

որդւոցն իսրայելի , առ'ի բառնալ զհինն :
 Երկրորդ , թէ նոր օրինն այս քսադիր տե-
 րոյ իցէ հաստատուն մինչև 'ցվաղձան աշխար-
 հի , ոպ և թագաւորութին քի : Երրորդ թէ
 նոր օրինն այս ոչիցէր գրելի 'իտախտակս
 քսրեղէնս , կամ 'իքարտեղս , այլ 'իմիտս և
 'իսիրտս մարդկան , ոպղի ամենեքեան 'ընսրտի
 իւրում ընթեռնուցուն զնոյնն , և մի' եղիցին
 կարօտք վարդապետի ումեք առ'ի ճանաչել
 զւժ , այլ 'իմեծագունից մինչև 'ցփոքրագոյնս
 ինքնին ճանաչիցեն զնա , ևւժ 'իճշմարտութե
 յայտնեսցի նոցա , և եղիցի բացափայլ 'ինորոց
 օրինաց : Ստուգիւ օրինն այս , զորմէ խօսի
 Երեմիաս Է օրէն տն յի , զի ոչ 'յերկինս
 գրեալ առաքեցաւ 'յերկիր , ոպ անիմայք
 և անզգայք ոմանք կարծեն , այլ ինքն տր յս
 բերանով իւրով օրհնեցելով ուսոյց զնոյնս ,
 և գծագրեաց 'իսիրտս աշակերտաց իւրոց .
 Ուստի և մինչ առաքեաց զնոսա 'իքարողել
 զաւետարանն , ոչ էտ նոցա զգիրքս գրեցեալս
 'իքարտիզի , այլ միայն զպատուերս ասելով ,
 գնացէք այսուհետև աշակերտեցէք զւժս հե-
 թանոսս , մկրտեցէք զնս 'յանուն հօր երդւոյ
 և հոգւոյն սրբոյ , ուսուցէք նոցա պահել զւժ
 զօրինչ պատւիրեցի ձեզ , ևահաւասիկ էս ընդ
 ձեզ եմ զւժս աւուրս մինչև 'իկատարած
 M 4 աշխարհի :

աշխարհի : Դարձեալ ՚ըն վերջնում գլխոջն
Մարկոսի ասէ, գնացէք ընդ հանուր աշխարհ,
և քարոզէցէք զաւետարանն ամենից արարու-
ծոց, ոչ զաւետարանն գրեցեալ ի քարտիզի,
այլ զհամբաւն կամ զաւետին բարի, զի մեր-
ձեցաւ արքայութիւն մայ, ու ասէ Մատթէոս
գնացէք և քարոզէցէք, թէ մերձեալէ արքայ-
ութիւն մայ, այսինքն, արքայութիւն քի, որով
Թողանին մեղք կյանցանք հախահօրն Ադա-
մայ, և քանի փակեցեալ դուռն արքայութե,
և օրհնին համայնք ազգք և ազինք : Եւ որք
միանգամ ընդունին զօրէն նորա, այսինքն,
զօրէն սիրելոյ զմեծ և զընկերն, և հաւատան
ինա, կեցցեն : Այս է համբաւն բարի, զոր
սուտքեալքն սքս աւետարանեցին ընդ ընդ-
հանուր աշխարհ, և որք ընկալան գնա,
ըուսուորեցան մտօք, և ծանեան զմեծ Ճշմա-
րիտ : Ապա ուրեմն տախտակն կտակարանաց
նորոյ այսորիկ օրինի է միտ և սիրտ մարդկան :
Քանզի հաւատաւն յմեծ է գործ մտաց : Իսկ
սիրելն զմեծ և զընկերն է գործ կամաց և օրտի :
Եւ յայսցանէ երկուց կախին համայնք օրէնք
և մարգարէութիք : Եւ սիրէ, զօրէնան կա-
տարէ : Բայց քանզի զինի հրատարակման
աւետարանականի այսորիկ հաւատոյ, յարեան
իստեբայք բազումք, որք խնդրէին խաւարե-
ցուցանել

ցուցանել զօրէնս . Ուստի երկնչելով քրիստոնէից թէ միգուցցէ զկնի մահւան առաքելոյն մոլորութիւք զօրանայցեն , եինքեանք ոչ կարիցեն ընդիմամարտիլ Լարտախել զնոյնս . Խնդրեցին յառաքելոյն , զի զիրս զլիաւորս և զհարկաւորս կեցութե հոգեաց գրիցելին , և քարտիզիւք աւանդիցելին նոցին : Այլև զի յիշատակաւ և ուսմամբ հրամանացն քի կարիցելին հերքել զառաքեալս սուտս : Վասն որոյ Մատթէոս զկնի համբարձմանն քի յետ հնգետասանից ամաց իյերուսաղէմ քաղաքի լեզուաւ եբրայականաւ գրեաց զաւետարան իւր : Եւ Մարկոս որ եղև աշակերտ Պետրոսի առաքելոյն , զկնի 30. ամաց լմեճն հռոմ գրեաց զաւետարան իւր : Ղուկաս , որ եղև աշակերտ Պողոսի առաքելոյն ինոյնում ժամանակի : Իսկ Յոհաննէս սիրելի աշակերտն քի զկնի 60. ամաց : Եւ յայսցանէ աւետարանչաց երկուքն , այսինքն Մատթէոս և Յոհաննէս անմիջապէս ուսեալք ի Քնէ գրեցին : Իսկ երկուքն , այսինքն , Մարկոս և Ղուկաս միջնորդութեւ պլոյ : Իսկ զաւետարանն քի գիրք աւետեաց յորջորջեմք , ոչ վս այնորիկ իբր թէ գրեցեալ իյէ յերկինս և առմեզ իջեալ ըստ բարբանջմանն տգիտաց , այլ զի տրն մեր յս քս ինքն ուսոյց և աւանդեաց մեզ

մեզ ՚ի ձեռն առաքելոց իւրոց սրբոց: զի ընթերցմամբ նորին զօրացեալք ընդէմ հակառակորդաց, գտանիցեմք զմխիթարութի, և զկէցութի հոգեաց մերոց:

Ապա ուրեմն Թրն մեր յս քս օրենսդիր է, ըստ մարգարեից, և քարոզ աւետեաց ի վր լերինն Սիոնի, որ զճանապարհս կեցութե ՚ի ձեռն առաքելոց իւրոց սրբոց ծանոց աշխարհի: և օրըստօրէ համասփռէ զնոյնն, և տարածէ, զոր օրինակ ՚ի հնդիկս արեւելահայնս, և ՚ի հնդիկս արեւմտականս, ՚ի կղզիս հեռաւորս և յանձանօթս, ՚ի գիւղս և ՚ի քաղաքս, ու զի ամենեքեան միահաղոյն և միաբան կարիցեմք երկիրպագանել Թրն յի:

Գլուխ Քսաննիններորդ.

Յաղագս թէ քս է փրկիչ ըստ աւետարանականի վկայութե:



Եւ առն յի զփրկիչ գոյն, անունն իւր օրհնեցեալ համահաւաստէ. զի անունս այս յս է բնայական, զփրկիչ նշանակէ ՚ի մերում լեզուի և բարբառոջ: Սւտի հրեշտակ Թն մինչ եկն առ Յովսէփ ՚ի տէսլեան ասաց, Յովսէփ:

Յովսէփ որդի Դաւթի , փ երկնչիր առնուլ առքեղ զԼաւրիամկին քո , զի որ 'ի նմա է ծնիցեալ , է 'ի հոգւոյն սրբոյ , ծնցէ զորդի , և կոչեացն զանուն նորա յս , զի նա փրկեսցէ զթողովորդ իւր 'ի մեղաց իւրեանց : Եւ առհովիւսն ասաց , ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրախութի մեծ , որ եղիցի ամենից թողովորդոց , զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ , որ է օծեցեալ տր 'ի քաղաքի Դաւթի : Զսոյն ճշմարտութի վկայեցին սամարացիքն , մինչ ասացին 'ցկինն սամարուհի , մեք գիտեմք , զի սա է փրկիչն աշխարհի : Ապա ուրեմն ըստ բանից այսոցիկ քս է փրկիչ :

Գլուխ Երեաներորդ .

Յաղագս թէ քս է տր ըստ աւետարանական վկայութե :



տրութիւն քի աւետարանն սք վկայէ 'ի բազումս տեղիս , որոց զոմանս առբերցուք աստ 'ի հաւաստութի ճշմարտութե : 'Ըն յաւետարանում Ղուկասու 'ի գլուխն 1. 'ի թիւն 43. ասէ : Եղիսաբէթ 'ցկոյան Լաւրիամ , Եւ ասի ու է

է արց ինչ , զի գայցէ մայր տն իմոյ առիս :
այսինքն, զիսորդ դու որ ես մայր տն իմոյ ողջու
նեւ զիս , որ եմ աղախին նորա : Եւ ըն նոյ-
նում գլխով , իթիւն 28. ասէ հրեշտակ տն
յկոյսն Մարիամ , Ողջիւր լի շնորհիւ , տը
ընդ քեզ : Այլ ըն նոյնում գլխով , իթիւն
76. Չաքարիաս լցեալ հոգւով սրբով ասաց
յմանուկն Յոհաննէս , Եւ դու մանուկ , մար-
գարէ բարձրելոյն կոչեսցիս, քանզի նախագը-
նասցես առաջի Էրեսաց տն պատրաստել
ղձանապարհս նորա :

Իսկ ինքն քս ասաց յաշակերտս իւրս, դուք
կոչէք զիս վարդապետ ետր , եւ բարւոք առնէք,
քանզի եւմ իսկ , զի եթէ ես տրս եւ վարդա-
պետս լուացի զոտս ձերս , եւ դուք պարտիք
միմեանց զոտս լուանալ : Ապա ուրեմն ըստ
քանից այսոցիկ քս տր է :



Գլուխ Երեսունևմեկորդ .

Յաղագս թէ քս Է ԹԺ ըստ աւետա
րանականի վկայութե :



ԹԺԻՆ քի համայնք առա-
քեալք Լաւտարանիչք և
բնաւք գրեանք հարցն սրբոյ
վկայեն , և հանուրք քրիստո-
նէայք Լմանաւանդ իմաստ-
նագոյնք նոյն զքս ԹԺ և որդի
այ ստորասէն , խոստովանին , և քարոզեն .
Քանզի 'ըն յաւետարանում Մատթէոսի 'ի-
գլուխն 3. 'իթիւն 17. զինի մկրտութեն յի
'իյորդանան , Աղաղակեաց հայր ԹԺ յերկնից
'իլուր ամենեցուն ասելով Դա Է որդի իմ սի-
րեցեալ ընդ որ հաճեցայ : և 'ըն յաւետարա-
նում Մարկոսի 'իգլուխն 1. 'իթիւն 11. նոյն
ձայնն հայրական վկայեաց յերկնից ասելով
Դու ես որդի իմ սիրեցեալ իքեզ հաճեցայ :
Իսկ 'ըն յաւետարանում Ղուկասու և 'ըն
յաւետարանում Յոհաննու նոյնպէս : Դար-
ձեալ 'ըն յաւետարանում Յոհաննու 'իգլու-
խն 1. 'իթիւն 34. ասէ Յոհաննէս մկրտիչ ,
Էս տեսի և վկայեցի , զի սա է որդին այ :
Չսոյն ասէ ևս Նաթանայէլ 'ըն 'նոյնում
զլսոջ 'իթիւն 49. Բաբբի , դուես որդի այ :

Է

Եւ ըն յաւետարանում Մատթեոսի ՚ի գլուխն 14. ՚ի թիւն 33. ասի , իսկ որք էին ՚ինաւակին Եկին Լերկրպագեցին նմա ասելով , արդարե որդի մյ էս : Եւ Լես ըն յաւետարանում Մատթեոսի ՚ի գլուխն 16. ՚ի թիւն 16. պատասխանեաց Պետրոս յմի ասելով , դու էս քսն որդին մյ կենդանւոյ :

Այլ ըն նոյնում աւետարանում ՚ի գլուխն 27. ՚ի թիւն 54. ասաց Հարիւրապետն , իրաւի որդի մյ էր սա : իսկ ըն յաւետարանում Մարկոսի ՚ի գլուխն 1. ՚ի թիւն 1. ասի . Սկիզբն աւետարանի յի քի որդւոյ մյ : Դարձեալ քն թովմաս ըն յաւետարանում Յոհաննոս ՚ի գլուխն 20. ՚ի թիւն 28. ասաց ՚ցյմ . տիր իմ Լամծ իմ : Եւ յայլս բազումս տեղիս վկայի նոյն Ճմարտութիս , թէ ՚ի հրէից , Լթէ ՚ի յայսահաբաց , զորս աւելորդ համարիմք գրել . Ապառելեմն Ճմարտապէս քս ամ է , Լորդի մյ :



Պիլուխ Երեսունհերկուերորդ .

Առարկութիք հակառակորդաց:



ԱՆ ոմանք , քս է որդի մյ
 ուն Լմեք , այլ ոչ որդի մյ Ճշմարիտ : Պատասխանեմք , Թէ
 զվկայութիւն բնաւս զորս առ
 բերաք զս յի հաստատեն
 նորին զըստ բնութե որդի
 գոլն մյ : Դրձէլ , բազումք կոչին որդիք մյ ,
 սակայն յս քս ասի որդի մյ միածին , ուն ասէ
 Յոհաննէս իգլուխն 3. իթիւն 16. քանզի
 այնպէս ամ սիրեաց զսլխարհ , զի զորդին
 իւր միածին տայցէր , զի ամ որ հաւատայ
 ինա , մի կորիցէ , այլ ունիցի զլեւսնն յաւիտե-
 նակսն : իսկ իգլուխն 1. իթիւն 18. ասէ . Չամ-
 ոչոք ետես երբեք , միածին որդին որէ ըն
 ծոցում հօր նա պատմեաց : Դարձեալ , ըն
 յաւետարանում Յոհաննէս իգլուխն 9. ի
 թիւն 35. Էհարց քս յկոյրն լուսաւորեցեալ
 ասելով , դու հաստատա յորդին մյ . Պատաս-
 խանեաց նա Լասաց , ուն է ար , զի հաւա-
 տայցեմ ինա , Լասաց նմա յս , Լտեսեր
 զնա , Լոր խօսի ընդ քեզ , նա է : իսկ նա
 ասաց , հաւատամ ար , Լեյերեսո անկեալ եր-
 կիրեպաղ .

կիրեարագ նմա : Եւս 'իզլուին 11. 'իթին 4. լուեալ յի զհիւանդութին Ղաղարու ասաց , հիւանդութիւնս այս ոչէ առմահ , այլ վս փառացն ւն , զի փառաւորիցի որդին ւն այնուիկ : Այլեւ 'իզլուին 17. 'իթին 1. ասէ յս , հայր եկն ժամ , փառաւորեալ զորդի քո , զի կորդիք փառազարդիցէ զքեզ :

Ապա ուրեմն ըստ վկայութեց այսոցիկ յս և Ճմարիտ որդի ւն միածին եւակից հօր , և հաւատացելոց իւրոց զկեանս պարգևօղ :

Պատասխանեմք ևս թէ արտաքոյ ւն ոչ գոյ կարողութի զկեանս մշտնջենաւորս շնորհելոյ , իսկ քս է շնորհօղ կենաց մշտնջենակաւնաց , ըստ այնմ որ հաւատայ ինձ կեցցէ յաւիտեան , ուրեմն քս է Ճմարիտ ւն : Դարձեալ , միածին ասի՝ այն , որ է որդի ըստ բնութե և ոչ ըստ որդեգրութե . իսկ քս է որդի միածին ւն . ոսկ ցուցաք , ապա ուրեմն ևս լին :

Դարձեալ , որդի ըստ էութե ունի զբնութի հօր , իսկ քս ունի զբնութի հօր ըստ մարգարեից , քանզի մարգարեք վկայեցին վս քի , թէիցէ որդի ւն և ւն . իսկ գիրք աւետարանականք մինչ զյս որդի ւն ասէն , համաձայնին մարգարեից , զի եթէ այլապէս խօսէին , ընդիմաբանէին նախատեսութե մարդարեիցն , և այսպէս քուտք լինէին , ապա ուրեմն

րէմն քս է Ճմարիտ որդի ւյ ըստ բնութե,
 ևսծ :

Արդ՝ յիսկզբանէ մինչև յարդ եզրակացու
 ցանելով ասեմք, թէ քս է Մսիհն իմարգա-
 րէից աւետարանեցեալ, իկուսէն Մարիամու
 ըբէթղէհէմ քաղաքի, իժամանկի յորում ոչ
 գոյր իշխան իցեղէն Յուդայի ծնիցեալ. որ
 զսքանչելիս մեծամեծս իկեցութի ազանց ար-
 տագործեաց, մահու ևխաչի դատապարտե-
 ցաւ, ըստ Դանիէլի ևըստ Եսայեայ մարգա-
 րէից. Թաղեցաւ իյերկրի, յարեաւ իմեռե-
 լոց զկնի երից աւուրց, համբարձաւ իյեր-
 կինս, նստաւ ընդաջմէ հօր: որն է մարգարէ,
 հովիւ, քահանայ, իշխան, դուքս, Թագաւոր,
 ևժառանգ յւյ կացուցեալ հանրոյ աշխարհի,
 օրում ևծնունդք երկրի ծառայէն, ևհա-
 մայնք Թագաւորք ևիշխանք երկիրապառանէն,
 որոյ իշխանութիւն է անզրաւելի, ևԹագաւո-
 րութիւն անվախճանելի. Օրէնսդիր է ևփրկիչ
 Եր է բոլորից կորդի ւյ. Ուստի համայնք
 օգինք ինմանէ օրհնին, ևբնաւք բարութիւնք
 ինմանէ յառաջանան, կորք միանգամ իս-
 ձութի հաւատան ինա ևպահէն զպատուի-
 քանս նորա, կեցցեն յաւիտեան: Այսօրիկ
 ամենեքեան էն Ճմարտագոյնք Ճմարտու-
 թիք, ևպայծառագոյնք քան զարեգակն, և
 Ը
 այնքան

այնքան հաւատագոյնք , մինչդի թէև ոչի-
ցէին գրեանք աւետարանականք , սակայն
քարշէին զմեզ 'ի հարկէ հաւատալ քի , և հե-
տեիլ լուսազարդից շաւղաց 'նորին :

Գլուխ Երեսուններեքերորդ .

Ուսումն ևխրատ վս պատասխանելոյ
յառաջարկութեց :



Այ զի իւրաքանչիւրոք կարի-
ցէ պատասխանել և լուծել
զառարկութիս հակառակոր-
դաց ընդէմ հաստատելոյ
ճշմարտութեւ . Ասեմք , թէ
օրհնեցեալ անունս այս , Քս,
զօծումն նշանակէ , Բայց զօծումն իմն անհա-
մեմատ այլոց , եզական , և գերազանց քան
զամ օծումն , քանզի է անձային , ուս ասա-
ցաք 'ի վերոյ : Քանզի յս օծաւ 'նոյնով անու-
թէն . Զի յորժամ հաճեցաւ կամն անձային
ընուլ զխոստմունս , զորս խոստացեալէր առ-
Սբրահամ , իսահակ , և Յակոբ , իբրթէ 'ի սեր-
մանէ 'նոցա օրհնելիք իցէին ազգք և ազլիք ,
առաքեաց զԳաբրիէլ հրեշտակապետն առ-
կոյսն Մարիամ , և աւետեաց 'նմա , թէ 'ի նմանէ
ծնցի

ծնցի քսն, զոր մարգարէք գալոց գոլ քարոզեցին. իսկ իլսելն Մարիամու զբանս զայս, իսկոյն՝ ամենակարօղն ամ՝ ըն կուսականում օրովայնի նորա, ինչեռն զօրութե հոգւոյն սրբոյ, բաղկացոյց զմարմին իմն իմաքրագու նեղէ յարենէ նորա, զոր և հոգւով բանակա՝ նաւ կենդանացոյց, ևարար մարդ ճշմարիտ, և ի նոյնում կիտի ժամանակի բանն այ, որ և է ամ ևորդի այ միածին, զմարդկութին զայն իյանձն իւր սեփական միաւորեաց, և առ այս միաւորութի բոլոր երրորդութին ներգործեաց, այսինքն հայր ևորդի և հոգին սբ իմիասին. Քանզի առք երրորդութեն առ արտաքս են անբաժանելիք, բայց միաւորութին այն եզերեցաւ յանձն բանին, վս այսորիկ միածին որդին այ, կատարեալն ըն յամութե, զկնի միաւորութեն այնորիկ ընդ մարդկութեն, եղև մարդ կատարեալ, նման մեզ ամենեկն բաց իմեղաց. թարց ումեք փոփոխութե ևայլայլութե բնութեցն, այսինքն, ամայնոյն, ևմարդկայնոյն, զի երկաքանչիւր բնութին նիւրում էութե, յարսմնաց, այսինքն մարդկութին ըն յէութե իւրում ստեղծականում, ևամութին ըն յէութե իւրում անստեղծականում. Եւ այսպէս որդին այ ֆնաց ամ կատարեալ ըն ամութե, ոս միշտ

Էր : Լնոյն ինքն 'ըն յառեցելում՝ մարդկու
 թէ մարդ ճշմարիտ և կատարեալ . Էւ այս է
 զոր Յոհաննէս 'իյսկզբան իւրոյ աւետարա-
 նին ասաց, 'իյսկզբանն էր բանն, և բանն էր
 առ ամ, և ամ էր բանն . Էւ բանն միս
 Էղև, և բնակեցաւ 'իմեզ . այսինքն, բանն ոյ
 յաւիտենական 'ի ժամանակի Էղև մարդ : Աս-
 տուստ երկու բնութիւնն առանց փոխարկու-
 թե, 'իմի յանձն նոյնոյ բանին ոյ միաւորե-
 ցեալք, մի քս ասին և օծեցեալ : Վս որոյ քս
 անունս ոչ յաղագս միայնոյ ամուսնէ, և ոչ
 յաղագս միայնոյ մարդկութե քարոզի : այլ
 յաղագս երկուցն 'իմիասին միաւորեցելոյ, ըստ
 որում անունն, Օծած, նշանակէ . որ երկուց
 թրաց ունի զնշանակութի, այսինքն իրին
 քծեցելոյ որէ բնութի մարդկային, և իրին
 որով օծեցաւ . որ է ինքն ամուսնին : Ապա-
 տրեան քս է ամ և մարդ, ոչ յայնմանէ զի է
 ամ օծեցեալ, այլ յայնմանէ զի է մարդ օծե-
 ցեալ, զի մարդկութին ամուսնն օծեցեալ
 Էղև, այսինքն ընդ նոյնոյ ամուսնէն միաւորե-
 ցեալ Էղև : Վս որոյ քս մարդ է և ամ, մարդ
 է մարդկութեն, և ամ է ամուսնն . զի ամինչ
 որ միանգամ ստորոգի զայ և զբանէն ոյ,
 և ստորոգի զմէն յսէ, ըստ որում է ամ և բան
 ոյ : և ամինչ որ միանգամ ստորոգի զմարդոյ,

ստորոգի ևս զմենէ յէ ըստ որում է մարդ :
 Ուստի համայնք ստորոգութիք անուծե և
 մարդկութե ստորոգին զմիոյ կոնոյնոյ յէ քէ,
 որ ունի զերկու բնութիս; այսինքն զանային
 և զմարդկային : Վս որոյ մինչ ասեմք թէ յս
 է որդի մայ, ոչ իմանամք թէ մարմին, և ոսկր,
 և արիւն, և հոգի նորա իցէ որդի մայ, այլ թէ
 անուծեին իցէ որդի մայ : Նմանապէս մինչ
 ասեմք թէ յս է որդի մարդոյ, ոչ իմանամք
 թէ ըստ անուծեին իցէ որդի մարդոյ, այլ
 ըստ մարմնոյն և ըստ հոգւոյն, զի է մարդ :
 Եւ այսպէս միշտ ղնոյն կանոն պահեմք
 սակա այլոց ստորոգութեցն, քանզի մեր յս
 է մի անձն երկօքումք բնութեք միաւորե-
 ցեալ, որոյ մինն է արարած և միւսն արա-
 րիչ : մինն մարդկային և չարչարանաց և մա-
 հուան ընդունակ, իսկ միւսն անային անչար
 չարելի և անմահ : Եւ զայսոսիկ յարացուցիւ
 մարդոյ բացայայտեմք, զի ըն մարդում զեր
 կուս բնութիս հակադրեցեալս միմեանց նկա-
 տեմք, զմարմին և զհոգի բանական, մարմինն
 տեսանելի է և շօշափելի, ապականելի է և
 մահացու : իսկ հոգին բանական է ան տե-
 սանելի, անշօշափելի, անապական, և ան-
 մահ : մարմինն ուտէ և ըմպէ, ննջէ և հիւան-
 ճանայ, առողջանայ տկարանայ և զօրանայ :

Իսկ հոգին բանական յայսցանէ յատկութեց
ամենեւեմբ բացակայանայ , զի ոչ ուտէ և ոչ
ըմպէ , ոչ հիւանդանայ և ոչ առողջանայ , ոչ
տկարանայ և ոչ զօրանայ : զի այսպիսեաց
անընդունակ է . և ե միշտ էութիւն կյատկութե
թիւք իւրովք բնականօք , ըստ որում իյսկզբա-
նէ զօրութիւնն աշտեղծեցեալ է : Արդ՝ եթէ
հոգին բանական և մարմինն հականերհակք
են , ուրեմն իհարկէ են երկու բնութիւնք :
որք թէպէտ միաւորեցեալք են իմի մարդ .
սակայն միշտ պահեն զերկոյութի , և ոչ եր-
բէք լինին մի բնութիւն , եթէ ոչ անկարաբար
փոխարկեցեալք առմիմեանս խառնիցին և
շփոթիցին և առնիցեն զմի ինչ , ըստ որում
հանդիպի իտարերս , որք խառնեցեալք առ-
միմեանս առնեն զայլիմն :

Բայց այս է անկարելի , զի մարմինն ոչ
կար է , լինիլ հոգի բանական , և ոչ հոգին բա-
նական մարմին : Եւ քանզի ըն մարդում եր-
կու են բնութիւնք , և ի յերկուցն բաշխանայ
մի մարդ , զոր օրինակ էս մի եմ , և ունիմ զեր-
կուս բնութիւնս միաւորեցեալս , զմինն մար-
մնական , և զմիւսն հոգեկան , որք թէպէտ
միաւորեցեալք են ընդ միմեանս , սակայն մինն
ոչէ միւսն , զի իջորոշիլն իմիմեանց , ոչ մար-
մինն , և ոչ հոգին , առանձնապէս առեցեալք
ասին

ասին մարդ , ուրեմն էն երկու բնութիք
անշփոթաբար միաւորեցեալք , որք միշտ պա-
հնն անխախտօրէն զյատկութիս իւրեանց .
իսկ երկու իրքն ոչ լինին մի . Ոպ ևմին ոչ լինի
երկու . Ուստի է ուրեմն ինձ , զի իցեմ մի ,
ոչ ասիմ 'իմութե հոգւոյ , և ոչ ևս 'իմութե
մարմնոյ , զի ոչ համակայիմ 'իմարմնոյ միայն ,
և ոչ ևս 'իհոգւոյ միայն . այլ 'իհոգւոյ և 'իմար-
մնոյ միաւորեցելոց ընդ միմեանս , ուրեմն
մի էմ 'իմութե անձին , ոպ ևհամայնք իմաս-
տասերք ուսուցանեն ; Եւքանզի անձն մար-
դոյ մի է , վս որոյ մի ասեմք զմարդ , և զեր-
կուս բնութիս միաւորեցեալս 'իսմա , զի իմաս-
տասերք սահմանեն զանձն գոյ բանականի
բնութե անտրոհելի գոյացութի . Եւ եթէ
անձն է եզակիս իմն , ուրեմն 'իհարկէ մի է ,
և իւրաքանչիւր մարդ մութեմ իւրով անձնա-
կանաւ մի ասի : Ապա ուրեմն մինչ մի ասեմք
զմարդ , որ է բաղադրեցեալ 'իյերկուց , այսինքն
'իհոգւոյ և 'իմարմնոյ , զմութի նորին անձ-
նաւորական 'իմիտ ածեմք : Ըստ այսմ ևս
խորհիլ պարտիմք զքէ , զի քս մի է 'իյերկուց
բնութեց անշփոթապէս միաւորեցելոց , այս
'ինքն 'իյօծեցելոյն , և յայնմանէ որով օծաւ
երկու է նկատելով 'իբնութին անձային , և
մարդկային ; և մի է նկատելով 'իմութի անշ

ձին այ բանին , նորում գոն միաւորեցեալք
 նախասացեալքն բնութիք : Եւ այսու պատ-
 ճառաւ ասեմք , թէ քս ամ մարդ է , և ամ
 մարդացեալ է , և թէ ամ մարդացեալ է որդի
 մարդոյ , և թէ երանուհին Մարիամ կոյս է
 մայր այ մարդացելոյ , թէ և ամութին քի ոչ
 էառ ինմանէ զեղանիլն ծննդեամբ , քանզի
 ամութին ոչ ծնանի յարարածոց , որով հե-
 տե է յաւիտենական . Սակայն երանի կոյսն
 Մարիամ ասի մայր այ , և ամ ասի մարդ
 եղեալ և որդի մարդոյ , կամ որդի Մարիամու ,
 զի յայսոսիկ ոչ վերախնդրի թէ ամութին
 ծնանիցի , այլ բաւական է միայն , զի մարդ
 կութին իսրբուհւոյ կուսէն Մարիամու յղա-
 ցեալ , իծնելութի իւրում իցէ միաւորե-
 ցեալ ընդ անձին բանին այ : զի այսու միաւո-
 րութի ասի ամ որդի մարդոյ : Օր օրինակ
 մարդն յղացեալ յարգանտի մօր , իյղացմանն
 քւրում միայն առնու իծնողաց իւրոց զմար-
 մինն , այլ ոչ զհոգին բանական , որ ստեղ-
 ծագործեցեալ զօրութիւն այ , ներհեղանի .
 սակայն որով հետե մարմինն և հոգին բանա-
 կան միաւորեցեալք են իմի անձն մարդկային ,
 քոլոր բաղադրութին այն , ասի որդի մարդոյ .
 Եւ թէպէտ հոգին բանական որ է մասն
 ազնուագոյն , ոչ յառաջագայիցի իծնողաց 2

այլ միայն մարմինն , սակայն բոլորն այն , մարդ-
յորջորջի և որդի մարդոյ , քանզի ի ծնելութեն
իւրում՝ զոյ անձնաւորաբար միաւորեցեալ
ընդ հոգւոյն Բանականի : Նոյնպէս ասեմք
ևս յաղագս քի , զի մարմին նորա իմաքրա-
գունեղէ յարենէ երանուհւոյ կուսին Մարիա
մու , գործակցութե՛ք հոգւոյն սրբոյ յղացեալ ,
և հոգի նորին Բանական զօրութե՛ն ւնայ ստեղ-
ծագործեցեալ , այսինքն , բոլոր մարդկութիւն
քի ընդ անութեն միաւորեցաւ իշանձն Բանին
ւնայ . և բոլորս այս՝ ստի որդի ւնայ ; ասի ևս որ
դի մարդոյ ըստ մարդկութեն ծնիցելոյ իյերա-
նուհւոյ կուսեն Մարիամայ : Իսկ Մարիամ
կոյս , ասի մայր ւնայ , և մայր որդւոյն ւնայ մար-
դացելոյ , ոչ վն այնորիկ իբրեւ անութին ան-
սերելի սերեցեալ իցէ ի կուսեն Մարիամայ ,
այլ քանզի սիրեցեալ մարդկութին միաւորե-
ցեալ գոյր յանձն Բանին ւնայ , ունայ ասացաք
ի վերոյ :



Գլուխ Երեսունհորսերորդ .

Առարկութիք ոմանք ընդիմադրականք :



Նդէմ այսմիկ Ճշմարտութե
առարկէն ոմանք 'ասելով .
Քս ամ է ըստ մարգարեիցն ,
ապա ուրեմն ոչ կարէ ծնանիլ
'իկնոջէ , զի որ ծնանի 'իկնո-
ջէ է արարած , և ոչ ամ
արարչագործ : Պատասխանեմք , քս ծնա-
'իկուսէն Մարիամայ ըստ որում է մարդ , ոչ
ըստ որում է ամ , այլ քանզի մարդկութիւն
այն գոյր միաւորեցեալ ընդ ամութեն 'իյան-
ձն բանին այ , վս որոյ ասի քս ծնիցեալ 'ի
Մարիամայ . այսինքն ըստ մարդկութեն , զի
ըստ ամութեն ծնիցեալ գոյր քս 'յայ հօրէ
նախ քան զյաւիտեանս : Աստուտ քս զեր-
կուս ունի զճնունդս , մինն յաւիտեանական
ըստ ամութեն , 'իհօրէ այ , իսկ միւսն ժա-
մանակաւոր ըստ մարդկութեն 'իկուսէն Մա-
րիամայ : Ապա յուրեմն քս , որ ունի զերկուս
բնութիս միաւորեցեալս 'իմի անձն բանին այ
ըստ միոյն ասի ծնանի 'իյաւիտեանից և ըստ
միւսոյն ծնանիլ 'իժամանակի : Ուստի եզրա-
կացու ցանիլ ոչ կարէ , թէ քս իցէ արարած ,
եթէ

էթէ ոչ ըստ մարդկութեն : զի մարդկութիւն քի է ճշմարիտ արարած , և ժամանակաւոր , բայց ըստ անուանեալ է յաւիտենական : Եւ զայս նշանակեաց ինքն քս մինչ ասաց . Յառաջ քան զլինիլն Աբրահամու եմ ես : Թեպէտ կշեռ քառասնոց ծննդոց զինի Աբրահամու ծնաւ իկուսէն Մարիամայ :

Առարկէն հակառակորդք . արարիչն ոչ կարէ ծնանիլ յարարածոյ իւրմէ . իսկ քս ան է արարիչ . և Մարիամ կոյս արարած ան , ապա ուրեմն քս ոչ կարէ ծնանիլ ի Մարիամայ կուսէ :

Պատասխանեմք , քս է համանգամայն ան մարդ . ըստ որում է ան , է արարիչ ամենից արարածոց , նա կերանուհւոյն Մարիամու . իսկ ըստ որում է մարդ , է որդի երանուհւոյն Մարիամու :

Առարկէն հակառակորդք , Որդին մարդոց է արարած , իսկ քս է որդի մարդոց , ապա ուրեմն քս ոչ է ան , այլ արարած : Պատասխանեմք , քս ըստ որում է մարդ , է որդի մարդոց կարարած . իսկ ըստ որում է ան , է որդի ան կան :

Առարկէն հակառակորդք , քահանայն պարտի ունել ինքեան զվէհադոյն ոք , որում պատարագիցէ , իսկ քս է քահանայ , ապա ուրեմն

ուրեմն ունի զվէհագոյն որ : Կայսպէս ոչ էղիցի ամ :

Պատասխանեմք , քս քահանայ է ըստ որում է մարդ , և ըստ մարդկութեն ունի զվէհագոյն որ ինքեան , այսինքն զամ , վս որոյ Կասաց հայր իմ մեծ է քան : զիսիսկ ըստ որում է ամ , է հաւասար հօրյաւիտենականի , ուստի Կասաց , Էս և հայր իմ մի էմք :

Առարկեն հակառակորդք , ամ որ ընդու նակ է մահու , է ապականելի , և ոչ է ամ , իսկ քս մեռաւ ըստ մարգարեիցն , ապա ուրեմն քս ոչ է ամ : Պատասխանեմք , քս մեռաւ ըստ որում է մարդ , և ոչ ըստ որում է ամ :

Առարկեն հակառակորդք , ծառայն այ ոչ կարէ գոլ ամ , այլ արարած . իսկ քս է ծառայ այ ըստ մարգարեիցն , ապա ուրեմն քս ոչ է ամ : Պատասխանեմք , քս է ծառայ այ ըստ մարդկութեն , ըստ որում է մարդ , այլ ոչ ըստ ամութեն , ըստ որում է ամ և տր ամենից արարածոց :

Առարկեն հակառակորդք , քս է նման մեզ , ըստ որում աւետարանն սբ վկայէ , քանզի եկեր , էարբ , տեսանիւր , շօշափիւր Կայլն , ապա ուրեմն ոչ է ամ : Պատասխանեմք , քս է ամ և մարդ . ըստ որում է ամ , ոչ է նման մեզ , այլ ի վեր քան զմեզ , և գեր քան զամ
ստեղծ :

ստեղծուած . Իսկ ըստ որում է մարդ , է նման մեզ ամենեւեմբ բաց իմեղաց :

Առարկէն հակառակորդք . Ած ունի զմի միայն կամ , իսկ քս զայլ իմն ունի ինմանէ , քանզի յաղօթէն իւրում առհայր ստաց , ոչ իմ կամ , այլ քոյդ լիցի , ապա ուրեմն քս ոչեւ ամ : Պատասխանեմք , քս է ամ կատարեալ և մարդ կատարեալ , վս որոյ ունի զերկուս կամս , այսինքն զամօսյին և զմարդկային , որք ոչէն միմեանց ներհակականք , այլ մարդկայինն ամօսյնոյն համահետեօղ , և հպատակ .

Ուստի ասաց ոչ իմ կամ , այսինքն , ոչ մակդկայինն իմ կամ , այլ ամօսյինն , որով էս և դու մի եմք :

Առարկէն հակառակորդք , քս է փոքրագոյն քան զհայր , քանզի ինքն ասաց , հայր իմ մեծ է քան զիս , ապա ուրեմն ոչէ ամ : Պատասխանեմք , քս ըստ որում է մարդ , է փոքրագոյն քան զհայր , նա և քան զհրեշտակս , ականջն ըստ որում է ամ , է վեհագոյն քան զամենայն , և հաւասար հօր , և մի ամ ընդ նմա , ուստի ասէ , էս և հայր իմ մի եմք :

Առարկէն հակառակորդք , ամ է հայր քի և մեր , ոսկ և ասաց ինքն քս , էլ անեմ էս առհայրն իմ և առհայր ձեր , և ամն իմ և ամ ձեր , ապա ուրեմն ոսկ մեք արարածք եմք ,
նոյն

նոյնպէս է ևս քս: Պատասխանեմք, թէ մինչ ասեմք ամ, ունիմք զնկատումն առ ստեղծուածս, և մինչ ասեմք Հայր, ունիմք զնկատումն առ որդիս: Եւ զի կրկին է որդի, մինն է բնական, որն ունի զբնութիւն և զէութիւն Հօր, և ասի Ճշմարիտ որդի: Իսկ միւսն է պատահական, որ ոչ է իբնութիւն Հօր և ասի որդեգրական որդի: Ասեմք ուրեմն առ առարկութիւն, քս ասաց Էլանեմ՝ Էս առ Հայրն իմ, այսինքն առ Հայրն իմ՝ բնութենական, որոյ էմ Էս Ճշմարիտ և իսկական և միաժին որդի: Եւ առ Հայր ձեր, այսինքն առ Հայր ձեր պատահական, որոյ ոչ էք դուք որդիք բնութենականք, այլ իձեռն շնորհաց վերընկալեցեալք յորդեգրութիւն, ուստի և էք բաղումք, և ոչ միաժին: Իսկ մինչ ասաց Էլանեմ Էս առ ամն իմ, խօսեցաւ վս մարդկութե իւրոյ ըստ որում է ստեղծուած, ոպ և մէք: Ըստ այսմ ևս մեկնի Էլանեին և նստիին, զի ամ ոչ Էլանէ և ոչ նստի, որովհետեւ է անեզր, և անուր:

Ահա այս է ով թագաւոր մեծարգոյ Հաւատն քրիստոնէից, որ զմեզ և զբնաւս Հաւատացեալս վերածէ յարքայութիւն երկնից, որպէս խոստացաւ ինքն քս յոյսն ամենեցուն ասեզով, որ Հաւատաց, յիս, տաց նմա զկեանս յաւի-

յաւիտենականս . Էւ զայս սրբազան և միակ
հաւատս համառօտեցին առաքեալքն սք
այսպէս .

Հաւատամ ՚իյմժ հայրն ամենակարօղ,
ստեղծօղն երկնի և երկրի . Էւ ՚ի յս քս որ-
դի նորա միակ տրն մեր , որ յղացեալ էղև
իհօգւոյն սրբոյ , ծնաւ ՚ի Մարիամայ կուսէն ,
չարչարեցաւ ընդ փոնցիոսիւ Պիղատոսիւ ,
խաչեցաւ մեռաւ և թաղեցաւ , էջ ՚ի դժոխս ,
յերբորդում աւուր յարեաւ ՚ի մեռելոյ , ել
յերկինս , նստի ընդաջմէ ան հօր ամենակա-
րօղի , ուստի գալոյ է ՚ի դատել զկենդանիս և
զմեռեալս . Հաւատամ ՚իհօգին սք , ՚իսք կա-
թողիկէ եկեղեցին , ՚իհաղորդութին սրբոյ ,
իթողութին մեղաց , իյարութին մարմնոց ,
և ՚ի կեանն յաւիտենական . Ամէն :

Վ Ա Խ Ճ Ա Ն Գ Ր Գ Ո Յ Ս :

Սխալանք Տալագրողին

Էջ.	Տող.	Սխալ.	Սրբագրեալ.
15.	20.	իւրում	իւրում
29.	9.	որդի	որդի
30.	9.	Մարգարէին	Մարգարէին
112.	23.	դուքս ծնցե	դուքսս ծնցե
142.	5.	ևիբև	ևիբրև
149.	9.	ղէձուս	ղձէուս
	17.	իթգանո. ղաց	իթգանողաց
163.	22.	յկէսգ իշերն	յկէս գիշերն

Առաջաբանութի 3.

Հատոր . 1.

Ճանաչիլութի ւն . 7.

Գոյութի ւն . 10.

Միութի ւն . 12.

Գիտելիք գերբնականք . 14.

Մարդկութի քի . 19.

Աժութի քի . 26.

Մի բնութի կերէք անձինք . 35.

Մի էութի կերէք անձինք . 44.

Առարկութիք և նոցին պատասխանիք . 52.

Պատասխանի երկրորդ . 79.

Հատոր . 2.

Անուն քի . 109.

Օրհնութի իձեռն քի . 111.

Քս է ճշմարիտ իշխան . 120.

Քս է մարգարէ . 123.

Քս է կեցուցիչ . 124.

Քս է քահանայ և տր . 125.

Քս է օրինադիր և թգր . 126.

Որպիսի թգր է քս . 128.

Երբն գալստեանն քի . 135.

Օ

Մայրն

- Մայրն քի և քաղաք նորին . 137.
 Հարկ եր գալն քարոզն և հրաշքն քի . 138.
 Չարչարանք և մահն քի . 141.
 Համանակ մահուն քի . 143.
 Որսիսուծի մահու նորին . 146.
 Իջումն նորին իդ ժոխս . 150.
 Մարմին քի ըն գերեզմանի . 152.
 Ընդ աջմէ հօր բազմի քս . 153.
 Տի է քս բոլորի աշխարհի . 154.
 Յազդէ Դաւթի , իկուսէ ճնաւ քս իբեթ-
 լէհեմ . 155.
 Վաղճան թգրց ևդքսից . քս 158.
 Քս արար զքանչելիս . 159.
 Չարչարեցաւ ևմեռաւ քս . 162.
 Յո քս է իշխան ևդուքս ևթգր . 165.
 Է քս քահանայ ևհովիւ . 170.
 Է ևս մարգարէ քս . 172.
 Օրինագիր նորոյ օրինի քս . 173.
 Վս եր թլխատեցաւ քս . 179.
 Համառօտութի վերագեցելոյ . 181.
 Փրկիչ է քս . 186.
 Տի է քս . 187.
 Ած է քս 189.
 Պատասխանիք առարկութեց . 191.
 Ուսումն և խրատ պատասխանելոյ . 194.
 Առարկութիք ևպատասխանիք . 202.



